

ԱՐԻՍ ԱՐՄԵՆԻ



ԽԻՉԱԽՄԱՆ  
ՈԳԻՆ

ԱՐԻՍ ԱՐՄԵՆԻ

**ԽԻՉԱԽՄԱՆ  
ՈԳԻՆ**

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ  
2010

ՀՏԳ- 325  
ԳՄԴ- 66.3 (2 Հ)  
Ա 931

## Խմբագիր՝ Կոմիտաս ԳԱՆԻԵԼՅԱՆ

### **ԱՐՄԵՆԻ (ԳՐԻԳՈՐՅԱՆ) Արիս**

Ա - 325 Խիզախման ոգին / Ա. ԱՐՄԵՆԻ. Ստեփանակերտ:  
Գիգակ պլյուս, 2010. - 168 էջ:

Արցախյան ազգային ազատագրական շարժման նվիրյալ Ռազմիկ Պետրոսյանի հարուստ կենսագրության որոշակի ժամանակահատվածի (1987-1993) համայնապատկերի վրա գրքում ներկայացված են Շարժման սկզբնական շրջանի առանձին դրվագներ, քիչ կամ բոլորովին չլուսարանված դեպքեր ու դեմքեր:

Ներկայացված է նաև Ռ. Պետրոսյանի մասնակցությունը Արցախյան պատերազմին:

Տպագրվում է Ռ. Պետրոսյանի ծննդյան 70 ամյակի կապակցությամբ:

ՀՏԳ- 325  
ԳՄԴ- 66.3 (2 Հ)

ISBN 978-99941-2-451-0

© Արիս ԱՐՄԵՆԻ, 2010 թ.

© Գիգակ պլյուս, 2010 թ.

*Գիրքը նվիրվում է Արցախի  
ազգային ազատագրական պայքարի  
ամենանվիրյալ գործիչներին,  
ովքեր ջանք ու եռանդ չինայեցին  
հանուն երկրամասի  
վերջնական ազատագրման*



*Սերժ Սարգսյանը պարգևատրում է  
Ռազմիկ Պերրոսյանին:*



*Ռոլես Աղաջանյան, Սերժ Սարգսյան,  
Ռազմիկ Պերրոսյան:*



**ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ  
ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ**

-Մեր դիրքորոշումը հստակ էր, եւ այն մնացել է անփոփոխ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը կայացած փաստ է եւ ենթակա չէ քննարկման:

Մենք բազմիցս կրկնել ենք, որ սալարում ենք դարաբաղյալ հակամարտության՝ բոլոր կողմերի իրավահավասար մասնակցությանը իսպառ կարգավորմանը: Սակայն այլ տեսակետ ունի Ադրբեյջանի քաղաքական ղեկավարությունը, որը մշտապես խոսում է դարաբաղյալ հիմնահարկերը ռազմական եղանակով լուծելու իր չակերտավոր իրավունքի մասին:

Հարեւան երկրի նման քաղաքականությունը չի կարող անարարքեր թողնել մեզ: Ռազմատեւ՝ հայրաբարությունների եւ արեւելյան սերմանման անթույլատրելիության մասին բազմիցս հանդես եւ եկել Հայաստանի եւ Արցախի իշխանությունները: Վերապրելով պատերազմի արհավիրքներն ու կորուստների դառնությունը՝ արցախցին լավ է գիտակցում իսպառության արժեքն ու կարեւորությունը մեր տարածաշրջանի համար: Սակայն դա ամենէն էլ չի նշանակում, թե մենք պարտաւոր չենք արժանի հակահարված տալ հակառակորդի ցանկացած ուրնչգության:



*Արդար պահանջ՝ ոչ մի նստանց...*



*Հիշարանն արդարոց՝ օրհնությանը եղիցի...*

ԳԼՈՒԽ ԱՌ-ԱԶԻՆ

**ԱՐՎԱԾԸ՝ ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ,  
ԱՊՐԱԾԸ՝ ԼԻԱՐԺԵՔ**

1

Արցախյան շարժման անմնացորդ նվիրյալ Ռ-ազմիկ Արշակի ՊԵՏՐՈՍՅԱՆԸ 70 տարեկան է: 70-ամյա բարձունքից ավելի հեշտ են երևում բացթողումներն ու թերացումները: Իսկ արվածը՝ անգնահատելի, ապրածը՝ լիարժեք:

Ռ-ազմիկ Պետրոսյանը ծնվել է 1940թ. նոյեմբերի 7-ին, Գ-անձակ (Կիրովաբադ) քաղաքում: 1957թ. ավարտել է տեղի Խ. Աբովյանի անվան հայկական միջնակարգ դպրոցը, 1960թ.՝ Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը, իսկ 1969թ.՝ Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը:

1961-64թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1964-77թթ. խաղացել է ֆուտբոլի վարպետների թիմերում՝ Նովոռոսիյսկի «Ցեմենտ»-ում, Երևանի «Արարատ»-ում, ապա՝ Ստեփանակերտի «Ղարաբաղ»-ում:

1977թ. «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի ավագ մարզիչն էր: Նույն թվականին թիմը դարձել է Ադրբեջանի չեմպիոն և հանդես եկել ԽՍՀՄ առաջնությունում:

Մարզական-մարզչական գործունեությանը զուգընթաց՝ դասավանդել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանում:



1986թ. նշանակվել է Ստեփանակերտի Ստ. Շահումյանի անվան մարզադաշտի տնօրեն:

1988թ. Արցախյան շարժման ակտիվ մասնակից է: «Կռունկ» կոմիտեի, այնուհետև՝ Տնօրենների խորհրդի նախագահությունների անդամ էր, իսկ Արցախի Ազգային խորհրդի ստեղծման օրից՝ խորհրդի նախագահության անդամ:

1988-90թթ. եղել է Արցախի պաշտպանության շտաբի պետը:

1990թ. բանտարկվել և չորս ամիս պահվել է ԽՍՀՄ բանտերում՝ անօրեն գեներ պահելու մեղադրանքով: Ազատ է արձակվել ներկայացված մեղադրանքները չհաստատվելու կապակցությամբ:

1992թ. նշանակվել է Կենտրոնական պաշտպանական շրջանի շտաբի պետ: Մասնակցել է Արցախի բոլոր շրջաններում ծավալված պաշտպանական և ազատագրական ռազմագործողություններին և տեղային բնույթ ունեցող մարտերին, երկու անգամ վիրավորվել:

1990-95թթ. ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր էր:

Պարգևատրվել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով և «Արիության համար» մեդալով:

Ամուսացած է, ունի երեք զավակ:

Աշխատել է որպես ԼՂՀ Ներքին գործերի փոխնախարար, ունի ներքին ծառայության գնդապետի կոչում:

2

Հայաստանի Գանձակի բանվորական ընտանիքներից մեկում ծնված Ռազմիկ Պետրոսյանի համար ճակատագիրը բազում նախանշումներ էր արել:

Ստեփանակերտում գյուղատնտեսական կրթություն ստացած պատանին, տուրք տալով մարզական բնատուր հակումներին, որոշեց ուսումը շարունակել Երևանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտում, իսկ մինչ այդ էլ ընդգրկված էր ֆուտբոլային վարպետ թիմերում՝ Նովոռոսիյսկում, Երևանում, Ստեփանակերտում:

Թողնելով «Արարատ» թիմը, Ստեփանակերտում արդեն մարզական ու մարզչական լայն ճանաչում գտած Ռ-ազմիկը 1977-ից «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի ավագ մարզիչն էր, ինչի շնորհիվ էլ թիմը նույն տարում Ադրբեջանի հանրապետական առաջնությունում հաղթող ճանաչվեց և համամիութենական մրցասպարեզ դուրս եկավ: Հեշտ է ասել՝ հաղթող ճանաչվեց: Տեսնեիք միայն ադրբեջանցիների արթնացած բնագործ՝ հայազգի ֆուտբոլիստների դեմ խաղալիս:

1986թ. Ստեփանակերտի Ստ. Շահումյանի անվան կենտրոնական մարզադաշտի տնօրեն նշանակված Ռ-ազմիկ Պետրոսյանի համար հետզհետե գործունեության նոր ասպարեզ էր բացվում: Խորհրդային լայնածավալ երկրում հայտարարված Հրապարակայնության ու Բացախոսության պայմաններում հայ-արցախցին վերջապես փորձեց կրկին անգամ ներկայացնել իր սրտի ցավը, բարձրաձայնել վիրավորված արժանապատվության հարցը:

Ռ-ազմիկ Պետրոսյանն առաջիններից մեկն էր, ով ընդգրկվեց ընդհատակյա պայքարում և լայն գործունեություն ծավալեց: Շարժման բացահայտ ծավալման ընթացքում էլ բազում անգամ հարկ եղավ գործել ընդհատակում: Լինելով ԼՂԻՄ խորհրդի 1988-ի փետրվարի 20-ի պատմական նստաշրջանի և ԼՂ կուսմարզկոմի 1988-ի

մարտի 17-ի արտահերթ պլենումի ոգեշնչողներից ու կազմակերպիչներից մեկը, նրան, այնուամենայնիվ, ներքին մի ձայն հուշում էր, որ առանց զենքի փրկություն չի լինի:

Իսկ զենքի նկատմամբ նրա պաշտամունքը դեռևս խորհրդային տարիներից էր գալիս: Մարգային որսորդական ընկերության նախագահ Սերգեյ Սաղյանի հետ ձգտում էր այնպես անել, որ հրացանների նոր ստացվող խմբաքանակի հիմնական մասը բաժին ընկնի հայերին:

Չենքի նկատմամբ ունեցած նրա համոզմունքն ավելի ամրապնդվեց հատկապես սումգայիթյան եղեռնագործությունից հետո: Բայց նախ անհրաժեշտ էր օգնել մահվան ճիրաններից մազապուրծ փախստականներին: Նրանց տեղավորման և օգնության ցուցաբերման հանձնաժողովը, Ռ. Պետրոսյանի ղեկավարությամբ, անում էր հնարավոր ամեն ինչ՝ քաղաքում ու մերձակա բնակավայրերում առկա ազատ բնակարաններում նրանց տեղավորելու, սննդով ու կենցաղային անհրաժեշտության պարագաներով ապահովելու առումով: Եվ՝ ոչ միայն: Բեռնատար մեքենաներ էին ուղարկվում Սումգայիթ՝ վտանգի մեջ հայտնված հայերին ու նրանց ունեցվածքը (հնարավոր սահմաններում) Ստեփանակերտ տեղափոխելու համար:

«Միայն՝ զենքով» համոզմունքը սակայն՝ շարժման առաջին իսկ օրվանից ուղեկցեց Ռ. Պետրոսյանին: Նա նաև համախոհներին փոխանցեց այդ զգացումը և ընդհատակյա լայն գործունեություն ծավալեց զենք ու զինամթերք հայթայթելու ու դրանք ինքնապաշտպանական նորաստեղծ ջոկատներին փոխանցելու առումով:

Նրա այդ ջերմ զինապաշտությունը նաև սաֆոնովապոլյանիչկոյական խաժամուժը նկատեց և ստեփանակերտցիներին հասցեագրված հակահայկական թռուցիկ-

ներից մեկում Ռ. Պետրոսյանի մասին հենց այդպես էլ գրվեց՝ «զինված պայքարից բացի այլ ճանապարհ չի տեսնում դարաբաղյան հարցի լուծման համար»: Ոչ ավել, ոչ պակաս:

Չենքը՝ զենք, բայց որ այդ տարիներին կարևոր գործոն էր մարտավարական ձիրք ու կարողություն ունենալը՝ դա փաստ է, նաև այդ ձիրքն ու կարողությունն օգտագործել կարողանալն էր անչափ կարևոր: Ռ. Պետրոսյանն իր անելիքները միշտ էլ ծանրութեթև էր անում, ստուգում բուրյոր հանգամանքները և հետո միայն գործում:

Կարևորում էր հատկապես հոգեբանական գործոնը յուրայինների մոտ, նաև՝ հակառակորդի ճամբարում:

### 3

Երևանից զենք էր ստացվել գնացքով՝ հանքային ջրերի ու դատարկ շշերի անվան տակ: Վագոնը կանգնեցրել էին հարմար դիրքում, բայց ինչպե՞ս տեղափոխել զենքը, որ չնկատվի ու չառգրավվի, երբ կայարանը շրջապատված էր զինվորական պահակախմբերով, և ամենուր պահակակետեր էին տեղադրված: Ռ. Պետրոսյանը Ռուդիկ Ազարյանի հետ «ՌԻԱԶ» մեքենայով եկավ երկաթուղային կայարան: Մի քանի անգամ ելումուտ արին, պահակային ռուս զինվորներին հյուրասիրեցին ծխախոտով, շշերով բարձված բեռնատարն անցկացրին ստուգել տալուց հետո, անընդհատ ակնարկեցին, որ վախենում են չհասցնեն բեռնաթափումն իրականացնել մինչև երեկո, իսկ օրն ուր որ է՝ կերեկոյանա: Մտերմական հարաբերությունները ստեղծված էին: Մեքենաներն արդեն զենքով էին բարձել ու քողարկել շշերով լցված արկղերով: Պահա-

կայինները կրկին ծխախոտով հյուրասիրվեցին, հանքա-  
յին ջրով, այնքան, որ այլևս անհարմար էին զգում ստու-  
գել ուղեբեռը: Այդպես էլ արվեց, զենքը մնան նախածեռ-  
նողականության շնորհիվ անվնաս դուրս բերվեց կայա-  
րանից: Բայց առջևում էլի պահակակետեր կային («Մա-  
գե կամուրջի» մոտ, «Չառին բաղ» տեղամասի հարևա-  
նությամբ և այլն). ի՞նչ անել: Ստիպված գետանցումն  
իրականացրին Ռոլես Աղաջանյանի ճանշինհիմնարկի  
մոտով և ուղղվեցին դեպի Դաշուշեն (Քարաշեն), այնտե-  
ղից էլ՝ Շոշ ու Սղնախ:

Բեռնատար մեքենաները ավտոդպրոցի տնօրեն Չար-  
մայր Հարությունյանն էր տրամադրել՝ համարձակ ու հայ-  
րենասեր մի անձնավորություն (ինչպես Ռ. Պետրոսյանն  
է բնութագրում): Քաջ ու համարձակ էին նաև վարորդնե-  
րը՝ Երեմը, Ռուբիկը, մյուսները՝ տոգորված ջերմ հայրե-  
նասիրությամբ:

#### 4

Բոլոր ջոկատների հրամանատարները կարողացան  
գալ և իրենց բաժին զենքը ստանալ, բացի Բերդաձորից,  
որովհետև գյուղի ճանապարհն անցնում էր Շուշիի մո-  
տով և վերահսկվում էր օմնակականներից ու ԽՍՀՄ ՆԳՆ  
Ներքին գորքերի զինծառայողներից կազմված պահա-  
կախմբերի կողմից: Որոշվեց վտանգված Բերդաձորին  
զենք ու զինամթերք հասցնել Քիրսով: Վաղոն նախօրոք  
զգուշացրել էր, որ այդ վայրերում աղբբեջանցի շատ զին-  
յալներ կան: Ռուդիկ Ազարյանի ծառայողական «ՌԲԱԶ»  
մակնիշի մեքենան, որքան հնարավոր էր, բարձրացավ  
Քիրս, այնուհետև ճանապարհը պետք է ոտքով շարունա-

կեին: Հարկ էր նաև ստուգել աղբբեջանցիների համար-  
ձակությունը, հոգեբանական ազդեցության աստիճանը:

Վերցնելով զենքերը՝ տղաները սար բարձրացան, ձգ-  
տելով ավելի տեսանելի լինել աղբբեջանցիներին: Հե-  
տաքրքիր էր իմանալ, թե ինչպես կընդունեին նրանք  
իրենց այդ հանդուգն քայլը: Եվ իրոք որ՝ աղբբեջանցի-  
ներն իսկույն, մոտ 15-20 ձիավոր, շարժվեցին դեպի մե-  
րոնք:

Համապատասխան դիրքում տեղադրելով ականանե-  
տը՝ Ռ. Պետրոսյանը կրակեց նրանց ուղղությամբ, ու թեև  
ականը շատ հեռու էր նետվել, աղբբեջանցիներն, այնուա-  
մենայնիվ, կանգ առան: Երկրորդ ականն ընկավ նրան-  
ցից մոտ 30-40 մետր հեռավորության վրա: Սկսեցին  
զգուշանալ, բայց տեսնելով, որ երկուսով են՝ որոշեցին  
ամեն զնով շրջապատել տղաներին: Ռ. Ազարյանը պետք  
է կարաբիներից կրակ արձակել ձախից: Ռ. Պետրոսյանը  
երկու ինքնաշեն նռնակ վերցնելով և մոտ 100 մետր մոտե-  
նալով նրանց՝ նետեց նռնակներից մեկը, որը պայթելով  
աղբբեջանցիներից բավականին հեռավորության վրա,  
բնականաբար, չէր կարող վնասել ոչ մեկին: Բայց պայ-  
թյունն այնպիսի արձագանք տվեց սարերում՝ ասես մի հս-  
կա հրթիռ էր պայթեցվել: Աղբբեջանցիները ոչ կրակում  
էին, ոչ էլ գոնե գլուխներն էին հանում թաքստոցից, իսկ  
երկրորդ նռնակի պայթյունից հետո նրանք գլուխները բռ-  
նած փախան՝ եկած ուղղությամբ:

Մի բան արդեն պարզ դարձավ՝ լավ զինված լինելու  
դեպքում այդ վայրերով անվնաս կարելի էր Բերդաձոր  
հասնել: Եվ այդ հնարավորությունը հետագայում շատ  
անգամ օգտագործվեց:

Աղբբեջանցիներն այնքան էին հմտացել անասնագործության մեջ, որ ավարառության էին գնում նույնիսկ ուղղաթիռներով: Օղից ճշտում էին թիրախն ու շտապ իջնում այդ ուղղությամբ: Ռ. Պետրոսյանն իր տղաներով վրան էր տեղադրել Քիրս սարի տակ գտնվող անտառում, քողարկել: 30 տեղանոց վրանը լիովին բավարարում էր հերթափոխվող ջոկատներին, որոնց հանձնարարված էր պաշտպանել գյուղացիների ունեցվածքը, իսկ որսորդական հրացաններով զինված հովիվներին հանձնարարված էր իզուր տեղը չկրակել, այլ վտանգի դեպքում ազդանշան տալ պահակություն իրականացնող ջոկատայիններին՝ երկփողանիից մեկ անգամ զույգ կրակոց արձակելով:

Ազդանշանը չուշացավ:

Պահը հանգիստ էր՝ թվացյալ: Տղաները հրացաններն էին մաքրում, պարկուճները լիցքավորում, երբ ուղղաթիռի շարժիչի ձայն լսվեց: Ուղղաթիռը, պտույտներ գործելով, գնաց դեպի Քիրս սարի կողմը: Մի քանի րոպե անց ստանալով ազդանշանը՝ տղաները դեպքի վայր շտապեցին՝ գնդացրով և սկանանետով:

Ջինված չորս աղբբեջանցիներ, զինվորական համագագետով, ուզում էին կովերը դեպի աղբբեջանաբնակ Լիսագոր քշել: Ականանետն արդեն պատրաստ էր կրակի և սկսեց գործել: Ականները պայթում էին անասուններից առաջ և աղմուկ-դղրդյունից նրանք խուճապահար ետ էին վազում: Աղբբեջանցիները զգալով, որ այլևս կովերը քշելու հնարավորություն չկա՝ ստիպված պահվեցին քարերի ետևում և սկսեցին անկանոն կրակ բացել մեր տղաների ուղղությամբ: Պատասխան կրակոցները չէին ուշ-

անում: Ավելին՝ հետզհետե ավելի գերիշխող էին դառնում: Խառնաշփոթի մեջ նրանք չէին նկատել, որ աջ կողմից ևս ձիավորներ են մոտենում իրենց: Սկսեց գործել նաև գնդացիորդ: Աղբրեջանցիները ստիպված էին ճողոպրել, բայց... երկուսով: Քիչ անց մեր տղաները բերեցին սպանված աղբրեջանցիների երկու ինքնաձիգները:

Տղաներն «ամփոփեցին» հերթական մարտի արդյունքները՝ սպանվեց երկու աղբրեջանցի, վիրավորվեց մեկ... կով:

Սպանված աղբրեջանցիները մնացին սարում, իսկ վիրավոր կովն անմիջապես մորթվեց ու տեղակայման վայր հասցվեց: (Մսից մի քիչ վերցրին տղաներին կերակրելու համար, իսկ մնացածն ուղարկվեց Ավետարանոց (Չանախչի), որի բնակիչները տղաներին շատ են սպահովել սննդամթերքով):

## 6

Արցախյան ազգային ազատագրական շարժման ընթացքում բարդ իրադրության մեջ հայտնվեցին աղբրեջանական քաղաքներում ու շրջաններում սպրոդ հայազգի քաղաքացիները: Մումզայիթից հետո պարզ դարձավ, որ միութենական կենտրոնը ոչինչ չի ձեռնարկի հանրապետությունում կարգ ու կանոնի վերահաստատման ուղղությամբ: Աղբրեջանական մոլեռանդությունն ամեն տեսակ վերահսկողությունից դուրս էր արդեն:

1989-ի վերջերին լուր ստացվեց, որ բարդ կացության մեջ է հայտնվել գանձակահայությունը: Քաղաքի հայազգի բնակիչները պարփակվել էին հայկական թաղամասում, չէին կարողանում աշխատանքի գնալ, չէին սպասարկվում հացով ու այլ սննդամթերքով:

Ռ. Պետրոսյանն իսկույն գնաց Ստեփանակերտի



քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Յուրի Ավագիմյանի մոտ: Նա անմիջապես համապատասխան միջոցներ ձեռնարկեց: Մարզխորհրդի գործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանը ևս հավանություն տվեց Ռ. Պետրոսյանի՝ գանձակահայությանն անհապաղ պարենային օգնություն ցուցաբերելու ծրագրին: Ռ. Պետրոսյանը լավ գիտեր Շահումյանով Գանձակ գնացող ճանապարհը և հանձն առավ այդ գործը գլուխ բերել՝ ինչ գնով էլ լինի: Բայց նա գիտեր մի պարզ ճշմարտություն՝ նախօրոք պետք է ստուգվի անցնելիք ողջ ճանապարհը: Այդ գործողությունն Արցախի պաշտպանության շտաբի պետ Ռ. Պետրոսյանն իրակացրեց իր տեղակալ Ռուբեն Աղաջանյանի և շտաբի անդամ, ԼՂ բնության պահպանության կոմիտեի նախագահ Գարիկ Գրիգորյանի հետ: Այնուհետև «ԿամԱԶ» մակնիշի երկու բեռնատար ավտոմեքենաներով Ռազմիկ Պետրոսյանը մթերքը հասցրեց Գանձակ: Եվ դա, իրոք, խիզախում էր, անօրինակ քաջություն:

Որոշ ժամանակ անց Ռ. Պետրոսյանը կրկին երկու բեռնատարով սննդամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ տարավ Գանձակ, իսկ, այնուհետև, վերահաս վտանգից խուսափելու անհրաժեշտությունից ելնելով, Ռ. Պետրոսյանին փոխարինեցին և տարբեր ժամանակահատվածներում Գանձակ մեկնեցին փոխգնդապետ Կոլյա Բաբայանը՝ քաղաքացիական պաշտպանության շտաբի պետի տեղակալը, և Գրիշա Աֆանասյանը:

Ռազմիկ Պետրոսյանի բարձր հեղինակության և շարժման նվիրյալ անշահախնդիր առաջամարտիկ լինելու մասին պատմող շատ դրվագապատումներ կան: Գաղտնիք չէ, որ Հայաստանից ժամանած Շարժման ակտիվիստներն ու ղեկավարները չէին կարողանում մեկնել Ստեփանակերտից, հսկողության խիստ ռեժիմի պատճառով:

ռով: Եվ միայն Ռ-ազմիկ Պետրոսյանը կարող էր նրանց մեկնումը կազմակերպել: Նման խոստովանություն մի ժամանակ նույնիսկ Ռ-ոբերտ Քոչարյանն էր անում:



*Վազգեն Սարգսյան*

1989-ին Ստեփանակերտ ժամանած Լևոն Տեր-Պետրոսյանի, Բաբկեն Արաքքյանի, Վազգեն Սարգսյանի ու Վանո Սիրադեղյանի մեկնումը Ստեփանակերտի օդանավակայանից, իրոք, անհնարին դարձավ, որովհետև նրանց անուններն արդեն հայտնի էին ՊԱԿ-ի գործակալներին ու զինվորական պարետատանը: Մինչ Լևոն Տեր-Պետրոսյանն ու Ռ-ոբերտ Քոչարյանը մտածում էին, թե ինչ էլք կարելի է գտնել Ստեփանակերտի օդանավակայանից անփորձանք օդ քարձրանալու համար, Վ. Սարգսյանն անառարկելի տոնով ասաց, որ գնում է Ռ-ազմիկի մոտ, նա մի բան անպայման կանի:

Թեմայի քննարկումը երեկոյան Ռ. Պետրոսյանի մոտ շարունակվեց: Բոլորի հույսը նա էր: Երկար մտածելու հարկ չկար: Անմիջապես զանգեց օդանավակայանի պարետ Անատոլի Մամառահիմովին: Մեկ ժամից ազգությամբ տաջիկ պարետն, իրոք, եկավ, և իսկույն էլ համաձայնություն ձեռք բերվեց: Ստեփանակերտի օդանավակայանից խումբն անվնաս ճանապարհելու դիմաց պարետը ստացավ 10 լիտր կոնյակ և որոշակի կլորիկ գումար:

Հայոց համազգային շարժման առաջնորդների Արցախ ժամանելը կարևոր նշանակություն ուներ հատկապես Շարժումը չպառակտվելու առումով: Ռ. Պետրոսյա-

նին առանձնապես հուզում էր այն միտքը, թե ինչու է Լևոն Տեր-Պետրոսյանը բանակցություններ վարում միայն Ռոբերտ Քոչարյանի հետ, երբ Արցախում Շարժման առաջնորդի համաժողովրդական ճանաչում ունեն Արկաղի Մանուչարովը:

Մեկ տասնամյակ հետո միայն պարզ կդառնար, որ Լևոն Տեր-Պետրոսյանն ու իր համախոհները տարբեր ուղղություններով էին գնում, թեև միակամ ու միակարծիք էին երևում:

Ամեն դեպքում միախթարականն այն էր, որ բաժանվելով խմբից, Վազգեն Սարգսյանը եկավ Ռ. Պետրոսյանի մոտ և հետաքրքրվեց Արցախում տիրող ինքնապաշտպանական կառույցների պաշտպանունակության հարցերով, եղավ տեղերում, ծանոթացավ տղաների հետ, խոստացավ վերադառնալով Երևան՝ օգնել զենքի առումով:



*Պարույր Հաչիկյան*

**Պարույր Հաչիկյանը** Շարժման անմնացորդ նվիրյալ էր, իսկական դեմոկրատ, ազգային անկախության ջերմ ջատագովներից մեկը: Սիրում է արդարությունը, իր հայրենիքը: Իսկական պետականությունը համարում է անկախ դեմոկրատական երկրի առկայությունը: Արցախը

շատ է սիրում, և երազում է ստեղծել անկախ դեմոկրատական պետություն, որը կզերազանցի արևմտյան դեմոկրատական երկրներին:



*Վազգեն Մանուկյան*

**Վազգեն Մանուկյանն** այն ազգային գաղափարակիր նվիրյալներից մեկն է, ով երբեք և ոչ մի պարագայում անձնական շահ չի հետապնդել: Իր ազգանվեր գործունեությունը սկսել էր դեռևս Մոսկվայում ուսանելու տարիներին, ինչի համար էլ ստիպված էր կիսատ թողնել ուսումը Մոսկվայում ու վերադառնալ Երևան:

Լինելով «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, հետո՝ համակարգող, նա իր բոլոր հնարավորություններն ի մի բերեց արցախահայության ազատաբաղձ ձգտումներն իրականություն դարձնելու համար:

Հետագայում ևս, զբաղեցնելով մի շարք պատասխանատու պաշտոններ, նա միշտ հավատարիմ մնաց իր համոզմունքներին, միշտ աջակցեց Արցախի հիմնախնդրի լուծման գործընթացին:

7

**Ռազմիկ Պետրոսյանն**, օգտագործվող բազում հնարքների ու խուսանավումների հանգույն, այնուամենայնիվ, հայտնվեց «իրավապահ մարմինների» ձեռքում, ապօրինի զենք ունենալու մեղադրանքով և տարբեր ժամանակահատվածներում պահվեց



*Ռազմիկ Պետրոսյան*

Կրասնոդարի, Գոնի Ռոստովի, Նովոչերկասկի բանտերում:

Նախ՝ Կրասնոդարի, իսկ այնուհետև՝ Նովոչերկասկի բանտերում Ռ. Պետրոսյանը բազում հնարքների էր դիմում: Որ անհրաժեշտ էր ժխտել բոլոր մեղադրանքները՝ հասկանալի էր, բայց պակաս կարևոր չէր նաև դրանց լիովին հիմնավորումը, որպեսզի կասկածի նշույլ անգամ չմնար: Փաստերը, թերևս, խոսում էին. նրանք իր գրասեղանի վրայից առգրավել էին նոնակ, պայթուցիկներ, հրացանի փամփուշտներ, ռադիոսարք, բայց հիմնավորել ու ապացուցել, որ դրանք պատկանում էին մեղադրյալին՝ չհաջողվեց, որովհետև Ռ. Պետրոսյանն անընդհատ պնդում էր, որ դրանք դպրոցականներն էին գտել մարգարաշտի տարածքում ու հանձնել իրեն (դպրոցականները գործել էին ճիշտ ու նպատակային, պարզապես՝ հետաձգվել էր դրանք իրավապահներին հանձնելու գործընթացը): Այդքան բան:

Ռ-ազմիկ Պետրոսյանի եղբայրը՝ Ջարմիրկը և Բեգլար Գուլյանը Ստեփանակերտի թիվ 3 դպրոցում պայմանավորվել էին երկու դպրոցականի հետ (Արմեն Գուլյան, Մարատ Հակոբյան), ովքեր պետք է հանձն առնեին, որ իրենք են գտել դրանք ու մարգարաշտի տնօրենին հանձնել: Այդ հնարքը կարևոր դեր խաղաց մեղադրանքից ազատվելու համար:

Կարևոր էր նաև բանտում քննիչների կողմից գործադրված բազում սադրանքների ճիշտ կռահումն ու դրանցից ճարպկորեն խուսանավումը: Բանտում գտնվելու ժամանակ նա փորձվեց բազում անգամ՝ սեռական շեղումներ ունեցող կամ ոջլոտ բանտարկյալների խցերում պահվելով, նաև լաք ազգությամբ ինչ-որ բանտարկյալ,

որի հետ ստիպված էր 10 օր նույն բանտախցում անցկացնել, ինչ-որ մեկի թելադրանքով զենք կառաջարկի, մյուսը՝ ազգությամբ հայ, նույնպես խոսք կբացի զենքերի մասին, կհետաքրքրվի, թե Հայաստանից ով է զենք բերում Ղարաբաղ, նաև կառաջարկի փախուստ կազմակերպողների խմբին միանալ, կրկին՝ գրություն կստանա Ստեփանակերտում պահված զենքերի վերաբերյալ. «Մենք դարաբաղցիներ ենք, մեզ արդեն բաց են թողնում, եթե թաքցրած զենքերի տեղը գիտես՝ ասա, գնանք հուսալի վայրում թաքցնենք» և այլն: Ռ. Պետրոսյանը շատ լավ հասկանում էր, որ այս ամենը սադրանք է՝ կազմակերպված նախաքննչական մարմինների կողմից և զգոն ու զգաստ էր՝ ամեն հարցումին պատասխանում էր կոնկրետ ու սառնասրտորեն:

Բանտում ենթարկվելով ծեծի ու կտտանքների՝ նա կարողացավ դիմանալ իր ֆիզիկական բարձր պատրաստվածության շնորհիվ: Բայց «բանտային գործի հմուտ գիտակներն» ունեին մի այլ, թերևս ներգործման ավելի կարևոր մեթոդ՝ ֆիզիկական հաշվեհարդարը, և այդ նպատակով էլ բռնցքամարտիկ ադրբեջանցու բանտախուցը մտցվեց, սակայն զգալով դիմացինի ֆիզիկական կարողությունները՝ ադրբեջանցին վերջին պահին հրաժարվեց ախտյանի իր դերից:

Երկարամյա բանտարկությունից խուսափելու կարևոր գործոններից էր նաև հիվանդության վարկածը: Ծիշտ է, Ռ. Պետրոսյանը բանտում ստամոքսի հետ կապված հիվանդություն ստացավ, բայց դա չէր կարող ազդել հետաքննության վրա: Ռ-ազմիկը երիկամային «լուրջ» հիվանդություն ուներ և ձերբակալումից առաջ էլ համապատասխան բուժումներ էր ստանում: Այդ առումով Ջար-

միկ Պետրոսյանն Էդուարդ Դուկասյանի հետ զգալի ձեռնարկումներ իրականացրեց, և ցանկալի արդյունքը գրանցվեց:

Չկարողանալով ոչ մի մեղադրանք բարդել Ռ-ազմիկ Պետրոսյանի վրա, ՊԱԿ-ը հրաժարվեց նրա գործից և նրան ստիպված էին վերադարձնել Ստեփանակերտ, ուր ևս Ռ. Պետրոսյանն անընդհատ դժգոհում էր առողջական վիճակից (երիկամային սուր ցավերը հանգիստ չէին տալիս):

Ստուգումներից պարզվեց, որ, իրոք, նա մինչև ձերբակալումն էլ, մի տարվա ընթացքում համապատասխան բուժումներ էր ստանում: Հետին թվով ստեղծված բժշկական փաստաթղթերը կարողացան հաստատել դա:

Հիվանդության առկայությունը հաստատվեց նաև այլ բժիշկների կողմից: «Շտապ օգնության» կայանի բժիշկ Սաշա Գրիգորյանը ևս նույն ախտորոշումը գրանցեց, Էդ. Դուկասյանի պես: Չբավարարվելով այդ ամենով, իրավապահ մարմինները զինվորական բժիշկներ հրավիրեցին նաև Գանձակից (Կիրովաբադից), որոնց հետազոտման արդյունքում ևս պարզվեց նույնը: Այդքանից հետո միայն իրավապահները ստիպված էին տեղի տալ և անսացին Ռ. Պետրոսյանին հիվանդանոց տեղափոխելու և անհապաղ վիրահատելու՝ փաստաբանի համառ պահանջին:

Տեղափոխվելով հիվանդանոց՝ նոր պահանջ ներկայացվեց իրավապահներին՝ Ստեփանակերտում, տեխնիկական պատճառներով, նման վիրահատություն իրականացնել բոլորովին անհնար է, ուստի պահանջվեց Ռ. Պետրոսյանին տեղափոխել Երևան:

Երևանում նա արդեն լիովին ազատ էր հետապնդում-

ներից: Ավելին, Արթիկ քաղաքից ընտրվելով ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր՝ նա մտավ քաղաքական դաշտ:

Բացվեցին պայքարի նոր հեռանկարներ, գործելու ավելի լայն հնարավորություններ տրամադրվեցին նրան:

...Իսկ պատերազմի ուրվականն օր-օրի մոտենում էր: Ռազմիկ Պետրոսյանն զգում էր դա և պատրաստվում՝ պատգամավորական գործունեությանը զուգահեռ, մինչև այն պահը, երբ սպասելն այլևս անհնար ու անընդունելի էր նրա համար, և եկավ՝ վերամիանալու արցախական կտրիճների ազատարար երթին:





*Ռազմիկ Պերրոսյանը  
Սոս Սարգսյանի հետ*



*Ռազմիկ Պերրոսյանը, Ռաշիդ Պերրոսյանը եւ Բակո Սահակյանը  
Հաղթանակի փոնի և Շուշիի  
ազատագրման օրվա առթիվ  
ժաղիկներ են դնում ԼՂՀ Ոստիկա-  
նության Արցախյան ազատա-  
մարտում զոհված աշխատակիցների  
հիշարակին կանգնեցված հուշ-  
արձան-խաչքարի պարվանդանին:*



*Արևադի Մանուչարով, Վաչագան  
Գրիգորյան, Չորի Բալայան,  
Մեմյոն Բաբայան և ուրիշներ:*



*Արևադի Մանուչարով,  
Ռազմիկ Պերրոսյան,  
Ռոյես Աղաջանյան, Ռազմիկ  
Դանիելյան, Համլետ Գրիգորյան,  
Էդուարդ Ղուկասյան:*



*Ռազմիկ Պերրոսյանը,  
Էրենսոթ Հայրապետյանը,  
Մաքսիմ Միրզոյանը,  
Սերգեյ Դավթյանը,  
Ռաֆիկ Գաբրիելյանը և  
Էդուարդ Ղուկասյանը՝  
ԼՂՀ կազմավորման  
հերթական փարեղարձին  
նվիրված երեկոյին:*

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԱՆԵԼԻՔԸ՝ ՊԱՐԶՈՐՈՇ, ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՎՍՏԱՀ

1

Արցախյան ազգային ազատագրական շարժումը խառնեց Ռազմիկ Պետրոսյանի բոլոր խաղաքարտերը, մոռանալ տվեց անգամ ֆուտբոլը, առանց որի՝ անվանի մարզիկը չէր էլ պատկերացնի իր հետագա կյանքը: Բայց երբ զոհասեղանին դրված էր ժողովրդի ճակատագիրը, նա մոռացավ անձնականի մասին և բոլորովին տրվեց արցախահայության արդարացի պահանջատիրության իրականացման գործընթացին: Կանգնած լինելով շարժման ակունքներում, գործուն մասնակցություն ունեցավ ԼՂԻՄ խորհրդի 1988-ի փետրվարի 20-ի պատմական նստաշրջանի ու ԼՂ կուսմարզկոմի 1988-ի մարտի 17-ի հայտնի պլենումի կազմակերպման գործընթացներին, ընդգրկվեց «Կռունկ» կոմիտեի նախագահության կազմում, գլխավորեց 1988-ի մարտի վերջերին «Քաղաքացիական պաշտպանության շտաբի» անվան տակ ստեղծված Արցախի պաշտպանության շտաբը, ընդհատակյա պայմաններում բոլոր ջանքերն ու միջոցները ներդրեց ինչպես ինքնապաշտպանության առաջին ջոկատների կազմավորման, այնպես էլ՝ այդ ջոկատները զինելու և զինամթերքով ապահովելու գործին:

Բայց աննկատ չմնաց այդ ամենը. ԽՍՀՄ ՆԳՆ Ներ-

քին գորքերի՝ մեր երկրամասում տեղակայված ստորաբաժանումների զինծառայողների և աղբրեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատայինների կողմից 1990-ի հունվարի 18-ին ձերբակալվեց և պահվեց Կրասնոդարի ու Նովոչերկասկի բանտերում: Բայց ոչինչ չէր կարող նրան ընկճել, որովհետև նրա գործելակերպը վստահ էր, անելիքը՝ պարզորոշ:

Որքան հեռանում ենք Արցախյան շարժման 1988-ի համաժողովրդական պոռթկման առաջին ամիսների իրադարձություններից, այնքան ավելի տեսանելի են դառնում այդ օրերի եռքը, ընդվզումը, հաջողություններն ու հիասթափությունները: Բայց հաճախ տարակուսանք են առաջացնում որոշ «տարեգիրների» կողմից, անտեղյակության հետևանքով, կամ ինչ-ինչ այլ պատճառներով, անձերին ու կազմակերպություններին առնչվող առանձին փաստերի հարկի-անհարկի աղավաղումները, որոնք աղճատում են տվյալ ժամանակաշրջանի իրական պատկերը:

Արցախյան շարժման ակունքներում կանգնած նվիրյալը, ով քաջատեղյակ է տվյալ ժամանակաշրջանի բոլոր անցքերին ու իրադարձություններին, երբեք չի կարող անտարբեր լինել նման երևույթների նկատմամբ:

## 2

1960-ականներին անթեղված կայծը սկսեց բոցավառվել: Արթնացավ արցախցիների հույսը, որ, թվում էր, հավերժական քնով էր քնել: ԹՎՆ՝ում էր, թշնամիներին՝ գուցե, բայց արցախցի հայը երբեք իրեն չի զգացել Հայաստանից բաժան:

Եվ, ահա, բացախոսության ու հրապարակայնության պայմաններ ընձեռած վերակառուցումը կրկին հուսավառեց մարդկանց՝ պատմական սխալն ուղղելու առումով: Սկսվել էր անխափան մի գործընթաց՝ ստորագրահավար և խորհրդային իշխանության կենտրոնական մարմիններին՝ 1813 թվականին Արցախի պատմական Գյուլիստան գյուղում կնքված պայմանագրով Ռուսաստանին միացած, բայց չգիտես ինչու և ինչպես՝ 1921-ին ձեռքի թեթև շարժումով Ադրբեջան հորջորջվող նորաթուխ պետության տիրապետության տակ հայտնված Արցախի՝ Մայր Հայաստանին վերամիավորվելու արդարացի պահանջ ու խնդրանք պարունակող նամակների հեղեղ: Այդ օրերին հավատում էինք (միամտաբա՞ր, թե՞ մեր ժողովրդին հատուկ հավատով) Մ.Գորբաչովի վերակառուցման ծրագրի, կոմունիստական կուսակցության ու լենինյան «վեհ գաղափարների», խորհրդային երկրի անպարտելի, անսասան կեցվածքի գաղափարական ու գործնական անբեկանելիությանը: Վստահ էինք, որ պատմական արդարությունը կվերականգնվի, ու ժողովուրդն ազատ շունչ կքաշի:

Գուցե թե՛ հենց այդպես էլ ծնունդ առավ «Լենին-Պարտիա-Գորբաչով» կարգախոսը, որը հրապարակ էր հանում տասնյակ հազարավոր մարդկանց: Այն մեզ խանդավառում էր, սակայն գնալով ավելի էր խորանում անդունդը երկու հարևան ժողովուրդների միջև: Ավելին՝ սերմանվող թշնամանքը առճակատում, արյունահեղություն էր սկսնկալում:

1988 թ. փետրվարի 8-17-ին Մոսկվայում էր գտնվում արցախահայության՝ 60 հազար ստորագրություններով դիմում-բողոքները կենտրոն հասցրած հերթական պատ-

վիրակությունը, իսկ Ստեփանակերտ էին ժամանել Բաքվի հերթական էմիսարները՝ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար Վ.Կոնովալովը, Կենտկոմի բաժնի վարիչ Մ.Ասադովը, հանրապետական ՊԱԿ-ի նախագահի տեղակալ Ի.Ամրանովը և ուրիշներ: Նրանց առաքելությունը ոչ միայն ձախողվեց, ավելին՝ արժանի հակահարված ստացավ՝ կոնկրետ հիմնավորումներով:

«Իսկ ես այնքան էի ուզում, որ մեր տքնաջան աշխատանքի «պտուղը» վերջապես հասունանար, – իր խոհերն է կիսում Ռ.Պետրոսյանը: – Այդ իսկ պատճառով՝ անտեսելով ամեն վտանգ, նիստը, որի ընթացքում ինձ ձայն չտրվեց, փակ հայտարարվելուց հետո բարձրացա միտինգավորների ինքնաշեն բեմը»:

Անմիջապես էլ՝ նրան երկու կողմից թևանցուկ շղթայեցին ՊԱԿ-ի մարզային բաժնի և ՆԳ մարզային վարչության պետերը: Ռ-ազմիկը վայրկյան անգամ չտատանվեց, շատ քաղաքավարի ձևով խնդրեց թողնել իրեն: «Ես ռինգ չեմ մտնում, – ասաց, – ասելիք ունեմ և պիտի՛ ասեմ»: Եվ՝ ասաց: «Նախագահը վճռել է, որ Արցախը Ադրբեջանի կազմից երբեք դուրս չի՞ գալու», – հարցրեց, և ընկրկեցին նրանք՝ ժողովրդյան ձայնը լռեցնել կամեցողները:

Ռ.Պետրոսյանը ժողովրդական այդ բարձր ամբիոնից առաջարկեց մարզային ակտիվի անունից հեռագիր ուղարկել Մոսկվա, և քվեարկության դրված առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Աննախադեպ ժողովրդավարություն և հանդգնություն՝ Խորհրդային Միության չափանիշների նմանօրինակ գանցառում, առաջին անգամ՝ խորհրդային տիրապետության ողջ ընթացքում: Բոլորը քվեարկեցին միաձայն, բաց քվեարկությամբ, և՛ լիահույս, որ Մոսկվայից եկող հանձնաժո-

ղովն, անշուշտ, արդարացիորեն կլուծի մեր հարցը, որ գորոյան հանգույցի պես խճճվել ու հյուծում էր բոլորին:

Այդպիսի ոգևորություն էր տիրում նաև համաշխարհային ճանաչում ունեցող տնտեսագետ Աբել Ադանբեգյանի հարցազրույցը ֆրանսիական հանրահայտ «Յունանիտե» պարբերականում տպագրվելուց հետո, ուր նա ո՛չ միայն առաջարկում, այլև հիմնավորում էր Արցախի ու Հայաստանի տնտեսական միավորման արդյունավետությունը, որը նաև ենթադրում էր պատմական-իրավական, քարոյական արդարության վերականգնում:

ԼՂԻՄ խորհրդի արտահերթ նստաշրջանի հրավիրման նախապատրաստական աշխատանքների ընթացքում Ռ-ազմիկ Պետրոսյանն ու իր համախոհները լուրջ կարևորություն էին տալիս հատկապես պատասխանատու կուսաշխատողներին ներգրավելու կամ, նվազագույնը, նրանցից չխանգարելու համաձայնություն կորզելու կարևոր խնդրին: Նստաշրջանն անցկացնելուց առաջ անհրաժեշտ էր նաև մարզգործկոմի խորհրդի նախագահի առաջին տեղակալ Շմավոն Պետրոսյանի և Մարտակերտի (տարածքային առումով՝ մարզի ամենախոշոր շրջանի) կուսըջկոմի առաջին քարտուղար Վահան Գարրիելյանի տրամադրվածությունը շոշափելը:

Վաչագան Գրիգորյանն ու Արկաղի Մանուչարովը Ռ-ազմիկ Պետրոսյանին հանձնարարեցին գլուխ բերել այդ գործը: Շմավոն Պետրոսյանը դեռևս Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար եղած ժամանակներից ֆուտբոլի ջերմ երկրպագու էր: Ռ-ազմիկը նրա հետ ունեցած շփումներից հասկացել էր, որ հայրենասեր մարդ է: Հանդիպումը կայացավ: Նա չիրաժարվեց ընդհանուր գործից: Բայց Ռ. Պետրոսյանի համար հասկանալի էր նաև նրա

գգուշավորությունը: «Հեշտ բան չէ, – ասաց Շ. Պետրոսյանը, բայց չժխտեց գործով զբաղվելու՝ արդեն գործողության մեջ դրված ծրագրի խոհեմությունը, – ՊԱԿ-ը և Բոքիս Կևորկովը որ իմանան՝ մեզ բոլորիս գործից կազատեն»:

Այսպես թե այնպես՝ նրա վերաբերմունքից անմիջապես զգացվեց, որ ջերմ համակիր ու համախոհ է:

– Գնա՛, – խորհուրդ տվեց նա, – բոլորի հետ խոսի՛ր, վերջում կգաս ինձ մոտ:

Վաչագան Գրիգորյանին և Արկադի Մանուչարովին տեղեկացրեց հանդիպման արդյունքի մասին ու անմիջապես մեկնեց Մարտակերտի կուսըջկոմի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանի մոտ:

Հարևաններ էին և հանդիպում էին երբեմն: Մինչ այդ Վ. Գաբրիելյանը աշխատել էր Մարտունիում: Ռազմիկը գիտեր, որ տղամարդուն վայել բնավորություն ունի. «այո»-ն «այո» է, «ոչ»-ը՝ «ոչ», չնայած հակասական կարծիքներ կային նրա մասին: Անմիջապես չմտավ նրա մոտ: Նախ հանդիպեց Շարժման Մարտակերտի պատասխանատու Վիգեն Շիրինյանի ու ակտիվիստ Վազիֆ Գալստյանի հետ: Նրանք նպատակահարմար չհամարեցին Ռ. Պետրոսյանի հանդիպումը առաջին քարտուղարի հետ, որովհետև մտադիր էին նրան պաշտոնից ազատել տալ:

– Նրան ինչպե՞ս կարող ես այդ գաղտնիքը վստահել, երբ նա կամենում է մեզ բոլորիս բռնել տալ, – նման այլ փաստարկներ բերեցին:

– Դուք նրան պաշտոնից հանելու մասին մի մտածեք, – վստահ խորհուրդ տվեց նրանց, – այլ ստորագրությունները հավաքեք և ժողովրդին նախապատրաստեք ցույցե-

րին՝ նստաշրջան կազմակերպելու պահանջով:

– Ժողովուրդն արդեն մեզ մոտ էլ, ինչպես Ասկերանում, Հաղրութում և Մարտունիում, նստաշրջան է պահանջում: Մնում է քարտուղարի վերաբերմունքը, որ ավելորդ դժվարություններ չհարուցվեն, – ավելացրեց նա:

– Բոլոր քարտուղարներին ամենից շատ մտահոգում է անասնագողությունը,- ասաց Ռ. Պետրոսյանը: – Այս մի հարցում նրան ապահովագրելու համար պաշտպանեք ֆերմաները:

Վահան Գաբրիելյանը սիրով ընդունեց իր հարևանին: Բայց զգացվում էր նրա տագնապը: Ռ. Պետրոսյանը տեղեկացրեց, որ նստաշրջան կազմակերպելու որոշման մասին եկել է նրա կարծիքն իմանալու, քանի որ բոլորն արդեն գիտեն և սպասում են Վ. Գաբրիելյանի հեղինակավոր խոսքին:

– Ովքե՞ր են համաձայն, – հետաքրքրվեց նա:

– Բոլորը, – վստահորեն անհասցե նետեց «առաքյալը»:

– Օրինակ, – խորացավ նա:

– Մանուչարովը, Վաչիկը, Շմավոն Միսակովիչը, Գրիշա Բաղյանը:

– Ռազմի՛կ, – մտերմորեն դիմեց զրուցակիցը, – ես քեզ լավ եմ ճանաչում: Ես, անտարակույս, համաձայն եմ, բայց խնդրում եմ՝ առայժմ ոչ ոք չիմանա այս մասին:

Չբույցին ներկա շրջգործկոմի նախագահ Վալերի Ջավադյանի կարծիքն էլ հարցրեց առաջին քարտուղարը:

– Ինչպես ասեք՝ այնպես էլ կանենք, – եղավ պատասխանը:

– Երբ գործը հաջողվի, – իր խոսքն առաջ տարավ նա, – ես բոլոր պատգամավորներին կբերեմ նստաշրջան, էլ



չգաք, – եզրափակեց զրույցը:

Նա միանգամից փոխվեց Ռ-ազմիկի աչքում, մեծացավ: Փաստորեն, ոչ միայն բարդություններ չառաջացրեց, այլև իր պաշտոնի համար շատ վտանգավոր քայլեր հանձն առավ: Բայց պահանջի մման խնդրանք էլ ուներ.

– Խնդրում եմ, Վիգենենց (այսինքն՝ շարժման ակտիվիստներին) զգուշացնես, որ հրաժարական չպահանջեն ինձանից: Եթե ես հրաժարական տամ՝ Մարտակերտը կկորչի:

Նա անկեղծորեն էր խոսում, սրտացավություն կար նրա խնդրանքի մեջ: Դա Ռ-ազմիկին ավելի ոգևորեց: Նա ուժեղ մարդ էր: Փաստորեն՝ և՛ կոմունիստական կուսակցության ուղենիշն էր պահում, և՛ զինվորական պարետատան հետ էր համագործակցում, և՛, անհնաժեշտության դեպքում, ազերիներին էր սանձահարում, ու, պարզվում է՝ համախոհ է նաև շարժման աջակիցների հետ: Այն ժամանակ հզոր կայսրության պայմաններում նա չվարանեց: Կուսակցական տեղական ղեկավարների մման վերաբերմունքը և շարժման ակտիվիստների հետ համագործակցությունն իր դրական արժեքն ունեցավ, արցախահայության համաժողովրդական պայքարում հաղթանակի հասնելու գրավական դարձավ:

Կուսակցական վերնախավը չկարողացավ տեղական ղեկավարների մեջ սպանել մարդուն, ջնջել մարդկայինը, արդարության համար մարտնչող պայքարի ոգին: Կուսակցական-ներմուծովի գաղափարներն այլևս սնանկ էին ու անգործունակ: Արմո Ծատրյանի և Վաչագան Գրիգորյանի օգնությամբ Ռ-ազմիկը հավաքել էր մարգարծկոմի մեկ երրորդի ստորագրությունները, որոնք ներկայացրեց մարզխորհրդի գործկոմի նախագահի տեղա-

կալ Շնավոն Պետրոսյանին:

– Լա՛վ, օրինական է, – հաղթաթուղթը ձեռքին ասաց նա:  
– Մնացածը ես կկազմակերպեմ:

Եվ, իրոք, նստաշրջանը կազմակերպելու, պատգամավորներին (նաև՝ աղբրեջանցի) այդ մասին իրազեկելու և մնացած գործը կատարեցին Կարեն Բաբուրյանը և Կարեն Ջհանգիրյանը՝ Շնավոն Պետրոսյանի հանձնարարությամբ:

Գործկոմի կազմից ստորագրողները հայտնվել էին երկու կրակի արանքում:

Նստաշրջանից մի երկու օր առաջ մարզկոմի առաջին քարտուղարն արդեն տեղյակ էր և կամենում էր հարկադրել գործկոմի անդամներին՝ հրաժարվել իրենց ստորագրություններից:

Մնում էր՝ թաքցնել պատգամավորներին և հրահանգավորել՝ չներկայանալ նույնիսկ մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կևորկովի հրավերի դեպքում:

Պետք էր չկորցնել զգոնությունն ու լինել վստահ, որ նստաշրջանը չձախտողվի, անել ամեն ինչ, որ հնարավոր սաղրանքները ոչ մի կերպ չկարողանային ազդել նախաձեռնության ընթացքի վրա: Նստաշրջանը նախագահողը պետք է իրավիճակի լիիրավ տերը լիներ, որպեսզի տեղում ժամանակին ու ճիշտ կողմնորոշվել կարողանար: Բայց ո՞վ կհանդգներ ստանձնել նման պատասխանատու առաքելությունը: Արմո Ծատրյանն ու Վարդան Հակոբյանը նստաշրջանը նախագահելուց հրաժարվեցին, բայց խոստացան ելույթ ունենալ, և, իրոք, առաջին ելույթ ունեցողը Վ. Հակոբյանն էր, քաջալերող էր նրա խոսքը, տպավորիչ:

Վ. Գրիգորյանի և Ա. Մանուչարովի հետ պայմանա-

վորվածության համաձայն՝ Ռ. Պետրոսյանը պետք է հանդիպեր մարզգործկոմի ժողկրթության բաժնի վարիչ Վիգեն Հայրապետյանին, նրան առաջարկեր պատմական այդ նստաշրջանը նախագահելու պատվավոր առաքելությունը ստանձնել: Նա կարևորեց Վ. Հայրապետյանին առավել մոտիկից ճանաչող բժիշկ Էդուարդ Դուկասյանի ընկերակցությունն այդ գործում: Գնացին երկուսով, և Վիգեն Հայրապետյանն առանց ձևականությունների ու քարդացնելու՝ արձագանքեց առաջարկությանը:

– Համաձայն եմ, բայց ոչ ոքի չասեք: Ես արդեն ասել եմ, վերջ, – կտրուկ եզրափակեց նա:

«Ուրեմն՝ մեր գործերն անպայման հաջողվելու են», մտածեց Ռ-ազմիկը: Սակայն էլի անելիքներ կային: Կար ընդհանուր մի հիմնավոր եզրահանգում, որ եթե Կևորկովը նստաշրջանի կազմակերպիչների կողմը չանցնի՝ ելքն անորոշ կլինի: Հատկապես, որ նստաշրջան հրավիրելու ժողովրդի պահանջի մասին լսելով՝ շուտափույթ Արցախ էին ժամանել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Գեմիչևը, ԽՍՀԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ռ-ազումովսկին, Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Մ. Բադիրովը: Պարզ է, չէին եկել օրինականությանն ընթացք հաղորդելու: Եկել էին օրինականության հետ հույսեր կապող մարդկանց ջանքերով կազմակերպվող նստաշրջանի կասեցման, կամ էլ՝ լիովին խափանման իրենց բուն ցանկությանը հագուրդ տալու համար:

Վիգեն Հայրապետյանը զգուշացվեց նստաշրջանին չներկայանալու հարկադրանքից խուսափելու համար տանը չգիշերել: Իսկ Ռ. Պետրոսյանն ու Էդ. Դուկասյանը սկսեցին Բ. Կևորկովին հանդիպելու ուղիներ որոնել:

Մարզկոմի կուսիսանձնաժողովի նախագահ Վահան Հարությունյանն արդեն հրաժարվել էր Կևորկովի հետ հանդիպումը կազմակերպելու միջնորդությունից:

– Չէ՛, չեմ կարող ասել, – պարզ խոստովանեց նա:

Սակայն Կևորկովի օգնական Յուրի Բեկնազարյանը բժշկի առաջարկությանն անմիջապես դրական պատասխան տվեց, խոստացավ Բ. Կևորկովին տեղեկացնել Շարժման ակտիվիստ Ռ. Պետրոսյանի՝ իր հետ հանդիպելու ցանկության մասին:

Մեն-մենակ նրա հետ հանդիպումն անհրաժեշտ էր ու հրատապ: Պետք էր ճշտել, թե տարածաշրջանում ազդեցության մեծ ուժ ունեցող կոմունիստների մարզային դեկավարը եթե չի օգնելու, գոնե պատրաստ է չխանգարել:

«Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրության՝ Գ. Գաբրիելյանի աշխատասենյակում սպասումը հինգ ժամ տևեց: Վերջապես, խոստացված ժամին (երեկոյան ժամը 6<sup>00</sup>-ին) Յու. Բեկնազարյանը զանգահարեց և տեղեկացրեց, որ ընկեր Կևորկովը վաղը ժամը 13<sup>00</sup>-ին կընդունի Ռ. Պետրոսյանին: Բոլորը շատ ուրախացան:

Հաջորդ օրը, ցերեկվա ճիշտ ժամը 1<sup>00</sup>-ին, Ռ-ազմիկն արդեն մարզկոմի առաջին քարտուղարի ընդունարանում էր, երբ նրան նախ ընդունեց ՊԱԿ-ի աշխատակից Թումանյանը: Իրար լավ գիտեին՝ նա ևս ֆուտբոլի մոլի երկրպագու էր:

– Կներես, Ռ-ազմիկ, – դիմեց նա, – գրպաններդ պիտի ստուգեմ: Կարգն է այդպես. առաջին քարտուղարի մոտես գնում:

– Համեցե՛ք, – սիրով ենթարկվեց Ռ-ազմիկը:

«Ստուգվելուց» հետո եկավ Յու. Բեկնազարյանը և խորհրդակցությունների դահլիճ հրավիրեց նրան:

Ռ-ազմիկն արդեն գլխի է ընկել, որ Կևորկովն իր աշխատասենյակում հյուրեր ունի՝ Գեմիչևն ու Ռ-ազունովսկին, ինչպես նաև՝ Բադիրովը:

Յուրին գնաց, ներս մտավ Բ. Կևորկովը:

– Я Вас слышалю, – այն ժամանակներում նման հանդիպումն ինքնին արդեն մեծ բան էր սովորական, կամ այդ օրերի լեզվով ասած՝ անհնազանդություն ցուցաբերող քաղաքացու համար:

Ռ-ազմիկն իրազեկեց հաջորդ օրը կայանալիք նստաշրջանի մասին, որն՝ անխուսափելի է, քանի որ օրինական է, ժողովրդավարական դրսևորում, որը մեր երկրի համար որքան արտառոց, նույնքան էլ՝ իրական է, կատարված փաստ: Նստաշրջանն Արցախը Հայաստանի հետ վերամիավորման պատմական ճշմարտությունը վերականգնելու որոշումը պետք է ընդուներ: Նման որոշման ընդունումը ժամանակի հրամայականն է, ուստի, Ռ-ազմիկը նրան առաջարկեց անցնել ժողովրդի կողմը, որպեսզի Կևորկովին չհավատացող զանգվածը ես վերանայի նրա նկատմամբ ունեցած գնահատականը:

– Մի խոսքով, անցեք ձեզ հավատացողների կողմը և միաձուլվեք ժողովրդին, – ասաց Ռ-ազմիկը:

– А Вы, Петросян, верите мне? – հետաքրքրվեց նա:

– Իհարկե, այլապես՝ ինչո՞ւ պիտի գայի, – վստահեցրեց Ռ-ազմիկն ու Կևորկովը «կիսվեց» զրուցակցի հետ: Ասաց, որ ադրբեջանական կոմկուսակցությանն ու կառավարությանն ինքը համարում է կեղտոտ խաղերի մոզոնման հսկա մի որջ, բայց Մոսկվայից «բարեհուստ հովերի» է սպասում:

– Գիտե՞ք՝ ինձ մոտ ովքեր են նստած, – հարցրեց և թվարկեց վերոնշյալ «բարձրաստիճան» հյուրերին:

Այդ հանդիպման ընթացքում Ռ-ազմիկը նորովի բացահայտեց Բորիս Կևորկովին:

Այո, նա էլ մի սովորական հայ մարդ էր, ով իր ժողովրդի լավն էր կամենում, բայց արմատները հողում չէին:

– Բորի՛ս Սարկիսովիչ, – փորձեց «խելքի բերել» գրուցակցին, – դուք անցեք ժողովրդի կողմը, սա վերջն է: Մոսկվայի հետ հույսեր մի կապեք այլևս:

– Я подумаю, – հետևեց պատասխանը:

– Շնորհակալություն: Ինչ ուզում է լինի՝ մտաշրջանը տեղի է ունենալու, – անառարկելի տոնով եզրափակեց Ռ-ազմիկը:

Հանդիպումն ուրախառիթ էր՝ դրական երանգներ պարունակող, որովհետև ինչպես Մանուչարովը եզրակացրեց՝ գոնե չի խանգարի: Հանդիպումը նաև տրտմության երանգներ կուտակեց Ռ-ազմիկի հոգու մեջ: Նա ցավ ապրեց իր պաշտոնին անհողորդոդ նվիրվածությամբ կապված այդ մարդու նկատմամբ, ով այդպես կուրորեն էր հավատում «կոմունիստական վեհ գաղափարներին», որ ճգնաժամային այս պահին անգամ չէր կարողանում ձերբազատվել ստրուկի իր կարգավիճակից, ընթանալ սրտի ձայնի թելադրանքով՝ ճշմարիտ, ազգային ուղիով: Եվ, վերջապես, ազգային ի՞նչ հատկանիշներ կարող էս սպասել արդեն ապագայնացած այդ մարդուց:

Այնուամենայնիվ, այդպիսին դարձած մարդն էլ էր երագում, որ իրեն հավատացող լինի արդարության համար պայքարի ելած մարդկանց շարքերում: Նրա համար շատ կարևոր էր իրեն տանջող այդ անէական հարցի պատասխանը՝ Ռ-ազմիկ Պետրոսյանն արդյո՞ք հավատում է իրեն, որովհետև հավատն է բոլորիս իրար կապողը:

Կևորկովը տառապում էր, կամենում էր մեզանից մեկը

լինել: Դա հասկացավ, երբ իր հարցին դրական պատասխան ստացավ, թեկուզ՝ շրջանցումով: Նրա աչքերում կայծկլտաց հավատը, Ռ-ազմիկը տեսավ նրա ոգևորությունը՝ կենսունակության ավիշով լցված աչքերում: Յավոք, կրկին պիտի չքանար այդ ամենը հանդիպումից հետո, որովհետև իր «կոչումն» այլ էր: Խորն էր անջրպետը իր ու յուրայինների միջև, և դիմացն անդունդ էր, խորխորատ: Նրան ոչ թե մտածել էր պետք, այլ գործել: Դա էր փրկության միակ բանալին, որն, ավաղ, վաղուց էր կորցրել, անդառնալիորեն...

Շրջաններից դեպի Ստեփանակերտ եկող ճանապարհները փակել էին տեղական (աղբբեջանական) միլիցիան և ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին գործերի զինծառայողները, որպեսզի պատգամավորները տեղ հասնել չկարողանան: Պատգամավորներին անվտանգ Ստեփանակերտ հասցնելու գործը Ռ-ազմիկին էր վստահված: Բոլորի ջանքերը մի նպատակակետի էին ուղղված՝ առանց զենքի գործադրման, առանց արյուն թափելու ետ ստանալ մեր հասանելիքը՝ ի վերուստ, և ի սկզբանե, 1988թ. փետրվարի 20-ին, մի սովորական, օրինական մի նիստով ժողովրդի՝ 65 տարի առաջ կամայականության գոհ դարձած կամքի արտահայտությունը վավերացնելը, պատանդված Արցախն Աղբբեջանից անջատելն ու մայր Հայաստանի հետ վերամիավորելը:

Պատգամավորները շատ երկար ճանապարհ էին կտրում, որ հասնեն մայրաքաղաք: Խոջավվում շրջափակել էին մի խումբ պատգամավորների: Զվորումը չէր ապահովվում: Ի պատասխան՝ Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում Արաքսյա Հայրապետյանը, Վալյա Մեհրաբյանը, շարժման մյուս ակտիվիստները շրջափա-

կել էին ճաշելու գնացող Զ. Բաղիրովին (Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար) ու նրա շքախմբին՝ պայմանով, որ բաց կթողնեն միայն այն ժամանակ, երբ կբացեն Ստեփանակերտ շտապող պատգամավորների ճանապարհը: Պահանջը կատարվեց, պատգամավորները ժամանակին հասան և մասնակցեցին նստաշրջանի աշխատանքներին:

Պատգամավորները տեղ էին հասնում ձիերով ու այլ միջոցներով, զարտուղի ճանապարհներով, անտառային արահետներով, քերծերով: Աշանից՝ ձիով, բերվել էր նույնիսկ հղի պատգամավորը: Նույնիսկ 40 աստիճան ջերմությամբ հիվանդն էր տեղ հասել: Եվ քվորումն ապահովվեց, ընդունվեց պատմական որոշումը: Ամբողջ աշխարհն իմացավ այս մի կտոր հողի վրա սպրող ժողովրդի մեծ ուժի մասին, որը կարողացավ ցնցել Խորհրդային Միությունը: Փոքրաքանակ մեր ժողովուրդն իր պարգույամբ, անկեղծությամբ, նաև՝ ոգու ամասասան տոկունությամբ կարողացավ սասանել ամեն ինչ, մինչև անգամ՝ առանց կողմնակի ուժի օգնության, մեն-միայնակ, իր ներքին ուժի պռոթկման շնորհիվ պատռեց թուրքական արնախում երախը:

Խորհրդային լայնարձակ երկրում իր նախադեպը չունեցող իրադարձությունն ապշեցրեց բոլորին: Քաղաքական անհնազանդության դիմած ժողովրդի կտրուկ դիմադրությունն ադրբեջանական պաշտոնյաններին ստիպեց ձեռնունայն վերադառնալ Բաքու:

«Հաղթանակը կռեցինք՝ անցնելով նաև արյուն-արցունքի միջով, դժոխային կյանքով ապրելով, բայց՝ դյուցազնացած, մեկ մարմին դարձած: Տուժեցինք բոլորս, թեև ամեն մեկս գտավ իրենը: – Ռ-ազմիկ Պետրոսյանի մտո-



րումները տանում են հեռու, անդրադարձումներ է անում նաև Բ. Կևորկովի կերպարին, բնավորությանը, քաղաքական կեցվածքին: – Պատերազմի սարսուռը պատեց նաև նրան, բայց նա երջանկության վայելքը չապրեց, – եզրակացնում է Ռազմիկը: – Ո՛չ ազգային գործիչ լինելով՝ նա նաև ո՛չ հեռատես քաղաքական գործիչ էր»:

Եվ կուսմարզկոմի բյուրոյի 1988-ի փետրվարի 23-ի նիստն ազատեց նրան մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից:

### 3

Ադր. ԿԿ Լեռնային Ղարաբաղի մարզկոմի երկարամյա առաջին քարտուղար Բորիս Սարկիսովիչ Կևորկովի մասին հակասական շատ կարծիքներ են ձևավորվել Արցախյան ազգային ազատագրական շարժման ու զինված պայքարի տարիների ընթացքում: Բայց ժամանակը ցույց տվեց, որ նա ավելի շատ իշխող վերնախավի գոհը դարձավ, քան գործիքը՝ դահճի կարգավիճակով:

Արցախյան շարժման նախնական փուլում նա չկարողացավ ճիշտ կողմնորոշվել և կանգնել իր ժողովրդի կողքին, ավելին՝ նրա առաջին այդ սխալին գումարվեց երկրորդը, երբ համաձայնեց Ադր.ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Այազ Մութալիբովի առաջարկին և Մոսկվայից Բաքու վերադարձավ՝ ղեկավարելու հակահայկական բնույթ և ուղղվածություն որդեգրած Ղարաբաղի նորաստեղծ «վտարանդի» կառավարությունը՝ ամենաբարձր լիազորություններով:

Նա այդպես էլ չհասկացավ ժամանակի ողջ լրջությունը, և ադրբեջանցիները նրա աչքին դեռ երևում էին ժողո-

վուրդների բարեկամության ու ինտերնացիոնալիզմի վարդազույն ակնոցների արտացոլանքով:

Շամանակը, սակայն, ամենալուրջ դատավորն է, և ամեն ինչ աստիճանաբար իր տեղը դրվեց:

ԼՂԽ Խորհրդի 1988-ի պատմական նստաշրջանին նա աջակցել չկարողացավ՝ ելնելով իր կուսակցական դիրքից, քաղաքական կողմնորոշվածությունից ու համոզմունքներից, բայց և՛ խանգարել չկարողացավ, որովհետև ժողովուրդն արդեն միակամ ու միակարծիք էր այդ հարցում:

Ադր.ԿԿ ԼՂ մարզկոմի փետրվարի 23-ի արտահերթ նիստի որոշմամբ իր զբաղեցրած պաշտոնից ազատված Բ.Կևորկովն անմիջապես հեռացավ մարզից: Մոսկվայում նա արտասահմանից ստացվող հումանիտար օգնության ընդունման ու բաշխման միութենական կազմակերպության նախագահի տեղակալի պաշտոնն էր զբաղեցնում: Վիկտոր Պոլյանիչկոն էլ էր վաղուց ճողոպրել ու ապաստանել Մոսկվայում: Երկուսին էլ շատ լավ էր ճանաչում Ա.Մութալիբովը, և, որպես «Ղարաբաղի գծով անգերազանցելի մասնագետներ», հրավիրեց Բաքու՝ նպատակ ունենալով այնտեղ ստեղծել այսպես կոչված՝ «Ղարաբաղի վտարանդի կառավարություն»: Նա Բ.Կևորկովին խոստացել էր ամենաբարձր իշխանությունը Ղարաբաղի վրա (Վ.Պոլյանիչկոյի նման տեղակալով), միայն թե հնարավոր լիներ այդ անհնազանդ երկրամասի՝ տասնամյակներ շարունակ որպես Ադրբեջանի «անբաժանելի մաս» տարփողվող կարգավիճակի պահպանումը:

Այսօրվա հեռվից, թերևս, դժվար է հստակ պատասխան տալ այն հարցին, թե Կևորկովն արդյո՞ք ընդունեց Մութալիբովի առաջարկը, որովհետև Բաքու հասնելուց և

Մութալիբովի առաջարկը ստանալուց շատ կարճ ժամանակ անց տապալվեց տիրող վարչակարգը, և Ադրբեջանի իշխանությունը հայտնվեց ժողճակատայինների ձեռքում: Կևորկովն ու Պոլյանիչկոն փորձեցին անմիջապես թողնել Ադրբեջանի տարածքը, բայց Ա.Էլչիբեյն արդեն կարգադրել էր փակել բոլոր ճանապարհները, ինչպես՝ ցամաքային, այնպես էլ՝ օդային: Եվ օդանավակայան շտապած «փախստականներն» իսկույն ձերբակալվեցին աչալուրջ ժողճակատայինների կողմից:

Իշխանափոխված Ռուսաստանն Ադրբեջանից անմիջապես պահանջեց իր քաղաքացուն, իսկ անհայրենիք մնացած Կևորկովը հայտնվեց Բաքվի բանտում, և մեկ ու կես տարի շարունակ, մինչև նոր իշխանափոխություն, ենթարկվեց անձնական նվաստացումների ու սոսկալի կտտանքների: Կևորկովին ներկայացված հիմնական մեղադրանքն այն էր, որ անջատողական այդ ողջ գործընթացն իբր ինքն էր կազմակերպել ու ընթացքավորել՝ Մոսկվայի թելադրանքով ու անմիջական աջակցությամբ: Մի քանի անգամ, ահաբեկելու նպատակով, նույնիսկ կեղծ մահապատիժ կազմակերպվեց բանտում (կրակել էին գլխավերևով, ոտքերի տակ և այլն):

Հայտնվելով ծայրահեղ անտանելի պայմաններում, Բ.Կևորկովը վերջապես հասկացավ իր ով լինելը և օգնություն հայցեց՝ ինչ-ինչ ճանապարհներով նամակ ուղարկելով Ստեփանակերտ, ուր մարդիկ, իրոք, մտահոգված էին նրա ճակատագրով ու մի քանի անգամ նույնիսկ փորձեցին փոխանակել: Վերջին փորձը Հադրութի ուղղությամբ էր, երբ սահմանագլուխ բերվեց տասն ադրբեջանցի, բայց Բաքուն կրկին մերժեց առաջարկը՝ հրաժարվելով իր քաղաքացիներից: Պատասխանը միանշանակ էր.

– Ում ուզեք՝ կտանք, Կևորկովին՝ երբեք...

Բ.Կևորկովն, այնուամենայնիվ, ազատվեց բանտի դժոխսային կյանքից՝ իշխանական լծակներն իր բուռը հավաքած Հ.Ալիևի միջոցով և անմիջապես էլ մեկնեց Մոսկվա: Բանտում նա արդեն անբուժելի հիվանդություն էր ձեռք բերել՝ տառապում էր շաքարախտով, հանգիստ չէր տալիս ձեռքերի դողը, ուստի, այլևս ոտք չդրեց Ստեփանակերտ, ոչ մեկի հետ էլ չէր ուզում հանդիպել:

Ադր.ԿԿ ԼՂ մարզկոմի նախկին քարտուղար (այնուհետև՝ «Մովետական Ղարաբաղ» թերթի խմբագիր) Եղիշե Սարգսյանը հետագայում լինելով Մոսկվայում՝ այցելեց իր նախկին ղեկավարին: Հիվանդությունն արդեն լիովին տիրապետել էր այդ, թվում էր, անփոփոխ համոզմունքների տեր մարդուն, բայց Կևորկովն էլի հետաքրքրվեց ստեփանակերտցիներով, մի 80 մարդու անուն տվեց, հարցրեց նրանց որպիսությունը:

Չմոռացավ նաև Ռազմիկ Պետրոսյանին.

– Ո՞նց է ֆուտբոլիստը՝ Ռազմիկը, – հարցրեց, – կբարևես: Այդ տղան քաղաքականություն հասկացավ, իսկ ես, ցավոք, ոչ...

Դ-առնություն կար նրա այդ խոստովանության մեջ, հարցումն էլ՝ ժամանակավրեպ էր ու իմաստազուրկ: Նաև՝ ուշացած զոջում էր հիշեցնում՝ թվացյալ ճշմարտակյացության ու ոչ ճիշտ ապրած կյանքի համար:

Կևորկովի մասին խորհելիս՝ Ռ. Պետրոսյանը փորձում է սթափեցնել մարդ արարածին, որտեղ էլ վերջինս գտնվելիս լինի, ինչով էլ զբաղվելիս լինի՝ իմանա իր ով լինելը, որովհետև ազգից կտրվածն անհող-անարմատ ծառ է հիշեցնում, որը ոչ չորանալ է կարողանում, ոչ էլ՝ կանաչել: Ազգային ակունքներից հեռացողն անգիտակ-

ցաբար ինքնասպանության տարբերակն է ընտրել՝ կորցնելով կենսավիշը, կերպարն ու կենսակերպը:

Իսկ կա՞ աշխարհում և պատմության մեջ մեկը, ով ինքնակամ գնար այդպիսի վախճանի: Անհայտությունը, անորոշությունն ու միայնությունը անտանելի են մարդ արարածի համար: Իսկ եթե մարդն ի ծնե հանճարեղ է և փառքի թևերին նստած է հայտնվում իշխանական լծակների մոտ, միևնույն է, նա մեծ հոգս ունի՝ բացել ամենաթանկ գանձարանը, հասնել արմատներին և հայտնվել իր կենաց ծառի սաղարթախիտ կենտրոնամասում: Սա բոլորովին ուրիշ զգացում է՝ ի՞ր ազգի սրտում լինելը, ի՞ր ազգի շուրթերին հայտնվելը, ի՞ր ազգին առաջնորդելը... Երջանկացնո՞ղ զգացում:

#### 4

ԼՂԻՄ խորհրդի 1988-ի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի պատմական որոշումը հենց հաջորդ օրը տպագրվեց «Սովետական Ղարաբաղ» և «Սովետսկի Կարաբախ» մարզային թերթերում: Արցախահայության ոգևորությանը չափ ու սահման չկար. վերջապես իրականացավ վաղեմի երազանքը: Բայց նույն՝ փետրվարի 21-ին ԽՍՀՄ Կենտկոմի քաղբյուրոյի հապճեպ ընդունած որոշումը, մեղմ ասած, սառը ցնցուղի դեր կատարեց: Գրան գումարվեցին ադրբեջանական բազմահազարանոց խուժանի փետրվարի 22-ի հարձակումը Ասկերանի վրա, փետրվարի 27-29-ի սուճայիթյան եղեռնագործությունը:

Սուճայիթյան իրադարձությունների մասին մարտի 2-3-ին արդեն գիտեին Ստեփանակերտում: «Կռունկ» կոմիտեի՝ ներգաղթի (միգրացիայի) հանձնաժողովի կազմը

(նախագահ՝ Ռ-ազմիկ Պետրոսյան) բռնատեղահանվածներին տեղավորելու համար բոլոր ջանքերն էր գործադրում: Ավելին, բռնատար մեքենաներ հայթայթվեցին, Սումգայիթ, Բաքու և Ադրբեջանի հայաշատ այլ բնակավայրեր ուղարկվեցին՝ մահացու վտանգի մեջ հայտնված հայազգի բնակչությանը մահվան գոտուց անվնաս դուրս բերելու համար:

Այդ գործընթացն իրականացվեց ԼՂ ավտոտրանսպորտային արտադրական միավորման մեքենաներով (թիվ 2718 շարասյան պետ Մաքսիմ Միրզոյան) և ժողովրդական դերասան Սոս Սարգսյանի՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի կողմից տրամադրված նյութական միջոցներով գործող հիմնադրամի գործուն աջակցությամբ:

Այդ մեքենաներով հնարավորություն ընձեռվեց նաև Արցախյան շարժման տարեգիր Բակուր Կարապետյանին՝ լինել Սումգայիթում ու Բաքվում և մեկ շաբաթ շարունակ, թարմ հետքերով, անհրաժեշտ նկարահանումներ ու գրառումներ կատարել՝ հայազգի քաղաքացիների նկատմամբ Սումգայիթում ու Բաքվում իրականացված ոճրագործությունների մասին ճշմարտությունն աշխարհին ներկայացնելու համար:

Հանձնաժողովի գործունեության ընթացքում Ռ.Պետրոսյանին անգնահատելի աջակցություն ցուցաբերեցին նաև Լյովա Առստամյանը, Արաքսյա Հայրապետյանը, Վալյա Մեհրաբյանը և ուրիշներ:

5

ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին գորքերի՝ Ստեփանակերտում ու շրջաններում տեղակայված ստորաբաժանումների գոր-

ծողությունների մասին ճշգրիտ տեղեկատվություն էր ստացվում ԼԳԻՄ ՆԳՎ Ստեփանակերտի քաղաքային բաժնի աշխատակից Վովա Ներսիսյանից: Նա ամենայն բարեխղճությամբ էր կատարում ինքնակամ ստանձնած այդ պարտավորությունը՝ դա համարելով իր համեստ ավանդն ազգանպաստ գործունեության մեջ:

Հեռախոսակապի առումով էլ համապատասխան հիմնարկներում աշխատող Նինան (Բաբայան) ու Ժաննան Ռ.Պետրոսյանին (կամ՝ լիազորված այլ անձի) հայտնում էին ստացվող բոլոր հեռագրերի մասին:

Սումգայիթյան ցեղասպանության նախօրեին Արցախում բնակվող աղբբեջանցիները հեռագրեր էին ստանում բառացիորեն հետևյալ բովանդակությամբ. «Հարսանիքը կայանալու է Սումգայիթում և Բաքվում, Ձեր ներկայությունը պարտադիր է»:

Նույն բովանդակությամբ հեռագրեր էին ստացվում նաև Բաքվի 1990-ի հունվարյան խժժությունների նախօրեին:

Իսկ «Կոլցո» («Օղակ») գործողությունից առաջ, 1991-ի ապրիլին, արցախաբնակ աղբբեջանցի ակտիվիստներին Բաքվից ուղարկվող հեռագրերն ունեին հետևյալ բովանդակությունը. «Պատրաստել «Շտապ օգնության» ութ մեքենա, 15 ՌԻԱԶ, հիվանդանոցում՝ 60-100 մահճակալ»: Որից հետո էլ «անձնագրային ռեժիմի» ստուգման պատրվակով, սկսվեցին զանգվածային ձերբակալություններն ու հայազգի բնակչության բռնատեղահանումները Հյուսիսային Արցախի ու Հաղրութի շրջանի իրենց վաղնջական բնակավայրերից:

Օդանավակայանում իրենց հայրենասիրական պարտքն էին կատարում Խորենն ու Գարիկը, Հայաստանից ու Ռուսաստանից Արցախ եկող պատվիրակություն-

ներին ընդունում ու ճանապարհում էր Համոն, մարդկանց տեղավորման ու սննդի առումով զգալի օգնություն էր ցուցաբերում Գրիշա Անտոնյանը («աֆերիստ Գրիշան»), ցուցապաստառների պատրաստման հարցում օգնում էր Ստեփանակերտի քաղաքային զբոսայգու նկարիչ-ձևավորող Քինան: Շարժման ընթացքում իրենց բարձրության վրա մնացին Իշխան Ավետիսյանը («տաքսիստ Իշխան»), Սերժիկ Գրիգորյանը («սապոժնիկ Սերժիկ»), խոհարարներ Արաքսյա Հայրապետյանը, Վալյա Մեհրաբյանը, ուրիշներ:

Արցախում ինքնապաշտպանական առաջին ջոկատներն ստեղծեցին Ռ-ազմիկ Պետրոսյանը, Ռ-ոլես Աղաջանյանը, Արկաղի Կարապետյանը, Մուրադ Պետրոսյանը, Հրանտ Սարգսյանը, Կուճուր Նետոն և ուրիշներ:

## 6

Ռ-ազմիկ Պետրոսյանը կարևոր է համարում նաև Արկաղի Մանուչարովի՝ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Վեզիրովի հետ Բաքվում կայացած գաղտնի հանդիպման փաստին անդրադառնալը:

Արցախյան շարժման մութ ու դեռևս չլուսաբանված էջերից է Արկաղի Մանուչարովի անակնկալ հայտնվելը Բաքվում 1988-ի մարտին և հանդիպումը Ա.Վեզիրովի հետ: Այսօր Ստեփանակերտում ոչ-ոք չի հիշում, թե Ա.Մանուչարովը կոկրետ ո՞ր օրն է Ա.Վեզիրովի հրավերով մեկնել Բաքու և հանդիպել հանրապետության առաջին դեմքի հետ: Բայց, ամենայն հավանականությամբ, դա պետք է որ եղած լինի մինչև մարտի 17-ը (իսկ բոլորս քաջատեղյակ ենք, թե կուսակցական ինչպիսի կարևոր



որոշում ընդունվեց Ստեփանակերտում, 1988-ի մարտի 17-ի երեկոյան):

Բանն այն է, որ կուսակցության ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանը, մարզկոմ հրավիրելով Ա.Մանուչարովին՝ հայտնեց նրա հետ հանդիպելու՝ Ա.Վեգիբովի ցանկության մասին լուրը: Հ.Պողոսյանն ասվածին ոչինչ չհավելեց. «Ուզում է հանդիպել»: Եվ՝ վերջ: Իսկ ինչպե՞ս ընդունեց Մանուչարովն այդ անակնկալ լուրը: Հայտնի է միայն, որ նա համաձայնեց անմիջապես մեկնել Բաքու, իսկ անվտանգության հարցն իրենց վրա վերցրին Հ.Պողոսյանն ու ԽՄԿԿ Կենտկոմի կուսակցական-կազմակերպչական աշխատանքի բաժնի հրահանգիչ (մարտի 17-ից հետո՝ ԼՂ կուսմարզկոմի երկրորդ քարտուղար, կուսմարզկոմի բյուրոյի անդամ) Բ.Մալկովը:

Պարզ էր, որ Բաքվում քննարկման առարկան պետք է լիներ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցը: Իսկ ամեն ինչ պարզ դարձավ Ա.Մանուչարովի վերադառնալուց հետո միայն, և «կռունկականներն» առաջարկեցին քննարկել ու պարզություն մտցնել այն հարցում, թե «Կռունկ» կոմիտեի նախագահը Ադրբեջանի կուսակցական առաջնորդի հետ հանդիպելու համար ինչպե՞ս է մեկնում Բաքու՝ առանց տեղյակ պահելու կոմիտեի նախագահությանը: Մանուչարովն արդարացավ, որ մեկնելիս ժամանակ չկար հայտնել բոլորին, այդ մասին գիտեր միայն Ռ-ոլես Աղաջանյանը: Իր հերթին՝ Ռ.Աղաջանյանն, իրոք, խոստովանեց, որ գիտեր այդ մասին, բայց ընկերներին չասաց՝ զուտ Մանուչարովի անվտանգության ապահովման հետ կապված խնդիրներից ելնելով:

Քննարկման արդյունքում պարզ դարձավ նաև, որ Բաքվում Մանուչարովին կոնկրետ առաջադրանք էր տր-

վել եռօրյա ժամկետում կազմակերպել Ա.Վեզիրովի հանդիպումը «Կռունկ» կոմիտեի նախագահության լրիվ կազմի հետ՝ Բաքվում, սպառնալով՝ հրաժարվելու դեպքում ձերբակալել բոլորին: Ստացվեց այնպես, որ Մանուչարովը պետք է Բաքու տաներ շարժման բոլոր ակտիվիստներին (Բաքվի լեզվով՝ էքստրեմիստների խմբին):

Որոշվեց Մանուչարովի հարցին անդրադառնալ առաջիկայում, որպեսզի շարժումը չպառակտվի, իսկ հարցում պարզություն մտցնելու նպատակով առաջարկվեց հանգամանքները պարզել կուսմարզկոմի առաջին քարտուղարի հետ: Հ.Պողոսյանի մոտ գնացին երեք հոգուց բաղկացած խմբով (Ռադիկ Աթայան, Ռազմիկ Պետրոսյան, Սլավա Աղաջանյան): Հանդիպման համար պայմանավորվածություն ձեռք բերելու համար Հ.Պողոսյանին զանգեց Ռ.Աթայանը: Հանդիպումը կայացավ, որի ընթացքում նշվեց առանց կոմիտեի նախագահությանը տեղյակ պահելու՝ Բաքու մեկնելու սխալ լինելը:

Հ.Պողոսյանն արդարացավ. «Ես ընդամենն առաջարկել եմ, ինքը թող հրաժարվեր ու չգնար»:

Ինչ-որ է, ստեղծված իրավիճակից պետք էր ելք որոնել, ուստի հանդիպումը զուտ հաշտեցման նպատակ էր հետապնդում՝ շարժումն, ինչ էլ լիներ, չպիտի պառակտվեր: Խմբին հաջողվեց Մանուչարովի ու Պողոսյանի հաշտեցման գործն իրականացնել, թեև հետագայում ևս, անհանդուրժողականության հետևանքով, բազում անգամ են վերոհիշյալ անձիք գժտվել իրար հետ և... շարունակվել են հաշտեցման հերթական «արարողությունները»:

(Ռազմիկ Պետրոսյանի կարծիքով՝ երկուսն էլ տոգոր-

ված են ջերմ հայրենասիրությամբ, բայց երբեք չեն հանդուրժել իրար):

Հաջորդ օրը «Կռունկի» նախագահության անդամները կրկին Ստեփանակերտի կենտրոնական մարզադաշտի իրենց մշտական հավաքատեղիում էին: Պատրաստ էր Բաքու ուղարկվելիք պատասխանը: Մանուչարովը զանգեց Ադր.ԿԿ Կենտկոմի ընդունարան և Վեգիրովի օգնականին հայտնեց, որ «Կռունկի» վարչության անդամները պատրաստ են հանդիպել Վեգիրովի հետ Ստեփանակերտում կամ որևէ այլ չեզոք երկրում, բայց ոչ՝ Բաքվում: Բաքու մեկնելը ոչ միայն անհնարին է համարվել, այլև՝ անիմաստ:

Բաքվից այլևս ոչ մի առաջարկություն չստացվեց, ոչ էլ որևէ նման հանդիպում կայացավ հետագայում:

Իսկ համաժողովրդական շարժումն ընթանում էր իր բնականոն հունով:

## 7

Փետրվարի 20-ին հաջորդած օրերի ընթացքը հասկանալ տվեց մի շատ պարզ ճշմարտություն՝ ԼՂԻՄ խորհրդի նստաշրջանի ընդունած որոշումը դեռևս գործելու հստակ մեխանիզմ չունեք, իսկ Ստեփանակերտում (մարզում՝ ընդհանրապես), բնակչության մեծամասնությունը դեռ հեռու էր հարցն ուժի դիրքերից լուծելու մտքից: Բայց 1988-ի փետրվար ամսվա իրադարձությունների համապատկերի վրա արդեն իսկ պարզ ուրվագծվեց Արցախյան շարժման ու ընթացքի ողջ նկարագիրը՝ խաղաղ ցույցեր, իրավական գործընթացներ և ռազմական ուժի կիրա-

ռում: Ադրբեջանն իրականում ցուցադրեց եղեռնագործի իր իսկական դեմքը: Մարդիկ հասկացան, որ արդար պահանջով հարցին լուծում չի տրվի: Պետք էր պատրաստվել, զենք ու զինամթերք հայթայթել: Իսկ հավատավոր ժողովուրդը, որ մի քանի օր առաջ համաժողովրդական հանրահավաքում նստաշրջան էր պահանջում, մի պահ ասես ընկրկեց՝ մի՞թե գործադիր մարմնի ընդունած որոշումն անկիրարկելի է առանց կուսակցական մարմնի լիազորման:

Ուստի, անհրաժեշտ եղավ աշխատել նաև այդ ուղղությամբ: Ռ-ազմիկ Պետրոսյանն ու իր համախոհներն անընդհատ փնտրտուքի մեջ էին՝ ի՞նչ անել:

Շարժումը ղեկավարող կազմակերպության անհրաժեշտություն առաջ եկավ, ուստի՝ «Կռունկի» ստեղծումը ժամանակի հրամայականն էր: Ժողովուրդն անմիջապես արձագանքեց կազմակերպության ստեղծման առաջարկությանը: Մարտի 1-ին ստեղծվեց «Կռունկ» կոմիտեն («Կռունկ»՝ Комитет революционного управления Нагорного Карабаха): Անվանումն ընդունվեց արցախցի հանրաճանաչ քանդակագործ Արմեն Հակոբյանի առաջարկությամբ: Գիշերվա կեսին հենց հրապարակում էլ անցկացվեցին կոմիտեի (տարբեր աղբյուրներում՝ խորհուրդ) կազմի ընտրությունները:

«Կռունկ» կոմիտեն ողջ կազմով (թվով՝ 55 հոգի) հավաքվեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրության դահլիճում՝ կոմիտեի նախագահության կազմն ընտրելու համար: Ըստ Ռ-ազմիկ Պետրոսյանի՝ ընտրվեց 11 հոգուց բաղկացած նախագահություն (յուրաքանչյուր հիմնարկ-ձեռնարկությունից կամ բնագավառից՝ մեկական ներկայացուցիչ), որի կազմում ընդգրկվեցին Ստե-

փանակերտի շինանյութերի կոմբինատի տնօրեն Արկա-  
ղի Մանուչարովը, Ղարմետաքսկոմբինատի կուսկոմիտեի  
քարտուղար Ռոբերտ Քոչարյանը, Ղարմետաքսկոմբին-  
ատի տնօրեն Ռադիկ Աթայանը, շինվարչության պետ  
Ռոլես Աղաջանյանը, Ստեփանակերտի Ստ. Շահումյա-  
նի անվան կենտրոնական մարզադաշտի տնօրեն Ռազ-  
միկ Պետրոսյանը, Ստեփանակերտի նորոգման գրասեն-  
յակի տնօրեն Ռոբերտ Բաղդասարյանը, Գրողների միու-  
թյան ԼԳ մարզային բաժանմունքի պատասխանատու  
քարտուղար Վարդան Հակոբյանը, Ստեփանակերտի  
տեղարդկոմբինատի տնօրեն Սլավիկ Աղաջանյանը,  
Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահի տեղակալ  
Վլադիմիր Գևորգյանը, Ստեփանակերտի պետական  
մանկավարժական իստիտուտի դասախոս Համլետ Գրի-  
գորյանը և Ստեփանակերտի կոնդենսատորների գործա-  
րանի տնօրեն Սերգեյ Աբրահամյան:

Կոմիտեի նորընտիր նախագահ Արկաղի Մանուչարո-  
վի առաջարկությամբ նորաստեղծ ազգային գաղափարա-  
կիր կազմակերպությունն արեց առաջին քայլը. «Վաղը Մ.  
Գորբաչովի ծննդյան օրն է, շնորհավորանքով սկսենք մեր  
գործը, – ասաց նա, – որպեսզի մեր ազատության ձեռքբե-  
րումն էլ շնորհավորանքով դիմավորենք»:

Իսկ պարզ էր, որ ազատությունը պետք էր նվաճել, ոչ  
թե՝ ակնկալել:

«Կռունկի» կազմում աշխատանքային յոթ խումբ  
ստեղծվեց: Ռազմիկն ընտրվեց պաշտպանության և զեն-  
քի հայթայթման խմբի ղեկավար: Նախագահությունում  
նվիրյալներ էին հավաքվել: Նրանք անձնվեր էին, հան-  
դուզն արարքների հեղինակներ: Նրանց համար անհան-  
դուրժելի էր հատկապես, երբ մարդն իր հայրենի հողի

վրա էր հետապնդվում, իր հայ լինելու, հայեցի ապրելու, իր տունն ու օջախը հայեցի պահելու համար:

8

ԼՂԻՄ խորհրդի նստաշրջանի ընդունած որոշումը դեռևս գործելու ունակ չէր: Այդ դեպքում՝ ի՞նչ անել: Հնարը գտնվեց: Մարտի 3-ի երեկոյան ժամը 5<sup>00</sup>-ին, երբ հերթական անգամ մի բաժակ թեյի շուրջ գրույցի էին հավաքվել Ռ. Պետրոսյանի ղեկավարությամբ գործող կենտրոնական մարզադաշտի ներքևի մասնաշենքում, չորսով (Ռ-ազմիկ Պետրոսյան, Արկաղի Մանուչարով, Վաչագան Գրիգորյան, Ռուես Աղաջանյան), Ա. Մանուչարովն առաջարկեց կուսմարզկոմի պլենում հրավիրել, որը կհաստատի ԼՂ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը: Վաչագան Գրիգորյանը նույնպես նույն կարծիքն արտահայտեց. «Նստաշրջանն արինք, – վստահ ասաց նա, – բայց դա դեռ ոչինչ չի նշանակում: Այ, որ պլենումը հաստատի այդ որոշումը, դա մի մեծ ռումբ կլինի ԽՍՀՄ-ի համար, որովհետև մեր պետության պատմության ընթացքում դեռ ոչ մի կոմունիստ չի համարձակվել դեմ գնալ կուսակցական դիրքորոշմանը»:

Պայմանավորվեցին «Կռունկի» նախագահության անդամներից շրջաններ ուղարկել՝ կուսմարզկոմի արտահերթ պլենումը կազմակերպելու ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ տանելու համար:

Վ. Գրիգորյանը հուշեց, որ, ըստ կուսակցության կանոնադրության, արտահերթ պլենում հրավիրելու երեք տարբերակ կա: Նախ՝ այդ հարցը կարող է առաջադրել առաջին քարտուղարը, երկրորդ՝ արտահերթ պլենում է հրա-

վիրվում բյուրոյի երեք անդամի առաջարկությամբ, կամ էլ (որն ամենահավանական տարբերակն է)՝ մարզի կոմունիստների մեկ երրորդի պահանջով:

Ընտրվեց երրորդ տարբերակը: Որոշվեց այդ գործընթացն իրականացնել մարտի 6-ին և 7-ին: Ռոբերտ Բաղդասարյանն ու Մաքսիմ Միրզոյանն ուղարկվեցին Մարտակերտի (ուր կուսըջկոմի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանը համաձայնել էր աջակցել), Ռազմիկ Պետրոսյանն ու Ռուբեն Աղաջանյանը՝ Մարտունու, Վլադիմիր Գևորգյանը՝ Հաղբուֆի շրջաններ:

Արցախի ազգային ազատագրական շարժմանն ու զինված պայքարին մեծ խթան հանդիսացան այնպիսի գործիչների, որպիսիք են՝ Իգոր Մուրադյանը, Ջորի Բալայանը, Գազիկ Մաֆարյանը և Վաչե Սարուխանյանը, հանդիպումներն Արցախում (առանձնապես՝ Վաչագան Գրիգորյանի հետ, ու ելույթները՝ տարբեր շրջաններում):

Ասկերանի կուսըջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանն առաջարկեց մարդ չուղարկել Ասկերան, ուր ինքն ունի իր համախոհների խումբը (Կոմիտաս Դանիելյան, Սլավիկ Միրզոյան, Սլավիկ Առուշանյան): Շրջանում ստորագրահավաքը շատ արագ ու արդյունավետ անցավ, բնակչությունն իր անբեկանելի կարծիքն հայտնեց կուսմարզկոմի արտահերթ պլենում անցկացնելու անհրաժեշտության առթիվ:

Հաղբուֆում պլենումի կազմակերպմանը միտված աշխատանքներն իրականացրին Արթուր Սկրտչյանը, Վիգեն Գրիգորյանը, Էմիլ Աբրահամյանը, Գրիշա Բաղյանը և Սվետլանա Կասպարովան:

Ռ. Պետրոսյանի կարծիքով՝ կուսմարզկոմի պլենում

կազմակերպելու առումով Մարտունիում տիրող իրավիճակը բարդ էր ու հակասական: Նրա խոսքերով՝ կուսշրջկոմի առաջին քարտուղար Ստախոն Պետրոսյանը, թեև գործնական աջակցությամբ չմասնակցեց շրջանի գյուղերում իրականացված ստորագրահավաքի գործընթացին, բայց և՛ չխանգարեց: Կոմունիստների հետ տարվելիք աշխատանքներն իրենց վրա վերցրին Գրիգոր Ուլուբաբյանը, Վլադիմիր Խաչատրյանն ու Մանֆրեդ Բախշիյանը: Մարդիկ ուղարկվեցին շրջանի բոլոր գյուղերը՝ կուսակցական ակտիվի ժողովներ անցկացնելու և ստորագրահավաքի արդյունքներն ու ժողովների արձանագրությունները շրջկենտրոն հասցնելու համար: Շրջանի բոլոր կոմունիստները միակամ ու միակարծիք էին քննարկման ենթակա հարցի առթիվ՝ ԼՂ կուսմարզկոմի պլենումը պետք է հավանություն տա մարզխորհրդի փետրվարի 20-ի պատմական որոշմանը:

Մարտակերտում ստորագրահավաքները իրականացնում էին Վիգեն Շիրինյանը, Վազիֆ Գալստյանը, Ներսես Օհանջանյանը և ուրիշներ:

Մարզի բոլոր շրջանների գյուղերում ու շրջկենտրոններում անցկացված կուսակցական ակտիվի ժողովներին ու կոմունիստ բնակչության ստորագրահավաքին առնչվող փաստաթղթերն ի մի բերվեցին Ռ. Պետրոսյանի գլխավորած հիմնարկում (կենտրոնական մարզադաշտ), իսկ մարտի 9-ի առավոտյան, իր մեքենայով, Ռ. Պետրոսյանը (Ա. Մանուչարովի և Ռ. Բաղդասարյանի հետ) 13 հազար 500 ստորագրությունները, արձանագրությունները և գյուղերից բերված տարբեր բնույթի մյուս փաստաթղթերը հասցրեց կուսմարզկոմի շենք ու հանձնեց նամակների



բաժնի ղեկավար Աննա Գրունկինային: Բաժնի կողմից տրվեց համապատասխան ստացական:

9

Պլենում հրավիրելու առումով, թվում է, արված էր ամեն ինչ (կամ՝ գրեթե ամեն ինչ): Բայց, արդյո՞ք, միութենական ու հանրապետական կուսակցական ղեկավարությունը պատրաստ էր հենց այնպես հանձնվել:

Կենտրոնական ու հանրապետական իշխանությունների կողմից կրկին փորձ արվեց պահպանել պնդումը հիմնախնդրի սոցիալ-տնտեսական ուղղվածության վրա և քաղաքական դաշտից սոցիալ-տնտեսական ոլորտ բերել այն: Մշակվեց նույնիսկ սոցիալ-տնտեսական զարգացման արագացման հատուկ ծրագիր, որի նախագիծը Ստեփանակերտ հասցվեց մարտի 16-ին: Մարզ ժամանեցին նաև կենտրոնական մի շարք նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներ: Ոչ մի նման միջոցառում, սակայն, իրենց ընտրած ճանապարհից չէր կարող շեղել արցախցիներին: Հարցը քաղաքական էր, կոնկրետ՝ մարզի կարգավիճակի ու ենթակայության փոփոխում: Ուստի, ժողովուրդը ստիպված էր մարտի 15-ից կրկին համընդհանուր գործադուլ սկսել:

Մարզի կուսակցական ապարատն, այնուամենայնիվ, տեղի տվեց, և մարտի 17-ի ուշ երեկոյան կուսնարգկոմի արտահերթ պլենումն սկսեց իր աշխատանքը: Թեև բավական ցուրտ եղանակ էր, բայց պլենումի աշխատանքի ավարտին Ստեփանակերտի Վ.Ի.Լենինի անվան կենտրոնական հրապարակում հոծ բազմություն էր սպասում: Եվ նրանց սպասումն արդարացավ: Կուսակցական-կազ-

մակերպական մի շարք հարցերի հետ քննարկվեց նաև ԼՂ մարզխորհրդի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը, պաշտպանվեց արցախահայության կամքի միասնական արտահայտություն հանդիսացող այդ որոշման հիմնական դրույթը՝ հայ ժողովրդի արհեստականորեն իրարից տարանջատված երկու հատվածների վերամիավորման անհրաժեշտությունը:

Արդեն կեսգիշեր էր, երբ պլենումն ավարտվեց, և մասնակիցները միացան ցուցարարներին: Ամբիոն բարձրացավ Ասկերանի կուսըջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանն ու ասաց, որ այլևս անհանգստանալու կարիք չկա, անհրաժեշտ որոշումն արդեն ընդունված է, իսկ դա նաև հավաստում է այն հանգամանքը, որ մարզի կուսակցական օրգանները միակամ ու միակարծիք են արցախահայությանը հուզող հիմնահարցում:

Հավաքվածները ցնծությամբ դիմավորեցին այդ լուրը: Այնուհետև պլենումի հաղթական որոշման առիթով բոլորին շնորհավորեցին «Կռունկ» կոմիտեի նախագահ Ա. Մանուչարովը, մանկագիր Գուրգեն Գաբրիելյանը:

Մարդիկ դեռ երկար ժամանակ չէին ցրվում, շնորհավորում էին միմյանց, ասես Արցախյան հիմնահարցն իր վերջնական լուծումն էր ստացել արդեն: «Կռունկի» ամենասառաջին ու կարևոր հաղթանակն էր դա:

10

Արցախի աշխատավորները, ոգևորված նոր ձեռքբերումով, վերադարձան աշխատանքի, բայց մարտի 21-ին «Պրավդա» թերթում տպագրված «Հուլգեր և բանակաւնություն» հոդվածը կրկին հունից հանեց արցախահայու-

թյանը, հիասթափության նոր ալիք բարձրացրեց և մակ-  
ընթացված հուսառատությունը կրկին տեղի տվեց հուսա-  
լքությանը: Երեք օր անց, մարտի 24-ին, ընդունվեց ԽՍՀՄ  
Կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի՝ «Աղբրե-  
ջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մար-  
զի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995թթ. արա-  
գացնելու միջոցառումների մասին» համատեղ որոշումն  
ու, ըստ այդմ էլ՝ աղբրեջանական իշխանությունների  
տնօրինմանը հանձնվեց միութենական 450 միլիոն ռուբ-  
լին (որոշ աղբյուրներում՝ 400 մլն), որն էլ ծառայեցվեց  
մարզի աղբրեջանական բնակավայրերի կառուցապատ-  
մանը: Նույն՝ մարտի 24-ին, մեկ այլ «որակով» իրեն  
«զգացնել տվեց» նաև Աղբրեջանի Գերագույն խորհրդի  
նախագահությունը՝ օրենքից դուրս հայտարարվեց  
«Կռունկ» կոմիտեն, որն ավելի գրգռեց առանց այդ էլ  
հիասթափված ժողովրդին: «Արդար պահանջ՝ ոչ մի նա-  
հանջ» կարգախոսով, արցախահայությունը մարտի 24-ից  
կրկին դիմեց համընդհանուր գործադուլի, որը տևեց 12 օր:

11

Ստեփանակերտի քաղխորհրդի նստաշրջանում մար-  
տի 5-ին օրինականացված «Կռունկ» կոմիտեն, սակայն,  
երբեք չդադարեցրեց իր գործունեությունը: Ծարունակեց  
գործել այլ կերպի մեջ, այլ անվան տակ, թեև մի որոշ ժա-  
մանակաշրջան «իրադրության լիիրավ տեր» էր ԼՂ կուս-  
մարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանի առաջար-  
կությամբ իր գործունեությունը վերսկսած ՏՆօրենների  
խորհուրդը:

Ռ. Պետրոսյանի ու համախոհների նախաձեռնած

«Քաղաքացիական պաշտպանության շտաբն» արդյունավետ աշխատանք ծավալեց: Այդ անվան տակ փաստորեն գործում էր «Կռունկ» կոմիտեն, բայց այն էությամբ ու բնույթով բոլորովին նոր կազմակերպություն էր («Արցախի պաշտպանության շտաբ»), զբաղմունքը՝ զենքի ու զինամթերքի հայթայթում, բնակչության զինում ու բնակավայրերի պաշտպանության կազմակերպում:

Ի դեպ՝ Տնօրենների խորհրդի անդամները ևս հերթապահում էին Արցախի պաշտպանության շտաբում, որը տեղակայված էր Ստեփանակերտի կուսքաղկոմի դիմացի՝ Մոզիլևսկայա (այժմ՝ Նելսոն Ստեփանյան) 23 հասցեում գտնվող քառահարկ բնակելի շենքի առաջին հարկում (1989թ. հունվարին շտաբը Ստ. Շահումյանի անվան կենտրոնական մարզադաշտ տեղափոխվեց):

Պաշտպանության շտաբի պետ Ռազմիկ Պետրոսյանը, շտաբի պետի տեղակալ Ռոլես Աղաջանյանը, շրջկենտրոններում գործող մասնաճյուղերը, շարժման ակտիվիստներն ու մյուս համախոհներն ու համակիրները, համախմբվելով մեկ միասնական նպատակակետի շուրջ, շարունակեցին «Կռունկի» ազգանպաստ գործունեությունը:

12

Իր «դերի» բարձրության վրա գտնվող Վլադիմիր Մնացականի Խաչատրյանը (ընկերական շրջապատում՝ Վոլոդյան)՝ Պաշտպանության շտաբի Մարտունու պատասխանատուն, 1988-ին ընդամենը 38 տարեկան էր, մերթ՝ հախումն,



մերթ՝ համեստ բնավորության տեր: 1988-ը նրան ավելի կրակոտ դարձրեց, ավելի... նվիրյալ: Թերևս այսօր էլ ականատեսներն ու համախոհները դեռ քիչ դրվագներ են պատմում Արցախյան շարժման ընդհատակյա պայքարի տարիներին մարդկանց կատարածի մասին, շատ դեպքերի վերաբերյալ էլ պարզապես լռում են դեռ: Վոլոդյան այն նվիրյալներից էր, որոնց արածի ու ապրածի մասին այսօր էլ քիչ բան է հայտնի:

«Քաղաքացիական պաշտպանության շտաբի» անվան տակ գործող կազմակերպության Մարտունու մասնաճյուղը Վոլոդյան էր գլխավորում՝ աջակից ունենալով մի խումբ նվիրյալների՝ Մանֆրեդ Բախշիյան, Կամո Մաֆարյան, Գրիգոր Ուլուբաբյան, Գիշվա Յուրա, Անգելինա, Սուսաննա: Վ. Խաչատրյանի հետ նրանք միակամ ու միակարծիք էին մի բանում, որ խաղաղ ցույցերով ու հանրահավաքներով ոչ մի հարց էլ չի լուծվի, արյունալի ընդհարումն, այնուամենայնիվ, սպասվում էր, ուստի, անհրաժեշտ էր զինվել: Չենք ու զինամթերք հայթայթելու նպատակով Վոլոդյան քանիցս եղել էր Երևանում, Հայաստանի այլ քաղաքներում: Միշտ էլ, վերադարձին, իր իսկ նախաձեռնությամբ շրջանում ստեղծված պաշտպանական առաջին ջոկատներն ապահովվում էին անհրաժեշտ զենք ու զինամթերքով:

Մերտ կապը Ստեփանակերտում գործող պաշտպանության շտաբի հետ (շտաբի պետ՝ Ռ-ազմիկ Պետրոսյան) պահպանվում էր, ուստի, համագործակցությունը մշտական էր: Չենք ու զինամթերք ձեռք բերելու գործին էլ Ռ-ազմիկն ու Վոլոդյան ձեռնամուխ էին լինում երկուսով. միասին էին մեկնում Հայաստան և հաճելի ավարով վերադառնում:

Ռ. Պետրոսյանը սիրով է պատմում իր զինակից ընկե-

րոջ մասին, դառն ու սրտամաշ ավստանքով: Իսկ հիշողություններն առինքնող են, տպավորիչ:

Հիշում է, թե զենք ու զինամթերքի հերթական խմբաքանակն ինչպես պիտի տեղափոխեին Արցախ, երբ Արցախում պարետային ժամ էր, ամենուր՝ մարդորսություն:

...Անհրաժեշտ քանակությամբ զենքն արդեն ձեռք էր բերվել, երբ ավագի զինվորական կոչումով մի զինվորական մոտեցավ և 600 հազար խորհրդային ռուբլով երկու հրանոթ առաջարկեց, 120 արկի հետ: Տղաների «ախորժակը» բացվեց, բայց ամբողջ գումարն արդեն ծախսվել էր: Անմիջապես որոշեցին գումար ճարել: Վոլոդյա Խաչատրյանը գնաց Երևանում կոշկեղենի խանութի տնօրեն Ռազմիկ Դանիելյանի, իսկ Ռազմիկ Պետրոսյանը՝ ժողովրդական դերասան Սոս Սարգսյանի մոտ: Պահանջվող գումարն անմիջապես տրամադրվեց: (Պետք է ասել, որ Սոս Սարգսյանի գլխավորած հիմնադրամից միշտ էլ անհրաժեշտ գումար տրամադրվում էր թե՛ Բաքվից ու Սումգայիթից մազապուրծ մեր հայրենակիցներին օգնելու, թե՛ զենք ու զինամթերք գնելու համար):

Ձեռք բերված ողջ զենքն ու զինամթերքը «Էրեբունի» օդանավակայանի ղեկավարության տրամադրած ուղղաթիռով անմիջապես հասցվեց Հաթերք (հասկանալի պատճառներով՝ Ստեփանակերտին ավելի մոտ վայրէջք կատարել չէին կարող), ուր տրանսպորտային համապատասխան միջոցներով արդեն սպասում էին պաշտպանության շրջանային շտաբների պատասխանատուներն ու ջոկատների մի քանի հրամանատարներ:

Մարտակերտի պաշտպանության շտաբի պետ Վիգեն Շիրինյանն ստացավ իր բաժինը, իսկ ողջ մնացյալը՝ գիշերվա ընթացքում, հասցվեց Ստեփանակերտի մարզադաշտ: Դաշուշենի Սամվելն էր (Խաչատրյան) եկել, Տո-

ղից՝ Վիգեն Գրիգորյանը՝ Ռոբիկի հետ, Կաղարծիից՝ Լյովան, մյուսները: Ավտոդպրոցի վարորդ Երեմի բեռնատարով զենքը շրջաններ հասցնելու համար, այն պետք է դուրս բերվեր քաղաքից:

Մարգադաշտում Ռազմիկ Պետրոսյանը, Վոլոդյան, Ռոլես Աղաջանյանը, Կարապետյան Արկաղին հավաքվել՝ մտածում էին, թե ի՞նչ հնարքով այդքան քանկ «բեռն» անվնաս դուրս բերեն քաղաքից, երբ «Ջառին բաղ» տեղամասում խորհրդային ներքին զորքերի ու ադրբեջանական օմոնականների համատեղ պահակակետ էր տեղադրված: Չերբակավելուց չէ, որ վախենում էին տղաները: Այդքան դժվարությամբ ձեռք բերված զենքը հանկարծ չբռնագրավվի՞:

Հնարը, կարծես թե, գտնվեց: Կարապետյան Արկաղին էր, թե՞ Աղաջանյան Ռոլեսն առաջարկեց Ռազմիկի հին ծանոթին «օգտագործել»: Նրան բոլորն այդպես էլ դիմում էին՝ Անատոլի Վլադիմիրովիչ: Գնդապետ էր, ազգանունը ոչ ոք չգիտեր: Ամեն տեղ մուտքի արտոնություն ուներ, և՛ Շուշիում էր լինում, և՛ Աղդամում, իսկ, հիմնականում, մնում էր Ստեփանակերտում: Մարգադաշտ գալիս էր՝ բաղնիքում լողանալու համար: Շաբաթը մեկ՝ տեսածի ու լսածի մասին պարտադիր Մոսկվա էր հաղորդում՝ ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահի առաջին տեղակալին:

Մի անգամ տղաներին առաջարկեց աղջիկներով դուրս գալ քաղաքից, ինչ-որ աղբյուրի մոտ, գոնե մի քանի ժամով, կտրվել առօրյա հոգսերից: Լևոնի աղբյուրի մոտ էին: Չնկատեց էլ, թե ոնց էր տղաներից մեկը (բնության պահպանության վարչության պետ Գարիկ Գրիգորյանը) գաղտնի լուսանկարում իրեն՝ մերկ աղջկա հետ համբուրվելիս: «Պետք կգա, – ասաց Գարիկը, – եթե հանկարծ ուզի շանտաժի դիմել՝ մենք էլ մեր անելիքը կիմանանք»:

...Վոլոդյան ևս միանշանակ պաշտպանեց այդ առաջարկությունը, ուրիշ տարբերակ չկար, պետք էր նրան օգտագործել: Դիմեցին Անատոլի Վլադիմիրովիչին, իբր՝ իր ծանոթ աղջկա համար փայտ են ուզում տանել, խնդրում են պահակակետով անցկացնելու հարցում օգնի: Խոստացավ, և՛ օգնեց: Տղաները բեռնատարի թափքը լցրել էին զենքով, փայտով քողարկել բեռը և, անցկացնելով պահակակետը, Դաշուշենի Սամվելի մոտ բաժին-բաժին արին: Հրանոթներից մեկը Ռ-ազմիկ Պետրոսյանի՝ Ավետարանոց գյուղում տեղակայված ջոկատին բաժին ընկավ, մյուսը՝ Վոլոդյային, ով այդ հրանոթը հետագայում Հաղորոթի շրջանի Սարենշեն գյուղի ազատագրման ժամանակ օգտագործեց: Ռ-ազմիկի հրանոթը Դաշուշենի Սամվելը տարավ Շահումյան, ուր հաջողությամբ գործածեց պաշտպանական մի շարք մարտերում: (Այժմ այն, որպես ցուցանմուշ, տեղադրված է ԼԳՀ Ջոհված ազատամարտիկների թանգարանի մուտքի մոտ՝ Ստեփանակերտում):

13

...Երբ գնդապետ Անատոլի Վլադիմիրովիչն ավարտել էր իր առաքելությունն Արցախում և մարզադաշտ էր գնացել տղաներին հրաժեշտ տալու, շնորհակալություն հայտնելով աջակցության համար՝ անկեղծորեն ասաց, որ շատ գոհ է տղաներից:

Նստել՝ մի-մի բաժակ թեյ էին խմում, երբ Ռ. Պետրոսյանը հանեց լուսանկարներն ու ցույց տվեց նրան:

– Вы что, тоже разведчики? – անսկնկալի եկավ Անատոլի Վլադիմիրովիչը:



Ռ-ազմիկը նրան խնդրեց որոշ գաղտնիքներ բացել.

– Գուք, մինևույն է, գնում եք: Ես պատռում եմ այս լուսանկարները, բայց, ասացեք, խնդրեմ, ի՞նչ է սպասվում մեզ, ի՞նչ գիտեք մեր ապագայի մասին:

Անատոլի Վլադիմիրովիչն, իհարկե, կորցնելու ոչինչ չուներ և տղաներին ասաց ճշմարտությունն այն մասին, որ, ինչպես Սումգայիթում, մի շատ բնակավայրերում ևս սպասվում են արյունահեղություններ:

Հետագայում, երբ իրականություն դարձան Բաքվի, Գետաշենի, Շահումյանի, Հադրութի, Խոջալուի դեպքերը, պարզ դարձավ, որ Անատոլի Վլադիմիրովիչն, իրոք, որոշակի տեղեկատվության տիրապետում էր և ճշմարտությունն էր ասել տղաներին:

14

Արցախում ողջ խստությամբ գործում էր պարետային ժամը: «Անձնագրային ռեժիմի» ստուգման պատրվակով ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գորքերի զինծառայողներն ու մինչև ատամները զինված օմոնականներն ամեն տեղ մուտքի արտոնություն ունեին, անհիմն կերպով ձերբակալում էին երիտասարդներին ու զենք օգտագործելու ընդունակ բոլոր տղամարդկանց: Այնքան էին երես առել, որ նույնիսկ կանանց էին ձերբակալում: Շարժման ակտիվիստները շատ էին մտահոգված այդ խնդրով, ուստի, որոշեցին անհապաղ միջոցներ ձեռնարկել: Առաջադրանքը մշակվեց անմիջապես: Ռ-ազմիկ Պետրոսյանը ռադիոկապի երկու սարք ուներ: Մեկը տվեց Վոլոդյային և պատվիրեց երկու վստահելի մարտիկի հետ դարա-

նակալել նշված տեղամասում ու սպասել հաջորդ կարգադրությանը: Օրակարգում ԼՂ ՆԳՎ պետ Կովալյովի վերացման հարցն էր: Տղաների կարծիքով՝ նա էր արտոնում բոլոր ձերբակալությունները:

Կովալյովն ամեն առավոտ հաճախում էր մարզադաշտ, մի որոշակի ժամանակահատված մարզվելուց հետո լողանում բաղնիքում ու դուրս գալիս մարզադաշտից: Ռազմիկը մարզադաշտից Կովալյովի դուրս գալուց անմիջապես հետո ռադիոկապով անհապաղ պետք է հաղորդեր դարանակալ տղաներին:

Սովորականի պես այդ օրն էլ Կովալյովը եկավ ճիշտ ժամանակին, մարզվեց, լողացավ, բայց նախքան գնալը մոտեցավ մարզադաշտի տնօրենի առանձնասենյակին: Ռազմիկ Պետրոսյանից ներս մտնելու թույլտվություն ստանալուց հետո, խնդրեց մի բաժակ թեյ պատրաստել տալ իր համար: «Հոգնած եմ», – խոստովանեց: Հաջորդ պահին Կովալյովն անակնկալ ձևով անկեղծացավ. «Ձեզ՝ դարաբաղցիներիդ, երևի թվում է, թե ես եմ արտոնում բոլոր ձերբակալությունները: Ես մի ներքին զգացողությամբ գիտեմ, որ ձեր պայքարն արդար է, և մինչև հիմա ոչ մեկին չեմ ձերբակալել ու չեմ ձերբակալի: Գա անում եմ իմ տեղակալ Գոլևն ու մարզդատախսագի հայ և ադրբեջանցի երկու տեղակալները»:

Կովալյովի՝ մարզադաշտից հեռանալուց հետո Ռազմիկն իսկույն կապվեց Վոլոդյայի հետ և հայտնեց առաջադրանքի չեղյալ հայտարարելու մասին: Խոստացավ մանրամասնել առաջիկա հանդիպման ընթացքում:

Հետագայում, Շուշիի ազատագրումից հետո, երբ բան-

տում պահվող փաստաթղթերը տղաների ձեռքն ընկան՝ պարզվեց ողջ ճշմարտությունը: Կովալյովն, իրոք, ճիշտ էր ասում, ձերբակալվածների մասին պատմող բոլոր փաստաթղթերի տակ դրված էին ԼՂ ՆԳՆ պետի տեղակալ Գոլևի, ադրբեջանցի կաղ Մամեդովի և հայազգի փոխդատախազի ստորագրությունները:

15

Վլադիմիր (Վոլոդյա) Խաչատրյանի կյանքն ու գործունեությունը հազեցված էին նման բազում դրվագապատումներով: Ընդհատակյա պայքարին հաջորդեց զինված ընդհարումն ու բացահայտ պատերազմը, որին նա ևս իր անձնվեր մասնակցությունը բերեց: Բայց պատերազմի օրենքներն անողորք են, ու թեև գնդակը կույր է, ասում են, բայց 1992-ին, մարտադաշտում, գտավ նաև Վոլոդյային: Նա՝ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի ասպետը, Արցախյան ընդհատակյա գործող բանակի Մարտունու հատվածի առաջին ու գլխավոր պատասխանատուն էր: Բանակ, որն իր կազմում գործող պաշտպանական ջոկատների շարքերում շուրջ 10 հազար զինված աշխարհագորային էր համախմբել: Ընդհատակյա անհավասար պայքարում նրանք ընդհանուր գործի համար ոչինչ չխնայեցին, բայց արդյո՞ք ստացան այն, ինչի արժանի էին իսկապես...

16

Ռազմիկ Պետրոսյանը ցավով է հիշում հայրենյաց համար ընկածներին, գնահատում ազնվությունն ու բարու-

թյունը: Նրա կարծիքով՝ հիշատակման արժանի մարդիկ կան նաև հակառակորդի բանակում:

Ալավերդի Թեմուր օղլի Բադիբովը (1946-1992) Ադդամի ֆուտբոլային թիմի խաղացողներից էր: Ադդամի, իսկ հետո նաև՝ Ստեփանակերտի «Ղարաբաղ» թիմում լավ ֆուտբոլիստի համբավ ուներ Լյոնիկ Հովհաննիսյանը, ում միջոցով էլ ծանոթացել էին Ռ-ազմիկն ու Ալավերդին: Երկու թիմերի միջև ընթացող մրցապայքարն ավելի էր մտերմացրել նրանց:

Ժամանակները փոխվել էին: Ֆուտբոլային կրքերին փոխարինելու էին եկել ազգային, շատ հաճախ նաև՝ ազգայնական կրքերը: Ռ-ազմիկը հենց սկզբից ընդգրկվեց ընդհատակյա պայքարում: Ալավերդին ևս ժամանակի հետ համաքայլ էր. դեկավարելու էր այսպես կոչված Ադրբեջանի ժողովրդական ճակատի Ադդամի տարածքային կազմակերպությունը: Կարելի է ասել՝ այդ տարածքում մեծ էր նրա դերը:

Ազգամիջյան ընդհարումների հետևանքով երկու կողմից էլ պատանդներ ու ռազմագերիներ վերցնելը սովորական բնույթ էր կրում: Ինչպես Ստեփանակերտում ու այլ բնակավայրերում, այնպես էլ Ադդամում, հետագայում փոխանակելու նպատակով, պատանդներ էին պահվում: Այդպիսի մի ընդհարում էլ Ասկերանի շրջանի «Լեսնոյե» անվանյալ գյուղակի մերձակայքում տեղի ունեցավ, և, ի հետևանք, ադրբեջանցու սպանության մեղադրանքով Ադդամ տարվեց ստեփանակերտցի Ղարիբ Հարությունյանը: Ադդամում պահվում էին նաև Հովսեփավան գյուղի հիմնադիր Յուրի Զհանգիրյանը, Աշանի կոլտնտեսության

նախագահ Էմիլ Բալայանը, շատ ուրիշներ:

Եղբոր ճակատագրով հետաքրքրվող Լավրենտին տեղեկացրին, որ Ղարիբն, իրոք, գտնվում է Ադրամուն:

– Եթե Ռազմիկը ազատման խնդրանքով մի գրություն տա, բերես՝ եղբորդ կազատեմ, – ասվածին հավելեց Ալավերդին:

Ռազմիկն, անշուշտ, գրությունն անմիջապես տվեց. «Ալավերդի, եթե հնարավորություն ունես՝ Ղարիբին բաց թող, գա»:

Խնդրանքն ավելի քան պարզ էր: Ալավերդին էլ խոսքին տեր կանգնեց՝ գրությունն ստանալուն պես ազատ արձակեց Ղարիբին:

Ընդհանրապես, Ալավերդին շատ անգամ է մարդկային վերաբերմունք ցուցաբերել հայ ռազմագերիների նկատմամբ: Երևի թե դրան նպաստել է նաև նրա՝ ծագումով քուրդ լինելը:

Մի անգամ էլ, դեպքը Շուշիից հայերին լիովին վտարելուց հետո էր, Ալավերդին կապվեց Ռազմիկի հետ, թե՛ բարեկամուհին Շուշիում շատ վատ վիճակում է, հիվանդանոցում վիրահատման համար ոչ նորմալ պայմաններ կան, ոչ էլ՝ կարգին մասնագետներ: Խնդրեց, եթե հնարավորություն ունի՝ կազմակերպի բարեկամուհու վիրահատությունը Ստեփանակերտի հիվանդանոցում:

Ռազմիկը խոստացավ օգնել, ասաց, որ կոնկրետ պատասխան ստանալու համար երեկոյան կրկին զանգի, և անմիջապես գործի անցավ. դիմեց վիրաբույժ Վալերի Մարությանին: Երեկոյան հեռախոսազանգից հետո Ալավերդին արդեն լիովին համոզված էր, որ բարեկամուհու

վիրահատությունը հաջող կանցնի:

Ռ-ազմիկի հետ պայմանավորվածությունն ձեռք բերվեց հանդիպել «Ջառին բաղ» կոչվող տեղամասում: Շուշիից մինչև զինվորական պահակակետ հիվանդին իր մեքենայով բերեց որդին՝ Մուրշուղը, ուր, պայմանավորվածության համաձայն, սպասում էր Ռ-ազմիկը:

Վ. Մարությանն արդեն առանձին սենյակ էր նախապատրաստել և համապատասխան սարքերով ու բուժանձնակազմով պատրաստ էր անցնել գործի: Վիրահատությունը սպասվածից ավելի հաջող անցավ: Հիվանդասենյակում սպասեցին մինչև երեկո: Մուրշուղը, պարզ է, Շուշի վերադառնալ չէր կարող: Ռ-ազմիկը նրան առաջարկեց իր հետ տուն գնալ: Մուրշուղն առարկեց.

– Եթե կարող ես մեքենադ թողնել այստեղ՝ կքնեմ մեքենայի մեջ:

Այդպես էլ արվեց:

Մուրշուղը մոր հետ Ստեփանակերտում մնաց երեք օր: Հիվանդի առողջական վիճակն արդեն բավականին լավ էր, ոչ մի վտանգ նրան այլևս չէր սպառնում:

Որպես լավության փոխհատուցում՝ Մուրշուղը փող առաջարկեց, բայց և՛ վիրահատող բժիշկը, և՛ միջնորդը հրաժարվեցին վերցնել այն: Իսկ պատասխանն էլ նույնքան պարզ ու հասկանալի էր. «Մեզ մոտ՝ Ստեփանակերտում, փողով չեն վիրահատում»:

«Ջառին բաղ» տեղամասին մերձակա զինվորական պահակակետում իրար հրաժեշտ տալուց հետո Ռ-ազմիկը նոր միայն թեթևացած շունչ քաշեց. ամեն ինչ այդպես բարեհաջող ավարտվեց, առանց անհարկի միջադեպի:

Մի երեք-չորս օրից զանգեցին Ռ-ազմիկին ու խնդրեցին

կրկին նույն պահակակետը գալ: Որսի երկու նապաստակով նրան սպասում էր Մուրշուդը: Երախտագիտության յուրօրինակ ձև է: «Փող չվերցրին, գոնե նապաստակները կընդունեն որպես մաղարիչ», – երևի մտածել էր նա:

Ռ-ազմիկն Ալավերդու հետ հետագայում ևս առնչություններ ունեցավ, որոնց շնորհիվ որոշակիորեն թեթևացավ հակամարտության երկու կողմերում արգելափակվածների ծանր, անտանելի վիճակը:

Պետք է խոստովանել, որ Ալավերդին միշտ էլ պատրաստակամ էր և ամեն առաջարկության հնարավորինս ընդառաջում էր: Խոջալուի դեպքերի ընթացքում էլ Ալավերդին իրեն խիստ մարդկայնորեն դրսևորեց: Օժտված լինելով վսեմ արժանիքներով, նա իրեն իրավունք վերապահեց ժամանակին հայտարարել, որ Խոջալուի ողբերգության առնչությամբ հայերը ոչ մի մեղք չունեն: «Հայկական կողմը համապատասխան միջանցք էր տրամադրել խաղաղ բնակչության անվնաս դուրս բերման համար: Եթե չեն օգտվել ընձեռված հնարավորությունից, ավելին, սաղրիչ գործողությունների են դիմել իրենք՝ աղբբեջանցիները, հայերն ի՞նչ մեղք ունեն», – իր ցեղակիցների ճակատին էր շարտել նա:

Իհարկե, նման հայտարարություններն անհետևանք չէին կարող մնալ: Ալավերդին զոհվեց ականի պայթյունից, 1992-ին, սեփական զինուժի կողմից վերահսկվող տարածքում, և, շատ հավանական է, որ դա կազակերպված բնույթ է կրել, որովհետև նրա շատ տեսակետներն ու կարծիքները ժամանակին չեն կիսվել իր համախոհների ու զինակիցների կողմից:

Ըստ Ռ-ազմիկ Պետրոսյանի՝ ԼՂ Ազգային խորհրդի ստեղծումը ժամանակի պարտադրանքն էր: Վերացվել էին կուսակցական ու խորհրդային իշխանական լծակներն Արցախում, մտցվել էր կառավարման հատուկ ձև, որն էլ ոչ բոլոր դեպքերում էր արդարացնում իրեն, և՛ մի կարճ ժամանակաշրջան գոյատևեց:

Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ ՀՀԸ-ն Արցախում ստեղծեց «Միացում» կազմակերպությունը՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, ի հակակշիռ որի՝ գործում էր ՀՅԴ-աշնակցության տեղային կազմակերպությունը: Եվ որպեսզի Շարժումը չպառակտվի՝ Ռ-ազմիկ Պետրոսյանի առաջարկությամբ նախաձեռնվեց Ազգային խորհրդի ստեղծման գործընթացը: Այդ նախաձեռնությունը պաշտպանեցին Արկադի Մանուչարովը, Վաչագան Գրիգորյանը, Ռուլես Աղաջանյանը, Համլետ Գրիգորյանը և ուրիշներ:

ԼՂ բնակչության լիազոր-ներկայացուցիչների համագումարում ստեղծվեց Ազգային խորհուրդը, որն իր կազմի մեջ ընդգրկեց երկրամասի բոլոր կարգի ղեկավարներին, համախմբեց մեկ միասնական նպատակի համար պայքարող ժողովրդին, և Շարժումը չպառակտվեց:

ԼՂ բնակչության լիազոր-ներկայացուցիչների Համագումար կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծվեց կազմկոմիտե:

Համատեղ նիստի արձանագրությունն իրենց կնիքներով ու ստորագրություններով վավերացրին՝

Ստեփանակերտի կուսքաղկոմի քարտուղար Վ. Աթաջանյանը,



Голосовали : за \_\_\_\_\_ член \_\_\_\_\_

Секретарь Степанакертского городского комитета КПСС Кочарян А. А. Председатель Степанакертского райисполкома \_\_\_\_\_

Секретарь Асканянского райкома партии Кочарян \_\_\_\_\_ И. О. Председатель Асканянского райисполкома \_\_\_\_\_

Секретарь Мардакертского райкома партии \_\_\_\_\_ Председатель Гадрутского райисполкома \_\_\_\_\_

Секретарь Мардакертского райкома партии Кочарян В. М. Председатель Мардакертского райисполкома \_\_\_\_\_

Секретарь Мартунинского райкома партии Кочарян В. С. Председатель Мартунинского райисполкома \_\_\_\_\_

Секретарь Асканянского райкома комсомола \_\_\_\_\_ Председатель Асканянского райисполкома \_\_\_\_\_

Председатель Степанакертского городского Совета ААНД "Миацум" \_\_\_\_\_ Кочарян Р. С.

Ստեփանակերտի քաղաքովնի նախագահ Մ. Միրզյանը,  
 Ասկերանի կուսըջկովնի քարտուղար Վ. Քոչարյանը,  
 Ասկերանի շրջգործկովնի նախագահի պաշտոնակատար Ա. Աղաբաբյանը,  
 Հաղբուքի կուսըջկովնի քարտուղար Գ. Բաղյանը,  
 Հաղբուքի շրջգործկովնի նախագահ Է. Նավասարդյանը,

Մարտակերտի կուսշրջկոմի քարտուղար Վ. Գաբրիելյանը,

Մարտակերտի շրջգործկոմի նախագահ Վ. Ջավադյանը,

Մարտունու կուսշրջկոմի քարտուղար Վ. Գրիգորյանը,  
Մարտունու շրջգործկոմի նախագահ Ս. Մեյրանյանը,  
ԼՂ արհմիությունների մարզխորհրդի նախագահության նախագահ Ս. Դավթյանը,

ԼՂ կոմերիտմարզկոմի քարտուղար Մ. Մուսայեյանը,  
Հայոց Արցախյան «Միացում» ժողովրդական շարժման Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Ռ. Քոչարյանը:

Կազմկոմիտեում ընդգրկվեցին Ս. Այդինյանը, Վ. Հակոբյանը, Ս. Առուշանյանը. Կ. Բաբուրյանը, Մ. Բախշիյանը, Ն. Դադայանը, Ռ. Քոչարյանը, Հ. Մելքունյանը, Ս. Մոսունցը, Յու. Ներսիսյանը, Օ. Օսիպյանը, Ռ. Պետրոսյանը, Շ. Պետրոսյանը, Ս. Սարգսյանը, Է. Սաֆարյանը:

18

Արցախում խորհրդային մարմինների վերացումից հետո ստեղծված ոչ մի կազմակերպություն ու գործադիր իշխանությամբ օժտված մարմին ի գորու չեղավ թեթևացնել ժողովրդի ծանր վիճակը, կարգավորել երկրամասի խաղաղ գոյակցությունը:

Քաղաքացիական անհնազանդության դիմաց ժողովրդի պայքարի հետագա ընթացքը կարգավորելու նպատակով ստեղծված կազմակերպությունները («Կռունկ», «Միացում», Տնօրենների խորհուրդ, Ազգային խորհուրդ և այլն) որոշակիորեն կարողացան դեկավարել Շարժման

խաղաղ ընթացքը: Իսկ միութենական կենտրոնի ու ադրբեջանական իշխանությունների կողմից մոզոնված ու Արցախ ներմուծված իշխանական նոր մարմինները (Հատուկ կառավարման կոմիտե, Կազմկոմիտե և այլն) միայն թուլացրին ժողովրդի վստահությունը:

Սուվգայիթյան եղեռնագործությունից, Գետաշենի ենթաշրջանի, Շահումյանի ու Հադրութի շրջանների խաղաղ բնակավայրերի տեղահանությունից հետո հիասթափված ժողովուրդը միութենական կենտրոնից ոչ մի ակնկալիք չունեք այլևս: Ու թեև՝ հիասթափված, քայքայված ու վստահ՝ իր ուժերի վրա: Եվ իրականացավ Ռազմիկ Պետրոսյանի գլխավոր կանխատեսումը՝ «առանց զենքի չի լինի փրկություն»:

Համախմբվեց ժողովուրդը, դարձավ մի բռունցք, դիմակայելու՝ կենդանի ուժով բազում անգամ գերազանցող ու մինչև ատամները զինված թշնամուն:

Ժամանակը ցույց տվեց, որ ո՛չ կենդանի ուժի զգալի առավելությունը, ո՛չ լավ զինված լինելը հաղթանակ նվաճելու գլխավոր երաշխիքը չեն դեռևս: Գլխավոր զենքը, որից զուրկ էր մեր թշնամին, հայրենի հողի համար մարտնչելու ոգին է: Այդ ոգին արցախցի զինվորին օգնեց կանգնել մինչև վերջ և Ադրբեջանի թշնամական բոլոր նկրտումները հեռու վանեց մեր սահմաններից:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

### **ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ**

1

Պատերազմի ուրվականն օր-օրի մոտենում էր: Ռազմիկ Պետրոսյանն զգում էր դա և պատրաստվում, պատգամավորական գործունեությանը զուգահեռ, մինչև այն պահը, երբ սպասելն այլևս անհնար ու անընդունելի էր: Թողեց քաղաքական դաշտն ու իր ջոկատով միացավ զինված պայքարին: Մինչ այդ նա կռվելու ահագին փորձ ուներ. ինչպես գաղտնի, այնպես էլ բացահայտ զինված ընդհարումների ընթացքում կարողացել էր իր զինակիցների հետ ինքնադրսևորվել: Քիրսի լանջերին մղված փոխհրաձգություններին փոխարինեցին ռազմական բացահայտ գործողությունները, և Ռազմիկն իր ջոկատով կռվեց Գետաշեն-Մարտունաշենում, Մանաշիղում, Շահումյանի մյուս գյուղերում:

Կուշչի-Արմավիր գյուղի մերձակաքում դարանակալ ադրբեջանցիների կողմից Շահումյանի կուսըջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Աղաջանյանի և շրջխորհրդի գործկոմի նախագահ Շահեն Մեղրյանի գերեվարվելուց հետո Շահումյանի պաշտպանության գործը զգալիորեն բարդացավ: Վլադիմիրի եղբայրը՝ ՆԳ Ասկերանի շրջանային բաժնի պետ Կառլեն Աղաջանյանն անմիջապես Շահումյան շտապեց՝ պաշտպանական հետա-

գա գործընթացին աջակցելու համար:

Ստեղծված իրադրությունը ստիպեց Արցախի պաշտպանության շտաբի պետ Ռ-ազմիկ Պետրոսյանին՝ Շահումյան շտապել իր 40 մարտիկներով: Տեղ հասնելուն պես՝ Ռ-ազմիկը ներկայացավ Կ. Աղաջանյանին, ով նրան խնդրեց իր ջոկատով անցնել Ղարաչինար և ծանոթանալ պաշտպանության դրվածքին:

## 2

1990-ի հունվարի 12-ին ադրբեջանցիները Թողան գյուղի կողմից, իբր, պատրաստվում էին հարձակվել Ղարաչինարի վրա, բայց շարժվեցին բոլորովին հակառակ ուղղությամբ, դեպի Մանաշիդ: Ռ-ազմագործողությանը մասնակցում էին 500 զինված ադրբեջանցիներ: Ռ-ազմիկն իսկույն 20 հոգու ուղարկեց գյուղի պաշտպաններին օգնելու, վեցին թողեց դիրքերում, որպեսզի թույլ չտրվի Կուշչի-Արմավիրի կողմից լրացուցիչ օգնական ուժեր գան: Ջոկատի մնացած տղաներով Ռ-ազմիկը փորձում էր գրավել մարտական կարևոր նշանակություն ունեցող մի փոքրիկ բարձունք, որտեղից վեց զինված ադրբեջանցիներ անընդհատ կրակի տակ էին պահում մեր դիրքերը: Մոտ 80-100 մետրի վրա ուժեղ փոխհրաձգություն սկսվեց, որը թույլ չէր տալիս ավելի մոտենալ: Ռ-ազմիկը տղաներին հրահանգեց գաղտնի շրջանցել ադրբեջանցիներին, իսկ ինքը շարունակեց մնալ նախկին դիրքում և կրակել կարաբինից: Մերոնց դիրքն արդեն հարմար էր՝ բարձունքն իրենց հսկողության տակ էին վերցրել:

Ադրբեջանցիները, սակայն, չէին դադարեցնում գրոհ-

ները: 200 հոգուց բաղկացած մի նոր խումբ էր առաջ շարժվում՝ գրահապատված տրակտորների ուղեկցությամբ: Ռ-ազմիկը ձեռքի հակատանկային նռնականետից կրակ արձակեց տրակտորներից մեկի վրա, որն իսկույն բոցավառվեց: Ուժգին պայթյունն ու աղբբեջանցիների վրա թափվող կրակե շիթերը սարսափ էին տարածում նրանց մեջ: Երկրորդ տրակտորի խփվելուց հետո ահաբեկված աղբբեջանցիները փախան ու դիրքավորվեցին մոտակայքում:

Գրոհը կասեցված էր: Հարմար պահ էր ավելի տիրապետող դիրք ունեցող բարձունքում դիրքավորվելու համար: Հունվարյան ձյունը մինչև գոտկատեղ էր հասնում: Ռ-ազմիկն առաջ անցավ 50 մետր ու պառկեց ձյան մեջ: Կես ժամից փամփուշտները վերջացան, բայց ետ դառնալ չէր կարող, հակառակորդի կրակի տակ կհայտնվեր: 13-14 տարեկան մանաշիղջի մի երեխա նրան փամփուշտներ հասցրեց՝ խուսանավելով աղբբեջանցիների կրակոցներից:

Էրբեջից ձեռնարկված հայերի գրոհը վճռական դեր խաղաց: Թշնամին, մարտի դաշտում թողնելով 30 սպանված, դիմեց փախուստի: Գերի վերցվեց հինգ աղբբեջանցի: Որպես ռազմավար՝ ահագին զենք առգրավվեց:

Մի քանի օր Ղարաչինարում մնալուց հետո Ռ-ազմիկ Պետրոսյանը վերադարձավ Ստեփանակերտ՝ Ազգային խորհրդի նիստին մասնակցելու համար, և մի քանի օր անց՝ 1990-ի հունվարի 18-ին ձերբակալվեց Ստեփանակերտի մարզադաշտի իր առանձնասենյակում՝ անօրեն զենք պահելու մեղադրանքով:

Ռ-ազմիկի՝ կալանքի տակ գտնվելու ողջ ժամանակահատվածը ազատության համար պայքարի ուրույն ձև ու բնույթ էր ստացել: Ե՛վ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորների միջնորդագրերը, և՛ ժամանակի մամուլի հրապարակումները, և՛ եղբոր՝ Ջարմիկ Պետրոսյանի ու ընկերական շրջապատի գործադրած ջանքերը կարողացան ծառայել նպատակին. Ռ-ազմիկ Պետրոսյանը կրկին հայտնվեց ազատության մեջ: Մի որոշ ժամանակ մնալով Երևանում՝ ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին գորքերի ու ադրբեջանական ՕՍՈՆ-ի վերահսկողությունից հեռու, Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորի կարգավիճակում զբաղվեց պատգամավորական բուռն գործունեությամբ, բայց քանի որ Արցախում բավականին բարդ իրավիճակ էր տիրում՝ վերադարձավ:

Ադրբեջանական ՕՍՈՆ-ն ու ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին գորքերի զինծառայողները բառացիորեն սանրում էին հայաբնակ վայրերը, ձեռքակալություններին զուգակցվում էին թալանն ու ահաբեկչական այլ ձևեր ու մեթոդներ: Արցախի պաշտպանության շտաբը զինված գաղտնի ջոկատներ էր պահում երկրամասի շրջաններում և վերահսկվում էր ադրբեջանաբնակ գյուղերում կատարվող բոլոր տեղաշարժերը:

Նկատել էին, որ Մարտունու շրջանի Ղարադաղլու գյուղում ադրբեջանցի զինյալ հրոսակներ են հավաքվել և շրջակա հայաբնակ Կաղարծի, Պառավաթումբ, Մուշկա-

պատ, Սպիտակաշեն, Հաղորտի, Աշան գյուղերից անասուններ գողանալու գործով էին զբաղված: Միաժամանակ՝ նաև հայ գյուղացիների սպանության համար էին անպատիժ մնում: Ռ-ազմիկն այնտեղ ուղարկեց Գաշուշենի Սամվելի ուժեղացված ջոկատը՝ նախահարձակներին արժանիորեն պատժելու և գողացված անասունները վերադարձնելու համար: Կադարծիում պաշտպանական լավ գործընթաց էր կազմակերպվել դպրոցի տնօրեն, ջոկատի հրամանատար Արմեն Սարգսյանի կողմից: Գործողությունը հաջող ընթացք ստացավ: Ավելին՝ Արմենի տղաները Ռ-ազմիկի տված «Մոսիմ» հրացանով 1,5-2 կմ հեռավորության վրա կրակի տակ էին պահում Ղարադաղլուի աղբբեջանցիներին: Շուշիից անընդհատ հարձակումներ էին լինում Քարին տակի վրա, Ավետարանոցից ու Սղնախից Ռ-ազմիկը զինված օգնություն էր ուղարկում Քարին տակ, ուր տղաները կռվում էին բացառիկ քաջությամբ և ետ մղում 700-800 զինված աղբբեջանցիների անընդմեջ հարձակումները: Այդ գյուղերում տեղակայված ջոկատները հսկում էին գյուղացիների անվտանգությունը՝ Քիրսի ստորոտում գարնանային ու ամառային դաշտային աշխատանքների իրականացման ժամանակ, ինչպես նաև՝ բերքահավաքի օրերին: Արցախի պաշտպանության շտաբի՝ Ավետարանոցում տեղակայված զինված ջոկատները օգնության անհրաժեշտության դեպքում ահազանգ ստանալով՝ անմիջապես մեկնում էին երկրամասի համարյա բոլոր շրջանները, ոչ միայն գյուղերի պաշտպանության, նաև թալանչիական արշավներ կազմակերպող աղբբեջանաբնակ գյուղերի բնակիչներին ահաբեկելու գործողություններ էին իրականացվում:



1991-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ադրբեջանցիները համարյա ամեն օր Շուշիից և Ստեփանակերտը շրջապատող ադրբեջանաբնակ գյուղերից (Կրկժան, Բյոսալար, Մալիբեկլու, Ջամիլու, Խոջալու) հրթիռահրետակոծում էին մայրաքաղաքը: Թուրքերն այնքան էին լկտիացել, որ հրթիռակոծում էին նաև ԽՍՀՄ զինված ուժերի Անդրկովկասյան զինվորական օկրուգի՝ Ստեփանակերտում տեղակայված 399-րդ մոտոհրաձգային գնդի տարածքը:

Անհրաժեշտություն առաջացավ այդ կրակակետերի վնասագերծման գործընթացն արագացնել: 1991-ի դեկտեմբեր, 1992-ի հունվար-մայիս ամիսների ընթացքում հայ ինքնապաշտպաններին հաջողվեց վերացնել այդ չարիքը, և Ստեփանակերտը վերջնականապես ազատվեց Շուշիից ու շրջակա գյուղերից անընդհատ տեղացող հրթիռահրետակոծումներից, բայց այս անգամ էլ ռմբահարվում էր հակառակորդի օդուժի կողմից:

Ռ-ազմիկ Պետրոսյանի ջոկատը քանակապես զգալիորեն նվազել էր, ուստի, հարկ էր՝ անհապաղ զբաղվել համալրման գործով: Երբ ջոկատի կազմը հասավ 50-ի՝ մարզադաշտի տարածքում սկսեցին լրջորեն պարապել: Կարևոր ուշադրություն էր դարձվում հատկապես տղաների ֆիզիկական կոփվածությանը, մարտավարական պատրաստվածությունների պատշաճ մակարդակով անցկացմանը:



7

ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը շտապեցնում էր և արդեն որոշակի պատրաստություն ստացած տղաները մեկնեցին ռազմա-

ճակատի Մարտակերտյան ուղղություն: Շտաբը տեղակայված էր Գրմբոն գյուղում, ուր Ռ-ազմիկն իր ջոկատով ներկայացավ հունիսի 9-ին: Մարտակերտի շտաբի պատասխանատու Սեյրան Օհանյանը կարգադրեց Ռ-ազմիկին՝ իր ջոկատով անհապաղ գնալ Մոխրաթաղ: Այնտեղ տեղակայված Վլադիմիր Բալայանի ջոկատի հետ տղաները հանդիպեցին Մոխրաթաղի մերձակայքում: Գյուղում խաղաղ բնակիչներ չկային:

Չոկատը զբաղեցրեց Մոխրաթաղի մերձակա հեռուստաաշտարակի առջևի խրամատներն ու դիտակետերը:

Հաջորդ օրվա վաղ առավոտյան թշնամին սկսեց արկակոծել մերոնց դիրքերը: Մեր հրետանու կողմից պատասխան կրակ էր բացվում «խնայողության ռեժիմով», իսկ աղբբեջանցիներն արկերն արձակում էին առանց դադարի: Տղաների տրամադրության տակ գտնվող միակ տանկը լավ քողարկված էր, որի թնդանոթն ուղղված էր դեպի հակառակորդի դիրքերը և ժամանակ առ ժամանակ արկեր էր արձակում: Երրորդ օրը միայն աղբբեջանցիները որոշեցին գրոհ ձեռնարկել: Մեր դիրքերի ուղղությամբ շարժվեց մեկ «S-72» տիպի տանկ, որն անմիջապես խփվեց: Թշնամու հետևակը ևս զոհեր տալով (մոտ 15 մարդ) փախուստի դիմեց, սակայն չէր դադարում ականանետային կրակը: Սեկշարաթյա անօգուտ հրետակոծություններից ու հարձակումներից հոգնած հակառակորդը փոխեց հարձակման ուղղությունը:

8

Ռ-ադիոկապով հաղորդում տրվեց ամրացնել Մաղավուզի պաշտպանությունը: Աղբբեջանցիները մեծ ուժեր էին կուտակել այդ ուղղությամբ: Սեյրան Օհանյանը

հրամայեց նոնականետները տեղադրել հարմար դիրքերում: Երկու նոնականետ Ռ-ազմիկը, երեքը՝ Գ-իրոն (Վլ. Բալայանի ջոկատ) տեղադրեցին ու զեկուցեցին պատրաստ լինելու մասին:

Մաղավուզցիները լավ էին պաշտպանվում, բայց չէին նկատում, թե ադրբեջանցիներն ինչպես են մանևրելով անցնում դեպի գերեզմանատան կողմը, որ շրջապատեն գյուղի պաշտպաններին: Հեռադիտակով այդ ամենը նկատելի էր Ռ-ազմիկի ջոկատի զբաղեցրած դիրքից, անմիջապես էլ ռադիոկապով հայտնվեց այդ մասին, բայց մաղավուզցիները ընդամենը մեկ օր կարողացան դիմանալ: Որոշ ժամանակ անց Գ-իրոն իր ջոկատի դիրքերից եկավ Ռ-ազմիկի մոտ և ասաց, որ դիրքերը թողնելու հրաման են ստացել, որովհետև Մաղավուզը գրավվել էր:

Ռ-ազմիկը չէր ուզում լքել իր դիրքերը, ուստի, խնդրեց հնարավոր ամեն միջոց ձեռնարկել Մաղավուզը պահելու համար: Անհրաժեշտության դեպքում իր ջոկատով կարող էր օգնության ձեռք մեկնել: Նրա խնդրանքը հաղորդվեց ռադիոկապով, բայց հրամանատարության կողմից հավանության չարժանացավ:

Ռ-ազմիկը կարգադրեց զինամթերքը բարձել բեռնատար մեքենան ու շտապ հեռանալ, քանի որ արդեն հրահանգ կար, որ հակառակորդը շարժվում է Մեծ-շենի վրա: (Խոհարար Շոշը՝ շոշեցի վարորդ Վալերիկը, հավով փլավ էր եփել, բայց չհասցրին նույնիսկ համտեսել):

Մթնժողել էր, հետև էլ՝ անձրև էր սկսել: Յեխոտ ճանապարհով դժվարացել էր ընթացքը, ուստի, բեռնատարը ստիպված էին կապել տանկից, և, ըստ հրահանգի, բոլորը շարժվեցին դեպի Մեծ-շեն, իսկ Ռ-ազմիկն իր խմբով՝ Մոխ-

րաժաղի վերևի սարից՝ կարճ ճանապարհով՝ դեպի Կուսապատ: Կեսգիշեր էր արդեն, և ընդամենը 5 կմ էին անցել, երբ շտաբից ռադիոկապի կանչ ստացավ: Մեյրան Օհանյանը Ռ-ազմիկին հայտնեց, որ պետք է կրկին վերադառնա ու գրավի Մոխրաթաղը, քանի որ Մաղավուզը պահելու հնարավորություն է ստեղծվել: Ռ-ազմիկն անմիջապես լուրը հայտնեց ջոկատայիններին: Տղաները վրդովված էին այն պատճառով, որ կարող էին պաշտպանել գյուղը, բայց չթողեցին: Իսկ հիմա, երբ սովածությունից ու հոգնածությունից լրիվ հյուծված են՝ կարգադրում են վերադառնալ: Ռ-ազմիկն ասաց, որ դա հրաման է, իսկ հրամանը չի քննարկվում: 60-70 հոգուց ընդամենը 12-ը համաձայնեց Ռ-ազմիկի հետ վերադառնալ: Վերցրին զենքերն ու ճանապարհ ընկան: Թեև ետդարձի ճանապարհն ավելի հեշտ էր հաղթահարվում, բայց հոգնածությունը զգացնել էր տալիս: Եվ միայն լուսաբացին, ժամը չորսին մոտ կարողացան հասնել Մոխրաթաղից վերև ընկած տարածքն ու սպասողական դիրք գրավեցին: Չգիտեին՝ հակառակորդը գյո՞ղ է մտել, թե՞ ոչ: Կես ժամ անց ջոկատի մյուս տղաները ևս միացան իրենց հրամանատարին: Այդ քայլը ոգևորեց բոլորին: Որոշեցին անմիջապես գրոհել գյուղի վրա: Ռ-ազմիկը նախ չորս մարտիկ ուղարկեց՝ գննելու տարածքը: Հետախույզները վերադարձան մեկ ժամից ու զեկուցեցին, որ գյուղից ներքև հակառակորդի մեկ զրահամեքենա կա ու մոտ 30 զինվոր: Հրամանատարը 30 հոգու (երկու նռնականետով ու մեկ գնդացրով) ուղարկեց հակառակորդի ուղղությամբ, իսկ մյուսները, շրջանցելով Մոխրաթաղը՝ շարժվեցին դեպի իրենց նախկին դիրքերը: Լավ էր՝ թշնամին այդ ուղղությամբ դեռ առաջ չէր շարժվել: Մոխրաթաղի ներքևում գործողությունը հաջող ընթացք

ստացավ: Խուճապի մատնված աղքեցանցիներից 14-ը սպանվեց, մյուսները փախան, չհասցրին նույնիսկ կրակել: Ջրահամբեռնան ևս մնաց, որը մինչ այդ արդեն խփվել էր մեր տղաների կողմից:

Դիրքավորվեցին նախկին դիրքերում: Մաղավուզից դեռ շարունակվում էին կրակոցները: Փլավն էլ արդեն լավ եփվել էր, և Ռ-ազմիկը տղաներին հերթով, չորս-չորս ուղարկեց ճաշելու: Մաղավուզի կողմից տարածվող աղմուկից հասկանալի դարձավ, որ մեր երկու տանկերը կրակելով մտել են գյուղ: Հետո պարզվեց, որ դրանք 26-ի Յուրայի (Հովհաննիսյան) տանկերն են, որոնք դուրս են բերվել Քելրաջարի (Քարվաճառ) ճակատից ու հասցվել Մաղավուզ: Մոխրաթաղ վերադառնալը նպատակ էր հետապնդում թույլ չտալ, որ աղքեցանցիները Մաղավուզը շրջանցեն Մոխրաթաղով:

Յերեկվա ժամը 11-ին հրաման ստացվեց՝ Մոխրաթաղից հեռանալ դեպի Մեծ-շեն: Ռ-ազմիկին կանչեցին Մարտակերտի պաշտպանության շտաբ: Սեյրան Օհանյանի մոտ հավաքվել էին բոլոր ջոկատների հրամանատարները: Նա քարտեզի վրա ցույց տվեց անտառային մի հատված, Մեծ-շենի մոտ, և ասաց, որ այդտեղ պետք է դիրքավորվել և կասեցնել հակառակորդի առաջխաղացումը: Նա նաև ասաց, որ եթե աղքեցանցիները հասնեն Մարտակերտ-Քելրաջար ավտոխճուղին, ապա Կուսապատում և Ներքին Հռոսթաղի մոտակայքում գտնվող Սամվել Կարապետյանի ջոկատը կհայտնվի շրջապատման մեջ, ուստի, առաջարկվեց նշված վայրում 3-4 կմ երկարությամբ դիրքավորվել և թույլ չտալ, որ թշնամին կարողանա անխոչընդոտ առաջ շարժվել: Նշված պաշտպանական գծում հրամանատար նշանակվեց Ռ-ազմիկ Պետ-

րոսյանը: Նա իսկույն կանչեց տղաներին, բացատրեց իրավիճակն, ու անմիջապես սկսեցին դիրքավորվել: Տանկի հրամանատար Գրիշան վիրավորվել էր, ուստի, տանկի մեջ մնացել էին մեխանիկն ու նշանառու-օպերատորը՝ Համիկը, ով իր վրա էր վերցրել տանկի հրամանատարի պարտականությունը: Ս. Օհանյանը տղաներին հրաժեշտ տալուց առաջ խնդրեց ամեն գնով պահել դիրքերը և խոստացավ օգնություն ուղարկել: Աղոթքանում, Մաղավուզում և Փափռավենդում տեղակայված «Գրադ» կայանքներից թշնամին հրթիռակոծում էր մեր դիրքերը, որին զուգակցվում էր նաև հրետանային արկակոծումը: Տարածքը նաև ռմբակոծիչների թիրախ էր դարձել, բայց քանի որ անտառում լավ էին քողարկվել՝ առանձնակի վնաս չէր հարուցվում մերոնց: Սամվել Կարապետյանի ջոկատից աջ, Գյուլաթաղ (այժմ՝ Վարդաձոր) գյուղի մոտ, դիրքավորվել էր Նորիկ Դանիելյանը, իսկ Ջանյաթաղում (այժմ՝ Ծանկաթաղ)՝ Աշոտ Դուլյանի («Բեկոր») վաշտը: Ռազմիկի ջոկատի նահանջելու դեպքում նրանք բոլորն ակամայից կհայտնվեին շրջապատման մեջ, ուստի, ամեն ինչ արվում էր՝ տրված առաջադրանքը ուժերի գերագույն լարումով կատարելու համար: Ռազմիկի ջոկատի հետ դիրքում էին նաև Վլադիմիրի ջոկատը (Գիրոյի հրամանատարությամբ) և ստեփանակերտցի հետախույզների 12 հոգանոց ջոկատը: Անհրաժեշտ զինամթերք կար, տանկի աջակցությունը՝ նույնպես, տղաներն էլ վճռական էին տրամադրված:

Հակառակորդի հերթական գրոհն, ինչպես միշտ, սկսվեց ռմբակոծությամբ, որից հետո անցան հրետանային նախապատրաստության: Այնուհետև զրահատեխնիկայի հռնդյուն լավեց: Ռազմիկն ու Գիրոն վազում էին դիրքե-

րով և զգուշացնում, որ չկրակեն, թողնեն, որ հակառակորդի տեխնիկան ավելի մոտենա: Նաև չպետք է թույլ տալին, որ թշնամին իմանա մերոնց տեղը: Մոտ 200 մետր հեռավորության վրա հակառակորդի հետախուզական ջրկատն էր, որը գնդացրային ու նռնականետային կրակ բացեց մեր դիրքերի ուղղությամբ: Տղաներն արդեն զգուշացված էին, որ չկրակեն, մինչև որոշակիորեն չտեսնեն հակառակորդի զինվորներին: Երբ, ի վերջո, սկսվեց փոխհրածգությունը, Ռ-ազմիկը Համիկին հրահանգեց տանկն առաջ շարժել ու կրակել: Մոտ 30 րոպե անց հակառակորդի մոտեցող տանկի աղմուկը բռնեց անտառը: Ռ-ազմիկն ու Գ-իրոն հրահանգ տվեցին պատրաստել նռնականետներն ու հակատանկային նռնակները: Ընդհանուր ուժերով երեք նռնականետ գործի զգվեց: Հանկարծ 80 մետրի վրա, իրարից 50-60 մետր հեռավորությամբ վեց տանկ ու հետևակի մարտական մեքենաներ հայտնվեցին: Տղաներից մի քանիսը խուճապի մատնվեցին, նույնիսկ փորձեցին լքել դիրքերը: Երկու ջոկատների հրամանատարները խիստ հրահանգեցին նման քայլի չդիմել: Մի քանի րոպե անց ուժեղ պայթյուն տեղի ունեցավ: Պարզվեց, որ հակառակորդի տանկերից մեկը պայթել է հակատանկային ականի վրա, բայց մյուսները, դեռ շարունակում էին առաջ շարժվել: Մերոնք նռնականետներից կրակ բացեցին: Գ-իրոն խփեց մեկ ՀՄՄ, որի վրա գտնվող դեսանտային խումբը, ցատկելով խփված մեքենայից, ընկավ մեր տղաների կրակոցի տակ, ու բոլորն էլ սպանվեցին:

Ռ-ազմիկը երկու նռնականետ էր գործածում: Տղաներն արագ-արագ լիցքավորում էին: Խփեց մեկ տանկ, որն իսկույն բոցավառվեց: Թշնամին վեց զրահատեխնիկայից



երեքն արդեն կորցրել էր, բայց մյուսները դեռ շարունակում էին առաջ շարժվել: Նրանցից մեկը գնում էր մեր քողարկված տանկի ուղղությամբ: Տանկի ետևից՝ հակառակորդի հետևակը: Երբ արդեն մնացել էր 40 մետր՝ հանկարծ որոտաց մեր տանկի թնդանոթն, ու թշնամու պայթող տանկի վրա գտնվողների մարմինները ցաքուցրիվ եղան օդում: Վառվող տանկերի մեջ եղած զինամթերքն սկսեց պայթել, և քանի-որ հեռավորությունը մոտ 40-60 մետր էր, տղաներն զգուշացան. պայթող ականների բեկորները կարող էին վնասել իրենց: Մյուս երկու զրահամեքենաների անձնակազմները լքեցին իրենց մեքենաներն ու փախուստի դիմեցին, բայց շատ հեռանալ չկարողացան. ոչնչացվեցին մերոնց դիպուկ կրակոցներից:

Ողջ գիշերվա ընթացքում տղաները հետևում էին վառվող տանկերին և միայն առավոտյան կարողացան մոտենալ, այն էլ՝ շատ խիստ զգուշավորությամբ, որ հանկարծ ծուղակի մեջ չհայտնվեն: Ռ-ազմավարը գոհացուցիչ էր՝ 20 ավտոմատ և երկու ՀՄՄ՝ լրիվ սարքին վիճակում: Նման խայտառակ պարտությունից հետո թշնամին չորս օր շարունակ ռմբակոծեց մեր դիրքերը, բայց քանի որ մերոնք լավ էին դիրքավորվել, առանձնակի վնաս չկրեցին: Հինգերորդ օրը թշնամին նոր գրոհ ձեռնարկեց: Զգացվում էր լավ նախապատրաստվածությունը:

Գրոհողների մեջ կային նաև այլազգի վարձկաններ, որոնք իրենց արտաքին տեսքը հարմարեցրել էին տեղանքին (օգոստոս ամսվա դեղնավուն խոտ ու խաշամի գույն էր ստացել մինչև գոտկատեղը մերկացրած նրանց մաշկը), սողալով մոտենում էին, ու ոչինչ չէր նկատվում: Գիպուկահարներ էին բերել առաջին գիծ՝ գնդացրորդներին ու հրամանատարներին վերացնելու նպատակով: Սողա-

լով մեր տղաների դիրքերին էին մոտենում՝ նոնակներով մարտի մեջ մտնելու համար: Երեք օր անընդմեջ ձեռնարկված գրոհները, սակայն, ոչ մի արդյունք չտվին:

9

Ալաշանից դեպի ձախ, երեք կիլոմետր հեռավորության վրա, պաշտպանություն իրականացնող Մելսիկը հայտնեց Ս. Օհանյանին, որ հակառակորդը տանկերով հարձակում է ձեռնարկել իրենց ուղղությամբ, և խնդրեց մեկ ՀՄՄ ուղարկել: Տեղանքին ծանոթ մարտակերտացի տղաները Ս. Օհանյանին հավաստիացրին, որ այդտեղով ՀՄՄ-ն չի կարող անցնել: Պետք է պաշտպանությունը նոնականետների միջոցով իրականացնել: Ռ-ազմիկը կապվեց Մելսիկի հետ և ասաց, որ թշնամու տանկերն այդտեղով չեն կարող անցնել դեպի իրենց դիրքերը, իսկ ՀՄՄ-ները կարելի է խփել նոնականետով:

Մելսիկը նույն խնդրանքով կրկին դիմեց Ս. Օհանյանին: Ռ-ազմիկը նորից խառնվեց խոսակցությանն ու ասաց, որ պատրաստ է օգնել: Ս. Օհանյանն ուրախությամբ համաձայնեց Ռ-ազմիկի օգնության առաջարկին: Ռ-ազմիկը ՀՄՄ-ի հրամանատար Սիերին առաջադրանք տվեց գնալ Ալաշան, կրակ բացել հակառակորդի վրա և շտապ վերադառնալ: Սիերի ՀՄՄ-ն իսկույն ճանապարհ ընկավ: Նրա կրակից հետո թշնամին երկու տանկով ու մեկ ՀՄՄ-ով փոխեց հարձակման ուղղությունն ու շարժվեց դեպի Ռ-ազմիկի դիրքերը: Ռ-ազմիկն իսկույն կապվեց Մելսիկի հետ՝ Սիերին ետ ուղարկելու համար, միաժամանակ՝ հարձակման մասին իրազեկեց շտաբ: Կուսապատում դիրքավորված Հրայր (Հրո) Աբրահամյանն էլ իր օգ-

նությունն առաջարկեց, ասելով, որ 10 հոգի կողարկի, միայն թե դիրքերը չհանձնեն, այլապես՝ իրենք կհայտնվեն ծողակի մեջ:

Ռ-ազմիկը պատասխանեց, որ դիրքերը կկարողանան պաշտպանել: Վստահ էր տղաների փորձի ու հմտության վրա: Իսկ մեկ օր առաջ սակրավորների խմբի ղեկավար Սեյրանյան Արմենն էր տեղանքն ականապատել այնպես, որ հակառակորդի ոչ մի տանկ չկարողանա անցնել:

Հակառակորդի տեխնիկայի հայտնվելուն պես, գործի զգվեց մեր տանկի շարժիչը: Մինչ այդ, մեր դիրքերի վրա ադրբեջանցիները շրապնելային ռումբեր էին արձակել, որոնց բեկորներից վիրավորվել էին ութ ազատամարտիկներ և Փրկարար ծառայության միջոցով ուղարկվել Ստեփանակերտ: Տանկի հրամանատար Համիկը Ռ-ազմիկին հարցրեց, թե՝ եթե ինքը տանկ խփի՝ մի կոմու.Ֆլյաժ համազգեստ կտա՞ իրեն: Ռ-ազմիկը խոստացավ:

Թշնամու տանկերն ու ՀՄՄ-ն առաջանում էին՝ քողարկելով իրենց հետևակայիներին: Մերոնք կրակում էին ծառերի ետևից: Հակառակորդի՝ ուղիղ նշանառությամբ կրակելը ոչ մի արդյունք չէր տա, ուստի, զրահատեխնիկան սկսեց կրակել խաչաձև՝ թևերից:

Ռ-ազմիկը մի քանի անգամ, հրահանգներ տալու համար, բարձրացավ տեղից և զգաց, որ դիպուկահարի կրակի տակ կարող է ընկնել, ուստի, Գալստյան Մերժիկին պատվիրեց, որ իր հրահանգով բաճկոնակը հրացանի փողին հազցնել ու վեր բարձրացնել: Ինքը հարմար դիրք գրավեց և նշան տվեց: Հակառակորդի դիպուկահարն իսկույն կրակեց՝ մատնելով իր տեղը: Նրա ուղղությամբ Ռ-ազմիկն անմիջապես երկու գնդակ ուղարկեց: Բաճկոնակը նորից բարձրացրին՝ դիպուկահարին ստու-



գելու համար: Կրակոց չհետևեց:

Կռվի թեժ պահին վերադարձավ Միերի ՀՄՄ-ն: Հակառակորդը կրակ էր տեղում գեների բոլոր տեսակներից և արժանի հակահարված ստանում: Երեք ժամ տևած մարտի ընթացքում թշնամին կորցրեց երկու տանկ, սպանվեցին մեծ թվով զինվորներ: Մարտի ավարտից հետո Համիկն, իհարկե, ստացավ իրեն խոստացված համազգեստը, իսկ երբ սպանվածների գեներներն էին հավաքվում, Ռազմիկը տղաներից մեկին հանձնարարեց գնալ և բերել սպանված դիպուկահարի օպտիկական նշանոցով հրացանը: Չննեցին նաև հակառակորդի տանկը: Համիկը հավաստիացրեց, որ տանկը նորմալ վիճակում է: Դա թշնամուց առգրաված երրորդ տեխնիկան էր:



10

Մարտից հետո Ռ-ագմիկը ռադիոկապով Սեյրան Օհանյանին խնդրեց 24 օր շարունակ պաշտպանության դիրքերում գտնվող իր ջոկատի տղաներին ինչ որ ձևով փոխարինել, որովհետև այնպես էին հոգնել, որ նույնիսկ

չէին կարողանում ճաշելու գնալ:

Ներթափոխվեցին երկու օր հետո: Ստեփանակերտ հասնելուն պես՝ զանգեց Սերժ Սարգսյանն ու հայտնեց, որ երկու օրից պետք է մեկնեն ռազմաճակատ:

Նշված ժամկետում նոր ստացած «ԿամԱՁ» բեռնատարով Ռ-ազմիկի ջոկատի տղաները մեկնեցին ճակատային գիծ: Չլղբան գյուղում տեղակայված ինքնապաշտպանական շտաբում տեղեկացան, որ մերոնք թողել են Սեծ-շենի մոտ գտնվող նախկին դիրքերը, և պաշտպանական գիծն անցնում է Մեհմանա գյուղի մոտով:

Դիրքավորվեցին Մեհմանայից ձախ՝ դեպի Գրմբոն ձգվող տարածքում: Ջբաղեցրին բարձունքներից մեկը, որտեղից հնարավոր էր հսկողության տակ պահել բոլոր ճանապարհները: Մեհմանայից աջ, համապատասխանաբար, դիրքավորված էին Հրոյի, Իլյիչի (Բաղրյան) և Նորիկի ջոկատները: Հսկողություն էր իրականացվում մինչև Գյուլաթաղ գյուղն ընկած տարածքը:

Ամեն օր հակառակորդի օդուժը ռմբակոծում էր մեր դիրքերը, իսկ մերոնք հակաօդային պաշտպանության համապատասխան համակարգեր չունեին: Միայն «Իգլա» տիպի հրթիռներ էին, որոնց միջոցով հնարավոր էր թշնամական ինքնաթիռներ և ուղղաթիռներ խփել:

Մի քանի օր անց թշնամին զրահատեխնիկայի աջակցությամբ նոր հարձակում ձեռնարկեց: Մարտակերտ-Մեհմանա-Գրմբոն ճանապարհահատվածում մերոնք հակառակորդի երկու ՀՄՄ էին խփել, ուստի, նախահարձակ եղած թշնամին փորձում էր Գյուլաթաղ գյուղի շրջանցումով անցնել մեր ջոկատների թիկունքը և գնալ դեպի Մեհմանա: «Գրաղ» Ժորայի (Գասպարյան) հրամանատարությամբ լավ էր գործում հրետանին: Հրոյի ջոկատը ևս լավ էր պաշտպանվում, իսկ, ահա, Նորիկ Դ-անիել-

յանի վիրավորվելուց հետո ջոկատի տղաները մեկ-մեկ փորձում էին լքել դիրքերը՝ փորձառու հրամանատար չունենալու պատրվակով: Ռազմիկն իր ջոկատի տղաներից մի քանիսին ուղարկեց Նորիկի պաշտպանած դիրքերը՝ հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու նպատակով: Շտաբից ևս օգնություն ուղարկվեց: Եկավ Սանվել Կարապետյանը՝ իր հետ բերելով մեկ տանկ և դիրքերից փախած մարտակերտցիներին: Նրանցից մեկը հրամանատար նշանակվեց, պարզաբանվեցին անելիքները, ջոկատին տրվեց կոնկրետ առաջադրանք: Պահանջվեց՝ մշտապես մնալ կապի մեջ:

Ռմբակոծությունները սովորական երևույթ էին դիրքերում, ու տղաներն ասես հարմարվել էին դրան:

Մի օր երկնքում երկու ուղղաթիռ հայտնվեց: Տղաները կարծեցին, թե թշնամական են, բայց ինչ-ինչ կասկածանքներ կային, ու չկրակեցին: Կասկածներն արդարացան. ուղղաթիռները Հայաստանի քաղաքացիական ավիացիայից էին: Թռիչքներ իրականացրին հակառակորդի վերահսկողության տակ գտնվող Մարտակերտ քաղաքի երկնքում, հետո անցան թշնամու թիկունքը և շատ ցածր բարձրությունից ոմբակոծեցին նրանց դիրքերն ու անվնաս հեռացան:

Մեր ուղղաթիռների հայտնվելուց մի քանի օր անց, մոտ 300 մետր բարձրությունից թշնամու նետած կասետային ռումբի պայթյունից վիրավորված յոթ ազատամարտիկների թվում էր նաև Ռազմիկ Պետրոսյանը: Անմիջապես կապվեցին Փրկարար ծառայության հետ, բայց, քանի որ տղաներն արյունաքամ էին լինում, Գեմոյի «ԿամԱԶ»-ի թափքում եղած ջուրը թափեցին ու վիրավորներին պատզարակներով տեղավորեցին այնտեղ: Ճանապարհիվեցին դեպի Չլդրան՝ դաշտային հոսպիտալ: Ճա-

նապարհին հանդիպեց սանիտարական «ՈՒԱԶ»-ը և վերցրեց վիրավորներին, իսկ «ԿամԱԶ»-ը ետ վերադարձավ: Չլղրանում տղաներին առաջին օգնություն ցուցաբերելուց հետո ուղարկեցին Ստեփանակերտ, բայց զինվորական հոսպիտալում ու քաղաքացիական հիվանդանոցներում ազատ տեղ չկար, և բժիշկ Մարությանը որոշեց նրանց բուժել «կիսաամբուլատոր» պայմաններում. առավոտյան գալիս էին հիվանդանոց, ստանում համապատասխան բուժումները, իսկ երեկոյան վերադառնում իրենց տները:

Այս դեպքից ընդամենը մեկ շաբաթ էր անցել, երբ շտաբից զանգեցին Ռ-ազմիկ Պետրոսյանին և կարգադրեցին ջոկատն առաջին գիծ ուղարկել: Առանց հրամանատարի: Գիտեին, որ վիրավորվել է և բուժվում է: Սակայն Ռ-ազմիկը գերադասեց մեկնել տղաների հետ: Արդեն հանձնվել էին Չլղրանն ու Կիչանը:

Կիչան գյուղի մոտակա ձորակում տեղակայված շտաբում Ռ-ազմիկն իմացավ, որ մերոնք վերագրավել են Չլղրանը: Չլղրանում գտնվող Սամվել Կարապետյանը խնդրեց շտաբի տղաներին, որ Ռ-ազմիկ Պետրոսյանի ջոկատն ուղարկեն իր մոտ:

Ջոկատը միայն ուշ երեկոյան կարողացավ անցնել ռմբակոծության տակ գտնվող ճանապարհն ու հասնել Չլղրանի գյուղամիջյան աղբյուրի մոտ, ուր ողջ գիշերն անցկացնելուց հետո միացավ Սեհմանայի բարձունքի ուղղությամբ վաղ առավոտյան իրականացված գրոհին: Ռ-ազմիկի ջոկատը գրոհողների կենտրոնամասում էր: Աջից շարժվում էին Սամվել Կարապետյանի հետախույզները՝ Անդրյի (Անդրանիկ Սարգսյան) հրամանատարությամբ: Տղաները երկու կիլոմետր երկարությամբ շղթա կազմած՝ մոտենում էին Մարտակերտ-Քելբաջար ավտոխճուղուն,



որը վերահսկվում էր հակառակորդի 3-4 տանկերի կողմից: Նկատելով նրանց՝ տանկերն սկսեցին կրակել: Ռազմիկը ձեռքի հակատանկային նռնականետից (ՁՀՆ) պատասխան կրակ բացեց: Վարդգեսի տղաները ևս կրակ բացեցին «Մուխա» տիպի նռնականետից: Հակառակորդի տանկը շրջվեց ու անշարժացավ, իսկ անձնակազմը դիմեց փախուստի: Մեկ «S-72» տիպի տանկ էլ Անդոյի տղաներն էին խփել ու գրավել հակառակորդի դիրքերը:

11

Հատկապես կարևոր և հիշարժան էր մարտերից մեկում աղբրեջանցի կապավորի գերեվարումը: Հակառակորդի 15 հոգուց բաղկացած մի ջոկատ Մեծմանայից շարժվում էր Չլդրանի ուղղությամբ: Ռազմիկն իսկույն այդ մասին հայտնեց Չլդրանի պաշտպաններին: Ս. Կարապետյանը հրահանգեց Ռազմիկին՝ փակել հակառակորդի ետդարձի ճանապարհը և կամաց-կամաց շարժվել դեպի Չլդրան, իսկ իրենք Չլդրանից ուղղություն վերցրին դեպի Մեծմանա: Արդյունքում՝ հակառակորդի ջոկատը հայտնվեց շրջապատման մեջ և ոչնչացվեց՝ բացի կապավորից, որի միջոցով հնարավոր եղավ տեղեկանալ Մարտակերտյան ճակատի հրամանատար Սուրաթ Հյուսեյնովի գործողություններին, կանխել հակառակորդի՝ նախահարձակ լինելու որոշ դեպքեր:

Սի անգամ էլ, Ս. Հյուսեյնովի (ազդականչը՝ «52») հետ խոսակցությունից պարզ դարձավ, որ հակառակորդը առավոտյան ժամը 6-ին գրոհ է ձեռնարկելու մեր դիրքերի ուղղությամբ: Ռազմիկն իսկույն կապվեց Չլդրանում տեղակայված շտաբի հետ և խնդրեց մարդ ուղարկել իր մոտ՝ կարևոր տեղեկություն հաղորդելու համար: Դիմելով հնա-

րամտության՝ հակառակորդին անակնկալի բերելու համար, հրամանատարությանը խնդրեց թույլատրել ժամը 4-ին հարձակվել: Հաջողությունն ակնհայտ էր:

Հիշարժան են նաև թիվ 1156 բարձունքի գրավումը, ազգությամբ դազախ կապավորի քաջարի վարմունքը, ադրբեջանցիների ինքնահրթիռակոծումը «Գրադ» կայանքներից: Այս վերջին դեպքի ժամանակ Ռ-ազմիկը կապվեց «Գրադ» Ժորայի հետ և ասաց, որ կարող է չանհանգստանալ ու խնայել հրթիռները. ադրբեջանցիները իրենք իրենց հաջողությամբ հրթիռակոծում են:

12

Մի շարք անհաջողություններից հետո, վերադասավորելով ուժերը՝ հակառակորդը նոր հարձակում ձեռնարկեց: Թշնամու գրոհները հաջողությամբ ետ էին մղում Ռ-ազմիկի, Յուրա Հակոբյանի հրամանատարությամբ գործող սուսգայիթցիների «Վրեժ» ջոկատները, «Տաքսի» խումբը, չափարցի տանկիստ Վիտոն:

Հակառակորդը կորցրեց չորս «S-72» տիպի տանկ և երկու ՀՄՄ, կրեց կենդանի ուժի զգալի կորուստ: Մեր կողմից ութ հոգի վիրավորվել էր, հինգը («Վրեժ» ջոկատից)՝ անփորձ լինելու հետևանքով՝ ուշաթափվել:

Մարտից հետո Ռ-ազմիկ Պետրոսյանը խնդրեց հրամանատարությանը՝ ջոկատը հանգստի ուղարկել: Հերթափոխվեցին երկու օր հետո միայն, իսկ մի քանի օր անց հակառակորդը, ցավոք, նոր ուժեր կուտակելով այդ վայրում, կարողացավ ետ գրավել Սեհմանայի բարձունքն ու Չլդրանը: Մեր պաշտպանական գիծը նորից անցնում էր Կիչան գյուղի մոտով:

Երկու օր էր, ինչ տղաները տանն էին, կրկին հավաքվելու և ռազմաճակատ մեկնելու հրաման ստացվեց՝ թշնամին հասել էր մինչև Խաչեն գետի հովիտը:

Ջոկատը նշանակման վայր հասավ: Խնդիր էր դրված ոչ մի կերպ թույլ չտալ, որ հակառակորդն անցնի Խաչենի աջ ափը: Ռազմիկն առաջադրված խնդրի իրականացմանն անցավ Սամվել Կարապետյանի հրամանատարությամբ գործող ջոկատի հետ համատեղ: Հասկանալի էր իրավիճակը. եթե թշնամին հանկարծ հայտնվեր Խաչենի աջ ափին, իր վերահսկողության տակ կվերցնեք տարածքի գերիշխող բարձունքները, պատմական Գանձասարը և, արդեն բաց ճանապարհով, կշարժվեր դեպի Ստեփանակերտ:

Խաչենի հովտի բոլոր գյուղերն էին ոտքի կանգնել, Մարտակերտի շրջանի՝ գերության մեջ հայտնված բոլոր գյուղերի ջոկատները:

Երբեք համախմբվածությունն այդ աստիճան չի կարևորվել, թեև միշտ էլ ջոկատների փոխգործակցությունը ցանկալի արդյունք էր տալիս: Այս պարագայում իրավիճակը բոլորովին այլ էր: Այս իրավիճակում համախմբվելն արդեն կենաց ու մահվան նշանակություն ուներ:

Արցախի ինքնապաշտպանության պետական կոմիտեն և ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը վճռեցին ստեղծել բոլորովին նոր կառույց, որը կմիավորեր առանձին-առանձին գործող ինքնապաշտպանական ջոկատները: Այդ նոր կառույցը, որը պիտի

կոչվեր ԼՂՀ Պաշտպանության բանակ, կընդգրկեր բոլոր զինված կազմավորումները, նոր անվանումներ գործածության մեջ կդրվեին՝ պաշտպանական շրջան, միավորում, զորամաս, զումարտակ (դիվիզոն), վաշտ (մարտկոց), դասակ, ջոկ: Պատերազմը շարունակվում էր, և բանակը պետք է բանակի պես լիներ:

Պատերազմական ճանապարհներով անցած ինքնապաշտպանական ջոկատները բազում փորձություններ են հաղթահարել, բազում անգամ են միայնակ հայտնվել մահվան դեմ-հանդիման և փրկվել իրենց զինական ուժի ու հնարամտության շնորհիվ: Բայց եկել էր պահը, երբ անջատ-անջատ կռվելն այլևս ոչ միայն արդյունավետ չէր, այլև անհնարին էր: Որովհետև հապաղելն այլևս մահվան էր հավասար: Նորաստեղծ Կենտրոնական պաշտպանական շրջանի (ԿՊՇ) կազմի մեջ մտան Ստեփանակերտում կազմավորված կամավորական ջոկատներն ու վաշտերը: ԿՊՇ-ի հրամանատար նշանակվեց Սամվել Կարապետյանը (այժմ՝ Արցախի հերոս, Արցախի պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-մայոր), շտաբի պետ՝ Ռազմիկ Պետրոսյանը (այժմ՝ ոստիկանության պահեստագործի գնդապետ):

15

1992-ի աշնանային հակահարձակողական գործողությունների արդյունքում հնարավոր եղավ առաջխաղացում գրանցել Մարտակերտյան ռազմաճակատում: Դա արդյունք էր բանակային կառուցվածքային նոր առավելությունների: ԿՊՇ-ի և Մարտակերտի պաշտպանական շրջանի (հրամանատար՝ Նորայր Դանիելյան) համատեղ ուժերով ճակատային գիծը խորացավ Մարտակերտի շր-

ջանի տարածքում: Կիչանից ու Առաջածորի բարձունքներից մեր զորքերը շարժվեցին դեպի Չլդրան ու Դրմբոն, և մի քանի օրվա ընթացքում ամրացան Թարթառի հովտում՝ ազատագրելով Չլդրան, Պողոսագոմեր, Ղազարահող, Դրմբոն, Կոճողոտ, Վերին Հոռաթաղ, Հարությունագոմեր, Վաղուհաս, Խնկավան, Գետավան, Չափար, Հաթերք, Ջագլիկ, Ումութլու (Ականաբերդ) բնակավայրերը: Մարտերն արդեն տեղի էին ունենում Սարսանգի ջրամբարի դիրքերի ուղղությամբ, որի հաջող ընթացքից հետո ռազմերթը պետք է շարունակվեր դեպի Մեծ-շեն ու Մաղավուզ:

16

1993-ի գարնանը ԼՂՀ Պաշտպանության բանակի ստորաբաժանումները ձեռնամուխ եղան Քելբաջարում (Քարվաճառ) տեղակայված թշնամական կրակակետերի վնասագերծման ռազմագործողությանն ու հաջողությամբ իրականացրին այն:

Այդ օրերին Սերժ Սարգսյանն իր մոտ կանչեց Ռազմիկ Պետրոսյանին և հրահանգեց ԿՊՇ-ից ընտրել խիզախ ու ֆիզիկապես լավ պատրաստված 100-150 մարտիկներ և Օմար մեկնելու պատրաստություն տեսնել: Բանն այն է, որ ազատագրելով Քելբաջարի շրջանը, առանձնակի կարևոր էր այն մեր ուժերի վերահսկողության տակ պահելը: Իսկ դրա համար պետք էր այն անջատել Ադրբեջանից, այսինքն՝ լիովին մեր վերահսկողության տակ պետք է անցներ Օմարի լեռնանցքը: Տղաները զգում էին, թե բնակլիմայական ինչպիսի բարդ պայմաններում պետք է կատարեին իրենց առջև դրված մարտական խնդիրը, ուստի, անում էին ամեն ինչ, որպեսզի նա-

խապատրաստական շրջանում ոչ մի մանրուք աչքաթող չարվի:

Ռ-ազմիկ Պետրոսյանն Առաջին և Երրորդ գումար-տակների հրամանատարներ Գենադի Հակոբյանից և Մամվել Հարությունյանից պահանջեց 60-ական հոգուց բաղկացած խմբեր տրամադրել: Նախապատրաստվելու համար երկու օր էր տրված:

Երկու օրից 120 հոգուց բաղկացած խումբն արդեն պատրաստ էր: Ապահովության բոլոր միջոցների առկա-յությամբ՝ վաղ առավոտյան խումբը մեկնեց Ստեփանա-կերտից:

17

Երեկոյան կողմ հասան Օմարի ստորոտում գտնվող Յանշաղ բնակավայրը ու մինչ կտեղավորվեին՝ Ռ-ազմիկը մի փոքր խմբով, տեղանքին ծանոթանալուց ու քարտե-զում անհրաժեշտ նշումներ անելուց հետո, մեքենայով մտավ մոտակա գյուղերը, ուր փոքրաթիվ աղբբեջանցի և քուրդ ծերունիներ ու կանայք էին մնացել:

Տեսնելով մերոնց՝ նրանք կարծեցին, թե եկել են իրենց թշվառ կյանքի վերջը տալու, ուստի, պառկեցին և խնդրե-ցին սպանել իրենց: Ռ-ազմիկն ասաց, որ հայ զինվորները խաղաղ բնակիչների, առավել ևս՝ ծերերի դեմ չեն կռվում: Կռվում են ոչ թե թալանի և ուրիշի ունեցվածքին տիրելու, այլ իրենց ազատ ու անկախ ապրելու իրավունքն իրակա-նացած տեսնելու համար միայն:

Նա այդ մարդկանց կերակրել տվեց և հավաս-տիացրեց, որ կարող են դիմել ցանկացած հարցով: Անգամ, եթե կամենան հեռանալ դեպի իրենց հայրենա-կիցները՝ կարող են ճանապարհը ցույց տալ, ուղեկցել

մինչև թույլատրելի սահմանները:

Տեղանքն ուսումնասիրելու համար Ռ-ազմիկն ու իր տղաները բարձրացան դիրքերը, ուր նրանց դիմավորեց «Մորուք» Ռ-աֆիկը (Սայիյան)՝ Մարտակերտի պաշտպանական շրջանի գումարտակներից մեկի հրամանատարը: Դիրքապահներին իրենց հետ բերած կոնյակից տվեցին, որպեսզի գիշերներն օգտագործեն՝ չսառչելու նպատակով:

Տեղանքն ուսումնասիրելուց հետո ծրագրեր մշակվեցին ռազմավարական կարևոր դիրքեր զբաղեցրած հակառակորդին ոչնչացնելու համար: Հրետանավորների գործողությունները համակարգում էր Սամվել Սաֆարյանը, ով Ռ-ազմիկի հին ծանոթներից էր, շախմատի դպրոցի տնօրենը: Հիմա նա շախմատի տախտակի վրա անցկացրած իր բազում մարտերն իրական դաշտ էր տեղափոխել և հաջողությամբ իրականություն էր դարձնում:

Համագործակցելով Մարտակերտի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների հետ՝ Ռ-ազմիկի ջոկատայինները ձեռնամուխ եղան երկրորդ պաշտպանական բնագծի պատրաստմանը: Եվ սպասում էին հակառակորդի հարձակմանը:

Ռ-ազմական լուրջ գործողություն դեռևս չէր իրականացվում, և տղաները ձանձրացել էին դիրքեր պահելուց, երբ վերջապես երևաց հակառակորդի զինվորներից մեկը, ով մեր հսկողության տակ գտնվող տարածքն էր անցել՝ որոշակի տվյալներ ձեռք բերելու համար: Դա արդեն նշան էր, որ հակառակորդն, իրոք, լրջորեն պատրաստվում է հարձակման:

Մեր կողմում ևս նախապատրաստական աշխատանքներ էին տարվում այդ ուղղությամբ, առաջարկվում էին հակահարձակման մի քանի տարբերակներ:

Առաջին գումարտակի հրամանատար Գեման, օրինակ, առաջարկեց բարձրանալ Աղդաբանի սարը, որն իր բարձրությամբ չի զիջի հակառակորդի զբաղեցրած դիրքերին, և զիշերն այնտեղից նախահարձակ լինել: Սարի վրա ձյունը քիչ կլինի, իսկ այստեղ ձյան շերտը երկու մետր բարձրություն ունի, որն էլ խանգարում է հարձակման իրականացմանը:

Մի օր էլ, դիրքեր բարձրանալիս, Ռ-ազմիկը նկատեց, որ տղաները ձյունը փորել և մոտ 4-5 մետր խորացել են ձյան մեջ: Այնտեղ ճաշում էին, այնտեղ էլ՝ հանգստանում: Երբ հարցրեց՝ ինչպես են զգում այդտեղ, պատասխանը միանշանակ դրական էր: Անմիջապես միտք հղացավ մինչև հակառակորդի դիրքերը, մոտ 250-300 մետր (2-2.5 մետր խորությամբ ձյան շերտով), թունելաձև փորվածք անել և զգալիորեն մոտենալով թշնամու դիրքերին՝ հանկարծակի դիմել հարձակման: Նա մոտավոր հաշվարկ կատարեց և իր համար պարզեց, որ մոտ 7-10 օրում հնարավոր կլինի այդ ծրագիրն իրագործել: Նորիկն առարկեց. իբր՝ 7-10 օրն ահագին ժամանակ է, իզուր ինչո՞ւ վատնեն: Ռ-ազմիկն էլ իր հերթին առարկեց, ասելով, որ, միևնույն է, 10 օր է՝ այստեղ են, և դարձյալ ոչ մի առաջխաղացում չկա: Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատարից մի 5-6 բահ խնդրեց միայն: «Թունելագործներն» սկսեցին աշխատել: Որոշվեց երկու զուգահեռ ճանապարհ բացել, իրարից 30-40 մետր հեռավորությամբ: Հերթափոխային աշխատանքը կատարում էին ութ հոգով, իսկ ներքևից հետևում էին, որ հանկարծ ուղղությունը չփոխվի, և երեք մետրանոց լայնությունը պահպանվի՝ հարձակմանը շատ զինվոր ներգրավելու հնարավորությունն ապահովելու համար:

Ութ օր անց աշխատանքն ավարտված էր: 60 հոգի ար-



դեն պատրաստ էին հարձակման համար: Ջինվորներին լավ կերակրեցին ու հանգստի համար անհրաժեշտ ժամանակ տրամադրեցին, իսկ հրետանավորներին հրահանգեցին մշտապես կրակի տակ պահել հակառակորդին՝ ուշադրությունը շեղելու համար: Սամվել Սաֆարյանը խոստացավ, որ երեք օր շարունակ նրանք հանգիստ չեն ունենա: Երեք օրից, երբ հակառակորդի համար հրետակոծությունն արդեն սովորական բնույթ էր ստացել և հարձակման չէին սպասում այլևս, ականանետային հարվածների ուղեկցությամբ մեր զինվորները վաղ առավոտյան նետվեցին գրոհի: Սկզբում աշխատեցին նռնակամետները, հետո՝ գնդացիները, և տղաները ձեռքի նռնակներով նետվեցին թշնամական դիրքերի վրա: Հանկարծակիի եկած հակառակորդը խուճապի մատնվեց՝ չհասցնելով նույնիսկ կրակել: Սպանվեց 12 ադրբեջանցի, 10-ը վիրավորվեց և գերի ընկավ, առգրավվեց զգալի քանակությամբ զենք ու զինամթերք:

18

1993-ի գարունը նշանակալից էր նաև նրանով, որ թշնամուց լիովին մաքրվեց Թարթառի հովիտը, ընդհուպ՝ մինչև Մեծ-Շենի մատույցները: Կարևոր էր Սարսանգի ամբարտակի մերձակա բարձունքի գրավումը, որը մարտավարական մեծ նշանակություն ուներ և ազդում էր ռազմագործողությունների հետագա ընթացքի վրա: Դա հասկանում էր նաև հակառակորդն ու այդ բարձունքում զգալի քանակությամբ զինտեխնիկա էր կուտակել: «Գ-բադ» կայանքներն ու հրետանին անընդհատ կրակի տակ էին պահում մեր դիրքերը, որոնց ստեպ-ստեպ օգնում էր նաև օդուժը:

Ամբարտակի մերձակա բարձունքի գրավումն օրակարգի թիվ մեկ հարց էր դարձել ԿՊՇ-ի հրամանատարության համար: Շտաբն աշխատում էր օր ու գիշեր, քննարկում բոլոր տարբերակները: Իսկ երբ ռազմագործողության պլանն արդեն կազմված էր, թշնամու հիմնական ուժերի տեղաբաշխվածության մասին անհրաժեշտ տեղեկություններն ի մի բերված, նախապատրաստական վերջին աշխատանքներին անցան:

Հարձակումն իրականացնելու գործում հիմնականում ներգրավված էին ԿՊՇ-ի երրորդ գումարտակի տղաները: Գումհրամանատարի տեղակալ Ջորիկ Հակոբյանը, մեկ վաշտի հետ, հարձակումից մեկ օր առաջ ծածուկ անցել էր գետը և պահվել թշնամու թիկունքում, իսկ յոթերորդ վաշտի հրամանատար Անդրանիկ Գասպարյանը, Արարատ Ղազարյանը, Բենո Սահակյանը, Ալեքսանդր Գասպարյանը, Արթուր Գրիգորյանը իրենց զինվորներով հարմար դիրքավորվել և սպասում էին հարձակման ազդանշանին:

ԿՊՇ-ի Առաջին և Երկրորդ գումարտակները ևս անցել էին հակառակորդի թիկունքն ու դիրքավորվել մերձակա բարձունքներում: Հարձակման հրաման տրվելուց հետո, երրորդ գումարտակի զինծառայողների սրընթաց գործողությունների արդյունքում, հակառակորդն առանց լուրջ դիմադրության սկսեց անկանոն փախչել: Ռազմագործողության ելքն արդեն որոշված էր, Սարսանգի ջրամբարի շրջակա բոլոր բարձունքները Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումների վերահսկողության տակ էին արդեն:

Մերժ Սարգսյանից մի քանի օրվա հանգստի թույլտվություն ստացան ու դիրքերը հանձնեցին Հայաստանի երկրապահ կամավորականներին: Հանգստի հենց հա-

ջորդ օրը Մերժ Սարգսյանն իր մոտ կանչեց գնդի հրամանատար Սամվել Կարապետյանին և շտաբի պետ Ռազմիկ Պետրոսյանին ու հայտնեց, որ գունդը պետք է շտապ վերադառնա Ալաշան: Պարզվեց, որ մեր դիրքերը հակառակորդի վերահսկողության տակ են անցել, և գազազած թշնամին ակտիվ գործողություններ է նախաձեռնում դեպի Հաթերք ու Մեհմանա:

Նույն օրը գունդն արդեն Ալաշանում էր, և քանի դեռ հակառակորդը լիովին չէր ամրացել այնտեղ, անհրաժեշտ էր կոնկրետ ձեռնարկումների դիմել: Գնդի հրամանատարի մոտ հավաքված հրամկազմը ելք էր փնտրում, տարբեր առաջարկություններ էին արվում:

Նպատակն, այնուամենայնիվ, մեկն էր. կորցրած դիրքերն անպայման պետք է վերադարձվեին:

Հակառակորդը գործադրում էր բոլոր ջանքերը՝ կասեցնելու մերոնց առաջխաղացումը: Հեռահար հրետանու արկերն ու «Գրադ» կայանքներից արձակված հրթիռները թափվում էին հեղեղի պես: Մերոնց առաջընթացը, սակայն, ոչինչ չէր խոչընդոտել: Սարսանգի շրջակա բարձունքների վերագրավման հետ ԿՊՇ-ի ստորաբաժանումների վերահսկողության տակ անցավ նաև Մեծ-շեն գյուղը: Գրանով իսկ՝ կանխվեց հակառակորդի նոր հեռահար նպատակների իրագործումը:

Մեծ-շենի գրավումը նոր հաղթանակների սկիզբ դարձավ: 1993-ի ամառը նշանավորվեց նաև նրանով, որ մեր մարտիկները հասան Մարտակերտի շրջանի տափաստանային գոտուն: Մարտերը համառ էին, թշնամին՝ տմարդի ու վայրագ, բայց մեր զինվորները ոգով պինդ էին ավելի, քան հակառակորդն էր կարծում, և զինական ուժին գումարելով այդ վեհ զենքը՝ ոգեղենը, չընկրկեցին թշնամու առաջ:

Պատերազմական գործողությունների հետագա ընթացքը դասավորվեց այնպես, որ Պաշտպանության բանակի զորամասերն ու առանձին ստորաբաժանումները կարողացան նախկին ԼՂԻՄ-ին սահմանակից Քելբաջար (Քարվաճառ), Լաչին (Քաշաթաղ), Գուբաթլու (Մոնասար), Ջանգելան (Կովսական) շրջանները՝ ամբողջությամբ և Ադդամ, Ֆիզուլի (Կարյազինո), Ջաբրայիլ (Մեխակավան) շրջանները՝ մասնակիորեն, վերցնել իրենց վերահսկողության տակ:

Մեր զորքերն ընդհուպ մոտեցան Միր-Բաշիր (Թարթառ), Բարդա (Պարտավ) ադրբեջանաբնակ քաղաքներին, գրավեցին Ադրբեջանը հարևան Իրանի հետ կապող Հորադիս կայարանը:

Անելանելի դրությունն Ադրբեջանին ստիպեց կրակի դադարեցման պայմանագիր ադերսել Արցախի Պաշտպանության բանակից և Բիշքեկում 1994-ի մայիսի 12-ին կնքվեց մման պայմանագիր, համաձայն որի՝ նույն տարվա մայիսի 16-ի 00 ժամից ռազմաճակատային գոտու ողջ երկայնքով հաստատվեց ժամանակավոր հրադադար, որը շարունակվում է առ այսօր: Այդ գործում իրենց արժանի ներդրումն ունեցան կողք-կողքի, հանուն հարազատ երկրամասի ազատ ու անկախ գոյակցության մարտնչած մարտիկները, այդ թվում՝ Ռ-ազմիկ Պետրոսյանը, ովքեր չխնայեցին ոչինչ, շատերն անգամ կյանքը տվեցին, որ թուրք-հրոսակը կրկին տոնակոխ չանի Հոդ-հայրենին:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

### ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԶԻՆԱԿԻՅՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ



*Արղիաղի  
Մանուչարով*

#### ԱՐԿԱԳԻ ՄԱՆՈՒՉԱՐՈՎԸ

դեռևս 1960-ական թվականներից էր ակտիվորեն մասնակցել Արցախը Մայր-Հայաստանի հետ վերամիավորման համար մղված գործընթացին, որի համար էլ արտաքսվել էր ծննդավայրից: 1988-ը նրան նորից շարք վերադարձրեց: Իր ու բազում համախոհների ջանքերով 1988-ի մարտի 1-ին ստեղծեց «Կռունկ» կոմիտեն և ղեկավարեց նրա գործունեությունը:

Մանուչարովը կենդանի դրոշ էր, մարդկային հոծ զանգվածների և առաջ մղող ուժ: Նրա խոսքը ոգևորում էր բոլորին, նրա խոսքով առաջնորդվում էին բոլորը:

Աննկուն էր ոգով ու էությամբ: Չերկնչեց ոչնչի առաջ, չմեղանչեց իր արածի համար: Թեկուզև՝ բանտային կյանքի բոլոր դառնությունները ճաշակեց, բայց մնաց անդրդվելի, Արցախյան շարժման ու Մայր-Հայաստանի հետ Արցախի վերամիավորման գաղափարակիրը եղավ մինչև վերջ, երբեք չլիովեց իր համոզմունքներն ու դավանանքը:

**ՎԱԶԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ** Արցախի կուսակցական բարձրաստիճան ղեկավարներից (Ասկերանի, ապա՝ Մարտունու կուսշրջկոմի առաջին քարտուղար) առաջինն էր, ով ընդգրկվեց Արցախյան ազգային ազատագրական շարժ-



*Վազգան Գրիգորյան*

ման մեջ, իր գործուն մասնակցությունն ունեցավ ինչպես ԼԳԽ խորհրդի պատմական նստաշրջանի (20 փետրվարի 1988 թ.), այնպես էլ ԼԳ կուսմարզկոմի պլենումի (17 մարտի 1988 թ.) կազմակերպման աշխատանքներին: Պատահական չէր, որ ԼԳԽ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում (1989թ.

օգոստոս) հենց նա ընտրվեց Ազգային խորհրդի նախագահ:

Նա մինչև վերջ էլ մնաց նույն նվիրյալն ու հայրենասեր արցախցին:



*Արսեր Խոչարյան*

**ԱՐՏԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ** Արցախյան շարժման ակունքներում էր, ընտրվեց «Կռունկ» կոմիտեի նախագահության կազմում, այնուհետև կազմակերպեց ու ղեկավարեց «Միացում» կազմակերպությունը: Առաջիններից մեկն էր, ով իր վրա վերցրեց Արցախի անվտանգության ու պաշտպանության ողջ պատասխանատվությունը՝ գլխավորելով ԼԳՀ Պաշտպանության

պետական կոմիտեն: Մեծ է նրա՝ երկու հայկական անկախ պետությունների նախագահի, ներդրումը հատկապես ետպատերազմյան Արցախում՝ պետականաշինության, Հայաստանում՝ քաղաքական ու պետական ճգնաժամի վերացման գործընթացներում:



*Հենրիկ  
Պողոսյան*

**ՀԵՆՐԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ** գլխավորում էր ԼՂԻՄ Ազրոարդիհամալիրը, երբ վերջապես փշրվեց արցախահայության համբերության բաժակն ու բոլորը, մի մարդու պես, արդար պահանջով լցվեցին Ստեփանակերտի փողոցներն ու հրապարակները:

Արժանանալով համերկրացիների համակրանքին ու վստահությանը՝ նա, Բ.Կևորկովից հետո, գլխավորեց երկրամասի կուսակցական կազմակերպությունը: Ե՛վ որպես ԼՂ կուսմարզկոմի առաջին քարտուղար, և՛ որպես ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր՝ երկրի բարձրագույն ատյաններում հնչեցրեց իր համերկրացիների արդար պահանջն ու խորհրդային լայնարձակ պետության քաղաքացիներին հասցրեց Շարժման բուն էությունը (արժանահիշատակ է հատկապես՝ նրա երույթը ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստում):



*Բորիս Կախատյան*

**ԲՈՐԻՍ ԳԱԿԱՄՅԱՆԸ** Արցախյան ազգային ազատագրական շարժման ամենանվիրյալներից մեկն էր: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր էր և երկրի բարձրագույն ամբիոններից խստորեն քննադատում էր կենտրոնական ղեկավարության հակահայկական դիրքորոշումն ու ապակառուցողական գործունեությունը, պահանջում Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծման համար համապատասխան հանձնաժողով ստեղծել:

Շարժման մի խումբ ղեկավարների հետ մասնակցել է հացադուլների, պատանդի կարգավիճակում «աղբբեջա-

նական հյուրասիրության բոլոր նրբություններին ծանոթացել»:



*Ռուխ  
Աղաջանյան*

**ՌՈՒԼԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ** շարժման ակունքներում էր ի սկզբանե: Ակտիվորեն մասնակցեց բոլոր ձեռնարկումներին, մարզգործկոմի նստաշրջանի, կուսնարգկոմի պլենումի կազմակերպման, «Կռունկ» կոմիտեի նախաձեռնման ու ստեղծման գործընթացներին: «Կռունկի» արգելումից հետո ընդգրկվեց Արցախի պաշտպանության շտաբում, «Միացում» կազմակերպության, Տնօրենների խորհրդի ղեկավար կազմում: Արցախյան շարժմանն ակտիվորեն մասնակցելու համար ձերբակալվեց և պահվեց Թբիլիսիի, Նովոչերկասկի, Դոնի Ռոստովի (1990 թ.), Շուշիի ու Սարատովի (1991 թ.) բանտերում:

1992-94 թթ., պատերազմական ժամանակաշրջանում, գլխավորեց ԼՂՀ ՊԲ ինժեներական ծառայությունը:

Պատերազմից հետո վերադարձավ քաղաքացիական աշխատանքի, շարունակեց ճանապարհաշինարարի իր անհրաժեշտ ու պատասխանատու աշխատանքը:



*Համլետ  
Գրիգորյան*

**ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ`** Արցախյան ազգային ազատագրական շարժման ամենաակտիվ գործիչներից մեկը, մասնակցեց ստորագրահավաքների, հանրահավաքների և գործադուլների կազմակերպմանը, եղավ «Կռունկ» կոմիտեի նախագահության կազմում, «Միացում» կազմակերպության համանախագահը:

Ձերբակալվեց երեք անգամ, պահվեց Պյատիգորսկի, Սարատովի և Բաքվի բանտերում: Ընտրվեց ՀՀ Գերա-



գույն խորհրդի և ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, ԼՂՀ Ազգային ժողովի նախագահության անդամ:



*Վարդան  
Հակոբյան*

**ՎԱՐՎԱՆ ՀԱԿՈՔՅԱՆԸ** 1980-ականների վերջերին արցախահայ ազգային գաղափարակիր այն գրողներից է, ով առաջիններից մեկը միացավ համաժողովրդական շարժմանը, դարձավ ԼՂԻՄ մարզգործկոմի 1988-ի փետրվարի 20-ի պատմական նստաշրջանի նախաձեռնողներից ու կազմակերպիչներից մեկը:

Նրա բացման խոսքով սկսվեց նստաշրջանը, նրա առաջարկությամբ նստաշրջանի նախագահ ընտրվեց ԼՂԻՄ մարզժողկրթբրաժվար Վիգեն Հայրապետյանը:

Արցախի մտավորականության ներկայացուցիչների պատվիրակության (8-17 փետրվարի 1988 թ.) կազմում եղավ Մոսկվայում, ուր խորհրդային երկրի բարձրագույն ղեկավար ատյաններին հասցրեց իր հայրենակիցների՝ Մայր Հայաստանի հետ Արցախի վերամիավորման անշահարկելի պահանջը:



*Արսն  
Ծավուրյան*

**ԱՐՄՈ ԾԱՏՈՒՔՅԱՆԸ** Ստեփանակերտի կաթի կոմբինատի տնօրենն էր, երբ սկսվեց Արցախյան համաժողովրդական շարժումը: Նա ԼՂԻՄ խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի հայտնի նստաշրջանի և ԼՂ կուսմարզգործկոմի 1988 թ. մարտի 17-ի արտահերթ պլենումի կազմակերպիչներից է:

Ընդգրկվել է Տնօրենների խորհրդի

կազմում, իր հայրենասիրական նախաձեռնություններով շատ ձեռնարկումների է մասնակցել՝ ցուցադրելով ակտիվ կենսադիրք և առողջ բանականություն:



*Մլավա  
Աղաջանյան*

**ՄԼԱՎԱ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ** Ստեփանակերտի արտադրական կոմբինատի տնօրենն էր, ֆուտբոլի ջերմ երկրպագու, հրաշալի անձնավորություն, հայրենասեր մարդ: Մեծ օգնություն էր ցուցաբերում Մումգայիթից ու Բաքվից բռնի տեղահանվածներին: Արցախյան ազատագրական պայքարի նվիրյալ էր:

**ՍԵՐՎԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ** Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի (նախկինում՝ Ռ-յազանի կոնդենսատորների գործարանի Ստեփանակերտի մասնաճյուղ) տնօրենն էր: Հայրենասեր էր, նվիրված էր Արցախյան ազատագրական պայքարին: Անողորք էր բոլոր թշնամիների նկատմամբ: Մեծ օգնություն էր ցուցաբերում փախստականներին:

**ՄԼԱՎԻԿ ԵՎ ՍԵՐՓԻԿ ԱՍԾԱՏՐՅԱՆՆԵՐԸ** զգալի ներդրում ունեցան ԼՂԻՄ խորհրդի 1988-ի փետրվարի 20-ի նստաշրջանի նախապատրաստական աշխատանքների իրականացմանը, հատկապես՝ պատգամավորների ներկայությունն ապահովելու առումով: Այնուհետև զբաղվել են Արցախ ժամանող պատվիրակությունների ընդունման, տեղավորման և այլ հարցերով:

**ՄԱՔՍԻՄ ՄԻՐՉՈՅԱՆԸ** Արցախյան ազգային ազա-

տագրական շարժման ակտիվ գործիչներից է: ԼՂ ավտոտրանսպորտային արտադրական միավորման թիվ 2718 շարասյան պետն էր, 1988-ի փետրվարը դիմավորեց խանդավառությամբ:

Ընդգրկվելով «Կռունկ» կոմիտեում, Տնօրենների խորհրդում, այլ կազմակերպություններում, պարտքի ու պատասխանատվության զգացումով վերաբերվեց իր քաղաքացիական պարտականությունների կատարմանը:



*Արթուր  
Մկրտչյան*

**ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԸ** աղբբեջանական զինված ավազակախմբերից Հաղրութի շրջանի բնակավայրերի պաշտպանության համար կամավորական ջոկատների կազմավորման ժամանակաշրջանում կարևորագույն դեր խաղաց ջոկատներում ընդգրկված կամավորականներին զենքով ու զինամթերքով ապահովելու առումով:

1991-ից Հաղրութի ինքնապաշտպանական շտաբի պետն էր, սերտ կապի մեջ էր Արցախի ինքնապաշտպանական շտաբի ղեկավարության հետ:

1992-ի հունվարի 8-ին ընտրվեց ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ, սպանվեց անհայտ հանգամանքներում, պաշտոնավարման 97-րդ օրվա երեկոյան:

**ՎԻԳԵՆ ՇԻՐԻՆՅԱՆԸ** թրծվեց ընդհատակյա պայքարում, ղեկավարեց ընդհատակյա կազմակերպությունը, այնուհետև եղավ Մարտակերտի պաշտպանության շտաբի պետը, զգալի աշխատանք կատարեց բնակչու-

թյանը մեկ միասնական դրոշի ներքո համախմբելու, ինչպես նաև՝ կամավորականներին զենք ու զինամթերքով ապահովելու առումով:



*Էդուարդ  
Ղուկասյան*

**ԷԴՈՒԱՐԴ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ** հանրաճանաչ վիրաբույժի համբավ ունեւ՝ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանով: Աշխատել է Ստեփանակերտի մարզային (այժմ՝ հանրապետական) հիվանդանոցում: Երկար տարիներ ԼՂ գլխավոր վիրաբույժն էր:

Արցախյան շարժումը նոր երակներ բացահայտեց նրա ազգանվեր-հայրենանվեր գործունեության մեջ: Հասարակական գործունեությունը, սակայն, նա միշտ էլ զուգակցում էր մասնագիտականի հետ: Այդպես էր պետք: Երբ պետք էր մարզխորհրդի նստաշրջան կամ մարզկոմի պլենում կազմակերպել 1988-ի փետրվար-մարտ ամիսներին՝ նա հանգիստ չունեւ: Օգտագործելով իր բարձր հեղինակությունը՝ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումները, Շարժմանն աջակցելու գործում համոզելու առումով, միշտ էլ բարեհաջող ընթացք էին ստանում:

Մեծ էր նրա դերը հատկապես թաքստոցներում պահվող վիրավոր ազատամարտիկներին առաջին (նաև՝ լիարժեք) բժշկական օգնության ցուցաբերման առումով:

Նրա հասարակական գործունեությունն իր լրումն ստացավ «Հիշատակ» հիմնադրամի կազմակերպման ու գործունեության ծավալման շրջանակներում: Մինչ այդ նա եղել է «Կռունկի», Տնօրենների խորհրդի ու այլ կազմակերպությունների կազմում, Շարժման ընդհատակյա գործիչ-

ների հետ եղել իր աջակցության կարիքն զգացողների (որտեղ էլ որ նրանք գտնվելիս լինեին) մոտ: Նաև հետապնդվել է ընդհատակյա աշխատանքներին աջակցելու համար:

Մինչև Արցախում պատերազմի բացահայտ ծավալումը, ընդհատակյա հոսպիտալներ է կազմակերպել համախոհ բժիշկների, բուժակների ու բուժքույրերի ներգրավումով: Այնուհետև՝ իր արժանի ներդրումն ունեցավ ՊԲ ռազմաբժշկական ծառայության ստեղծմանն ու կատարելագործմանը:



*Ռուդիկ  
Ազարյան*

**ՌՈՒԴԻԿ ԱԶԱՐՅԱՆԸ** 1988-ից ԼՂ «Գյուղտնտքիմիա» արտադրական միավորման գլխավոր տնօրենն էր: Անմիջապես էլ ներգրավվեց Արցախյան շարժման մեջ: «Կռունկ» կոմիտեի անդամ լինելով՝ նա իր ուժերը բոլորանվեր տրամադրեց Արցախի ժողովրդի իղձերի իրականացման գործընթացին: Արցախյան շարժման մի խումբ ակտիվիստների հետ նա ևս ձերբակալվեց և պահվեց Թբիլիսի, Ռոստով ու Նովոչերկասկ քաղաքների բանտերում:

Պատերազմական տարիներին եղել է ՊԲ ինժեներական ծառայության պետի տեղակալը:



*Ռաֆայել  
Գաբրիելյան*

**ՌԱՖԱՅԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ** Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայում արտադրամասի պետ էր, կահույքագործի իր մասնագիտական կարողություններն էր ի նպաստ բերում ժողովրդին: 1988-ն ու հաջորդած ընդհատակ-

յա աշխատանքի տարիները նոր իմաստ ու նշանակություն հաղորդեցին նրա ազգանպաստ գործունեությանը: Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու նպատակով երկրամասում սկսված լայնածավալ ստորագրահավաքին իր արժանի ներդրումն ունենալով, նա շարունակեց իր հետագա ընդհատակյա գործունեությունը: Իսկ դա աննկատ մնալ չէր կարող, և նա հայտնվեց Բաքվի բանտում, անլուր կտտանքների ենթարկվեց 34 օր շարունակ:

Ապա ղեկավարեց իր իսկ նախաձեռնությամբ ստեղծված «Բանվորական խումբը», եղավ «Հիշատակ» հիմնադրամի նախաձեռնողներից ու հիմնադիրներից մեկը, 1995-ից աշխատեց որպես հիմնադրամի գործադիր-տնօրեն:

Նրա խոսքը ոչ միայն՝ ազդեցիկ, նաև հուսատու էր, որովհետև բխում էր ճշմարիտ ակունքներից:



*Էռնեստ  
Հաջրասպետյան*

### **ԷՌՆԵՏՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայի տնօրենն էր, կանգնած էր շարժման ակունքներում: Հավաքվում էին ֆաբրիկայում՝ տնօրեններով ու մտավորականներով, Երևան ու Մոսկվա հեռագրեր ուղարկելու համար, բայց Շարժման բացահայտ պայքարի օրերից սկսած՝ աղբրեջանցի զինված 3000 միլիցիոներների առկայությունը հուշեց զինվել: Ֆաբրիկայում անմիջապես մարտական ջոկատ կազմավորվեց, սկսեցին մահակներ ու սվիններ պատրաստել:

Իր գործուն մասնակցությունը բերեց «Կռունկի», ՏՆՕ-

րեների խորհրդի կողմից իրականացվող բոլոր ձեռնարկումներին: Օժտված էր մարդկանց համախմբելու առանձնահատուկ ընդունակությամբ:



*Արսեն  
Հակոբյան*

**ԱՐՄԵՆ ՀԱԿՈՔՅԱՆՆ** Արցախում և երկրամասի սահմաններից դուրս ճանաչված քանդակագործ էր: Ժամանակի «պարտադրանքով» պեկոծված Արցախում 1988-ի գարնան առաջին օրը ստեղծված «Կռունկ» կոմիտեի ակամա կնքահայրը դարձավ՝ որպես նորաստեղծ կոմիտեի անվանում ներկայացնելով **Комитет Революционного Управления Нагорного Карабаха** բառակապացության առաջին տառերով կազմված հապավումը (**КРУНК**):

Առաջարկությունն ընդունվեց նաև այն պարզ տրամաբանությամբ, որ անվանման հայերեն տարբերակը հույսի ու սպասման իմաստ է պարունակում իր մեջ, որ կռունկը մի օր «խապրիկ մը» կբերի մայր Հայաստանի հետ Արցախի վերամիավորման մասին:

Արվեստի անմնացորդ մվիրյալ գործիչ լինելով հանդերձ՝ նա նաև իր հայրենիքի ազնիվ ու անշահախնդիր զինվորն էր:

Ուղղամիտ էր, արդար, ուներ պայքարի անկոտրում ոգի ու կամք: «Կռունկի» նախագահության կազմում ընդգրկվելը նրա համար դատարկ կոչում ու ձևական պարտականություն չէր: Էություն էր ամբողջությամբ, միաբանված ու միակամ՝ իր համախոհ-գաղափարակիր ընկերների հետ: Բարոյական պայքարում զոհ դարձավ

կույր գնդակին (ռուս զինվորի կողմից արձակված), որպես մի համեստ ու մտահոգ հարցման պատասխան՝ ինչո՞ւ են, արդյոք, օրը ցերեկով, բոլորի աչքի առաջ, ադրբեջանցիներին Շուշիից Ադդամ (կամ հակառակ ուղղությամբ) տեղափոխում Ստեփանակերտի կենտրոնական փողոցներով, երբ կա շրջանցիկ ճանապարհ, ինչո՞ւ են մարդկանց սադրանքի ենթարկում, ավելորդ անգամ գրգռում, հունից հանում:



*Վալերի  
Մարոթյան*

**ՎԱՆԵՐԻ ՄԱՐՈՒԹՅԱՆԸ** ճանաչված վիրաբույժ էր Արցախում՝ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական կոչումով: Համաժողովրդական շարժման հենց սկզբնական փուլից իր մասնագիտական կարողություններով էր աջակցում:

Առանձնապես մեծ էր նրա դերը արցախահայությանը պարտադրված պատերազմական տարիներին:

1992-ից ԼՂՀ Պաշտպանության բանակի բուժառայության պետն էր, նրա ջանքերով ստեղծվեց առաջին զինվորական հոսպիտալն Արցախում: Մեծ էին նրա ծառայությունները վիրավոր ազատամարտիկներին անհրաժեշտ բուժօգնության ցուցաբերման գործում՝ իր իսկ նախաձեռնությամբ ու գործուն մասնակցությամբ ստեղծված դաշտային հոսպիտալներում:

Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով, մեդալներով: ՊԲ հոսպիտալներից մեկը կրում է անվանի վիրաբույժի անունը:





*Վիգեն  
Հաչրապետյան*

**ՎԻԳԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

1986-ից ԼՂԻՄ մարզօղկորթաժվարն էր, հայրենասեր ու նվիրված մի անձնավորություն: Իր անուրանալի ներդրումը բերեց Արցախյան համաժողովրդական շարժմանը, նախագահեց ԼՂԻՄ խորհրդի 1988-ի փետրվարի 20-ի պատմական նստաշրջանում: Ընդգրկվեց «Կռունկ» կոմիտեի կազմում: Անշահախնդրորեն ու անմնացորդ նվիրումով իր ակտիվ մասնակցությունը բերեց շարժման հետագա ընթացքին՝ վայելելով ժողովրդի սերն ու վստահությունը:



*Սերգեյ Դավթյան*

**ՍԵՐԳԵՅ ԴԱՎԹՅԱՆԸ**

երկար տարիներ աշխատել է խորհրդային, կոմերիտական, կուսակցական, պետական ու արհմիութենական մարմիններում: Լինելով ԼՂ արհմիությունների մարզային խորհրդի նախագահը՝ Արցախյան շարժման առաջին տարիներին (կոնկրետ՝ 1989-ին) նախաձեռնեց մարզարհ-

խորհրդի դուրս բերումը Ադր. ԽՍՀ արհմիությունների խորհրդի կազմից: Ավելին՝ մեկ տարի անց, 1990-ին, արհմիությունների 19-րդ համագումարում միութենական ենթակայության կարգավիճակ առաջարկեց ԼՂԻՄ արհմիությունների խորհրդի համար:

Արցախյան պատերազմի տարիներին օգնության խմբեր կազմակերպեց, փախստականների տեղավորման և մի շարք այլ գործընթացների մասնակցեց:




*Վլադիմիր  
Գևորգյան*

**ՎԼԱԳԻՍԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ**

1988-ին ժողովրդական պատգամավորների Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալն էր: Միանգամից ձուլվեց Շարժմանը՝ ի հայտ բերելով հայրենասիրական իր մեծ զգացումներն ու գործիմացությունը: «Կռունկ» կոմիտեի ստեղծման ակնունքներում էր,

ընդգրկվեց վարչության կազմում և ակտիվորեն նպաստեց կոմիտեի գործունեությանը:

Նա, շատերի պես, իր գործուն մասնակցությունն ունեցավ ԼԳԽ խորհրդի 1988-ի փետրվարի 20-ի պատմական նստաշրջանի, ԼԳ կուսմարզկոմի 1988-ի մարտի 17-ի պլենումի իրականացման աշխատանքներին, բազում այլ ձեռնարկումների:



*Գուրգեն  
Գաբրիելյան*

**ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ**

աշխատասենյակը «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությունում մի յուրօրինակ հավաքատեղի էր դարձել Շարժման ակտիվիստների համար:

Հանրահավաքներին, խաղաղ երթերին նրա մասնակցությունը ոգևորության նոր ալիք էր բարձրացնում, ժողովուրդն ավելի էր գոտեպնդվում, հավատավոր դառնում:

Արցախահայ մտավորականների պատվիրակության կազմում եղավ Մոսկվայում՝ հուսավառված վերադար-

ձավ, ժողովրդին հուսավառեց: Նրա խոսքը, ելույթը, երգը ժողովուրդը կլանում էր բառիս բուն իմաստով: Նա ոգին էր հանրահավաքների, երթերի, ցույցերի կազմակերպիչը:

Նրա երգը սպեղանի էր ցավատանջ սրտերի համար:



*Հրաչյա  
Բեգլարյան*

**ՀՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ** «Ղարաբաղցին» երգը մի ինքնատիպ ժողովրդական օրհներգի վերածվեց (հատկապես՝ Շարժման տարիներին, թեև մինչ այդ էլ լայն ժողովրդականություն էր վայելում), դարձավ հայ ժողովրդի ամենատարբեր հատվածներն իրար միացնող գորեղ ուժ:

Ինքը՝ հանրաճանաչ բանաստեղծը, մշտապես հանրահավաքայինների հետ էր, որովհետև ժողովրդի արդար պահանջը հենց ի՞ր սրտից էր բխում, հենց ի՞ր երազանքների մարմնացումն էր 1988-ի փետրվարյան համաժողովրդական բռնկումը: Մինչև վերջ մնաց ժողովրդի հետ, մինչև վերջ պայքարեց ժողովրդի հետ, և հաղթանակը դարձավ անխուսափելի:

Արցախյան պատերազմի հաղթական ավարտից հետո էլ շարունակեց իր հայրենանվեր գործունեությունը, իր ջերմ խոսք ու գրույցով, ոգևորիչ ելույթներով գոտեպնդեց ժողովրդին՝ դիմակայելու հարկի-անհարկի դժվարություններին: Մինչև վերջ: Մինչև կյանքի վերջին օրը, վերջին ժամը, և մահացավ իր վերջին ելույթից 10 րոպե անց՝ ԼՂՀ Մշակույթի և երիտասարդության պալատի դահլիճում:



*Կոմիտաս  
Դակինյան*

**ԿՈՄԻՏԱՍ ԴԱԿԻՆԵԼՅԱՆՆ** այդ տարիներին աշխատում էր Ասկերանում և ընդգրկված լինելով ընդհատակյա կազմակերպության մեջ, Սլավիկ Առուշանյանի և Սլավիկ Միրզոյանի հետ մեկտեղ նշանակալի դեր է խաղացել շրջանի բնակչությանը պայքարի դրոշի ներքո համախմբելու գործում:

Կոմիտասի խմբագրած «Կարմիր դրոշ» (1989-ից՝ «Խաչեն») թերթը, որի խմբագրությունը հավաքատեղի էր դարձել ընդհատակայիների համար, առաջինն է արձագանքել Շարժմանը, խիզախորեն տպագրելով «արգելված» թեմաներով բազմաթիվ նյութեր, հիմնականում՝ նրա ստորագրությամբ, հերքելով կենտրոնական և աղբբեջանական լրատվամիջոցների հակահայ հրապարակումները:

Նույն ազգանպաստ մղումով է նա գործել, երբ մեզ պարտադրած պատերազմի ամենաթեժ ժամանակաշրջանում՝ 1993-94թթ., խմբագրում էր «Արցախ» (այժմ՝ «Ազատ Արցախ») թերթը:

Մեր ազգային ազատագրական պայքարի թեմաներով հետազայում գրել է «Արցախը՝ չսանձած նժույգ» փաստագրական վեպը, պատմվածքներ ու պիեսներ:



*Շամալոն  
Պերսիմովսկի*

**ՇԱՄՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՆ** Արցախյան ազգային ազատագրական պայքարի նվիրյալ էր: Նա պետական այն գործիչներից էր, ով հայրենիքի ազատագրումը բարձր էր դասում իր պաշտոնից և կուսակցության շահերից: Իր անձնվեր մասնակցությունն է բերել մարզխորհրդի 1988-ի փետրվարի 20-ի

նստաշրջանի և կուսմարզկոմի 1988-ի մարտի 17-ի պլենումի կազմակերպան գործին, որոնց ընթացքում քննարկվել ու հաստատվել է արցախահայության արդարացի պահանջը, այն է՝ Մայր Հայաստանի հետ Արցախի վերամիավորվելը:



*Մեմյոն  
Բաբայան*

**ՍԵՄՅՈՆ ԲԱԲԱՅԱՆՆ** արդյունաբերական արտադրության հմուտ գիտակ էր, 1988-ից՝ ԼՂԻՄ գործկոմի նախագահը: Մինչ այդ էլ բարձր ու պատասխանատու պաշտոններ էր զբաղեցրել Երևանում ու Ստեփանակերտում: Մարզգործկոմի նախագահի պաշտոնում, հետո՝ նաև ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի կազմում ընդգրկվելու ժամանակահատվածում մընաց իր բարձրության վրա, արեց ամեն ինչ՝ հարազատ ժողովրդի ձգտումներն ու երազանքներն իրականացված տեսնելու համար:



*Բոլիս  
Առուշանյան*

**ԲՈՐԻՍ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ** Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրենն էր, Արցախյան շարժման նվիրյալ: Եղել է պետական-քաղաքական հայտնի գործիչ, Տնօրենների խորհրդի նախագահ (1988-1990), «Կռունկ» կոմիտեի վարչության անդամ, ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահի տեղակալ, ՀՀ Հատուկ ծրագրերի կոմիտեի նախագահի տեղակալ: Բոլոր ուժերով նպաստել է Արցախյան հարցի կարգավորման գործընթացին:



*Յորի  
Չուլիգիրյան*

**ՅՈՒՐԻ ՋՀԱՆԳԻՐՅԱՆԸ**

ճարտարագետ էր, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու: Արցախյան շարժմանը ներգրավվեց անմիջապես: Ասես վաղուց էր սպասում դրան: Խիզախ էր, ոգևորվել ու ոգևորել գիտեր, որ վիստությունը տեղ չգտներ մարդկանց սրտերում: 1990-ին հիմնադրեց Հովսեփավան գյուղը (Ասկերանի շրջանում):

Ադրբեջանցի «իրավապահները» դա համարեցին «ժողովուրդների բարեկամության անխախտ դաշինքի» խարխլման փորձ, ազգամիջյան անկարգությունների «հրահրման» դրսևորում: Հետևանքը պարզ էր՝ հայտնվեց Բաքվի բանտում, որտեղից վերադարձի ճանապարհ այլևս չկար:

**ԿԱՐԵՆ ՋՀԱՆԳԻՐՅԱՆԸ**

մարզգործկոմի կազմհրահանգչային բաժնի վարիչն էր, կազմակերպվող բոլոր միջոցառումների օրինական հիմնավորումների ու փաստաթղթերի ճիշտ ձևակերպման գործը նրան էր վստահվում և նրա ներդրումն այդ կարևոր առաքելության մեջ՝ անուրանալի է:

Նա ակտիվ մասնակցություն ունեցավ «Հիշատակի» հիմնադրման, Շարժման մի շարք այլ միջոցառումների: Հրթիռահրետակոծությունների պայմաններում «Հիշատակի» համար օգնություն հայթայթելն ու դրանք հասցեատերերին հասցնելը հիմնադրամի խիզախ ոգու դրսևորման եզակի օրինակ էր:

Հայրենասեր էր՝ անձնուրաց, նվիրյալ:

**ԺԱՆՆԱ ԳԱՍՏՅԱՆԻՆ**

Արցախյան համաժողովրդական շարժումն ստիպեց թողնել իր այնքան սիրելի բե-



*Ֆաննա  
Գալստյան*

մը: Նրան շատ ավելի պատասխանատու նոր դեր էր սպասվում՝ հայրենյաց պաշտպանի դերը: Անմնացորդ նվիրումով միաձուլվեց Շարժմանը՝ դառնալով նրա բաղկացուցիչ անբաժանելի մասնիկը: «Կռունկ» կոմիտեի, Բերդաձորի ինքնապաշտպանության խորհրդի անդամ էր, ազգային ազատագրական պայքարի բազում միջոցառումների

մասնակից:

Արցախի հայությանը պարտադրված պատերազմի տարիներին Կենտրոնական պաշտպանական շրջանի (ԿՊՇ) հրամանատարի տեղակալն էր՝ մարտական մի շարք գործողությունների մասնակից:

**ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ** Ստեփանակերտի ուռուցքաբանական դիսպանսերում խոհարար էր աշխատում:

Համաժողովրդական շարժումը նոր որակներ հաղորդեց նրան: Եվ վերածնված հուսավառությամբ նա առաջնորդում էր մարդկային հոծ զանգվածներին՝ երթերում ու հանրահավաքներում:

**ՎԱԼՅԱ ՄԵՀՐԱՔՅԱՆԸ** Արցախյան համաժողովրդական շարժման առաջամարտիկներից էր:

1988-ը նրան դարձրեց հայրենիքի նվիրյալ զինվոր: Նա ոչ միայն մասնակցում էր բոլոր հանրահավաքներին ու երթերին, այլև դրանց անմիջական կազմակերպիչներից էր:

**ԼՅՈՒԳՄԵԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ** խաղաղ ցույցերում ու երթերում միշտ էլ առջևից քայլողներից էր:

Նա ոչ միայն ցույցերի սովորական մասնակից էր, այլև կազմակերպիչներից մեկը: Հետագայում ակտիվ գործունեություն ծավալեց նաև «Հիշատակ» հիմնադրամում:



*Վոլոդյա  
Բեգլարյան*

**ՎՈԼՈՂՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆԸ** Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկայում աշխատում էր 1971թ. մայիսի 7-ից: Առաջիններից մեկն ընդգրկվեց Արցախյան համաժողովրդական շարժման ընդհատակյա պայքարում: Եղել է «Կռունկ» կոմիտեի, «Հիշատակ» հիմնադրամի խորհրդի անդամ, «Բանվորական խմբի» ղեկավարի տեղակալ:

Զբաղվում էր Արցախի սահմանամերձ գյուղերում պաշտպանական առաջին ջոկատների կազմակերպման գործով: Ակտիվ գործունեություն ծավալեց հատկապես Հաղրուքի շրջանի Արփագետուկ, Պետրոսաշեն, Սպիտակաշեն գյուղերում: «Ալֆա» պատժիչ ջոկատի կողմից ձերբակալվեց անօրեն զենք կրելու մեղադրանքով և ենթարկվեց ծեծի ու կտտանքների:

Երկրամասում տիրող հատուկ դրության պայմաններում բարեխղճորեն կատարում էր իր առջև դրված բոլոր խնդիրները, հատկապես՝ 1988-ի հոկտեմբերից գործող «Հիշատակ» հիմնադրամի գործունեության ընթացքում: Նույն բարեխղճությամբ իր պարտականությունների կատարմամբ աչքի ընկավ նաև «Բանվորական խմբում»՝ ակտիվորեն մասնակցեց գործադուլների կազմակերպմանն ու թռուցիկների տարածմանը:



**ԿԱՐԵՆ ԲԱՔՈՒՐՅԱՆՆ** աշխատում էր ԼՂԻՄ մարզ-  
խորհրդի գործկոմում: Իրավաբանի իր կայուն գիտելիք-  
ներով նպաստեց Շարժման սկզբնական շրջանում միու-  
թենական կենտրոն առաքվող բոլոր փաստաթղթերի ու  
գրությունների ճիշտ ձևակերպումներին ու անսխալ հաս-  
ցեագրմանը: Ակտիվ մասնակցություն ունեցավ մարզ-  
խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի պատմական նստաշը-  
ջանի և ԼՂ կուսմարզկոմի 1988թ. մարտի 17-ի արտա-  
հերթ պլենումի կազմակերպման աշխատանքներում:

Լինելով ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշ-  
տոնակատար, 1994թ. մայիսի 12-ին ԼՂՀ-ի անունից ստո-  
րագրեց Բիշքեկյան արձանագրություն-պայմանագիրը՝  
աղբբեջանա-ղարաբաղյան զինված առճակատման գո-  
տում կրակի դադարեցման մասին:

**ԳԵՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ** Ստեփանակերտի կոնդեն-  
սատորների գործարանում տեխնիկական վերահսկողու-  
թյան բաժնի պետն էր, երբ բռնկվեց Արցախյան ազգային  
ազատագրական շարժումը: Շատերի պես նա էլ միաձուլ-  
վեց համաժողովրդական հուզումներին և, զբաղեցնելով  
տարբեր պաշտոներ ու զբաղվելով հասարակական-քա-  
ղաքական բուռն գործունեությամբ, իր բաժին ավանդն ու-  
նեցավ Արցախյան հիմնախնդիրն իրավական ոլորտում  
քննելու և լուծում տալու համար:

**ԷԴՎԱՐԳ ՂԱԶԱՐՅԱՆՆ** ազնիվ ու հայրենասեր  
մտավորական էր, իր ժողովրդի հոգու թարգմանն ու  
երաժշտական մեկնաբանը: Նա Շարժման հավատավոր  
ջատագով էր, անմնացորդ ու անշահախնդիր նվիրյալ:



*Սլավիկ Միրզոյան*

**ՍԼԱՎԻԿ ՄԻՐԶՈՅԱՆԸ** Շարժման առաջին դրոշակակիրներից էր: Նա Սլավիկ Առուշանյանի և Կոմիտաս Գանիեյանի հետ 1987թ. սկզբներին Ասկերանում ձեռնամուխ լինելով ընդհատակյա կազմակերպության ստեղծմանը, ակտիվորեն մասնակցել է ինչպես քարոզչական աշխատանքներին, այնպես էլ ինքնապաշտպանական մարտերին, մինչև վերջ մնալով բարիկաղների վրա, հայրենի երկրամասի ազատությանը նվիրաբերելով ամենաթանկը՝ իր կյանքը:

**ՅՈՒՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ** Ստեփանակերտի պոլիգրաֆ-ձեռնարկության տնօրենն էր և իր գործուն աջակցությամբ էր բերում անհրաժեշտ փաստաթղթերի, թերթոնների բազմացման առումով:

**ԱՐԿԱԳԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆ** Արցախյան ազգային ազատագրական շարժման ոգեշունչ գործիչներից էր, ԼՂԻՄ-ը Մայր Հայաստանի հետ վերամիավորելու նպատակով իրականացված ստորագրահավաքի առաջին կազմակերպիչներից մեկը:

Ընդհատակյա պայքարի տարիներին ղեկավարեց և ուղղորդեց գաղտնի գործող խմբերի գործունեությունը, Հայոց ընկերվարական Արցախական կուսակցության, ՀՅԳ «Անտառ» կոմիտեի անդամ էր, ղեկավարեց Ստեփանակերտի «Հայրենասերներ» ընդհատակյա խմբի աշխատանքը:

Եղավ «Կռունկ», «Ղարաբաղ» կոմիտեների, Տնօրենների խորհրդի, Կարգավորման գաղտնի խորհրդի, «Արցախ» միության կազմում, զբաղվեց ռազմական գործունեությամբ:

**ՎԱԼԵՐԻ և ՎԱՍԻԼԻ ԱԹԱՋԱՆՅԱՆ** եղբայրներն իրենց ներդրումն ունեցան Արցախյան ազգային ազատագրական շարժմանը: Հանրահավաքների, երթերի, ցույցերի ընթացքում նրանք դրսևորեցին բարձր հայրենասիրություն և իրենց խոսքով ոգևորեցին ժողովրդական լայն զանգվածներին, գործով աջակցեցին նպատակի իրականացմանը:

**ԳՐԻԳՈՐԻ ԱՅԱՆԱՍՅԱՆԸ** Արցախյան համաժողովրդական շարժման առաջին նվիրյալներից էր, Ստեփանակերտում 1988-ի փետրվարի 13-ին տեղի ունեցած առաջին հանրահավաքի ոգին: Շարժման հետագա տարիներին ևս մնաց իր բարձրության վրա, բոլոր կարողություններով նպաստեց Արցախյան հիմնախնդրի լուծման գործընթացին:

**ՊԱՎԵԼ ՆԱՋԱՐՅԱՆԸ** զգալի ներդրում ունեցավ 1988-ի փետրվարյան պատմական նստաշրջանի իրականացման գործընթացում: Հայրենասեր էր, ազնիվ ու խիզախ, Շարժման նվիրյալ ջատագով:

**ՕԼԵԳ ԵՍԱՅԱՆԸ** հասարակական-քաղաքական ոլորտում լայն ճանաչում ունեցող գործիչ էր, մասնակցեց բոլոր երթերին ու հանրահավաքներին, Շարժման մյուս բոլոր ձեռնարկումներին, իր տնտեսագիտական հմտություններով նպաստեց խնդիրները ճիշտ ուղորդելու և լուծման ճիշտ ուղիներ գտնելու համար: Հայրենասեր էր, անձնագոհ, քաջ: Հետագայում ևս, զբաղեցնելով բարձր պաշտոններ, միշտ էլ զգալի ներդրում է ունեցել Արցախյան հիմնախնդրի լուծման գործում:


**ՀՐԱՆՏ ՍԱՐԳՍՅԱՆԸ** ջերմ հայրենասեր էր, 1990-ին մասնակցեց Շահումյանի շրջանի Մանաշիկ գյուղի պաշտպանությանը, 1992-93թթ. Առանձին հետախուզա-

կան գումարտակի հրամանատարն էր: 1992-ին վիրավորվեց Սրխավենդ գյուղում:

**Շահումյանի շրջանը** Արցախի հյուսիսային դարպասն է, իսկ Գետաշենը՝ այդ դարպասի բանալին: Հենց այդ գիտակցությամբ էլ՝ շահումյանցիները պարտավորված էին կրակի տակ մինչև վերջ դիմանալ իրենց ջքնաղ երկրամասում: Նրանց ու Արցախյան ազատագրական շարժման ընդհատակյա պայքարում թրծված մարտիկների շնորհիվ հնարավոր եղավ վիժեցնել Ադրբեջանի ու միութենական կենտրոնական իշխանությունների հանցավոր դաշնակցությամբ գործողության մեջ դրված «Կոլցո» օպերացիայի ծրագրի մի մասը: Սակայն, ընդմիջտ հայաթափվեցին Շահումյանի շրջանն ու Գետաշենի ենթաշրջանը:

Ազգային ազատագրական պայքարի ընթացքում, 1988-ից սկսած, Շահումյանի շրջանում, իրոք, անհավասար մարտեր մղվեցին հակառակորդի դեմ: Շարժումն այնտեղ այնպիսի մարդիկ էին ղեկավարում, ովքեր իսկապես հերոսության հավասար գործ էին անում: **Նրանցից՝ ՇԱՀԵՆ ՄԵՂՐՅԱՆԸ, ՎՈՒՈՎՅԱ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ, ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ, ԿԱՌԼԵՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ, ՇԱՀԵՆ ՀՈՎԱՍԵՎՅԱՆԸ, ՌՈՍԱ ԱՌԱՏԱՄՅԱՆԸ, ՀԱԿՈԲ ԽԳՐՅԱՆԸ, ՎԵԼՅԱՆԸ, ՍԱՄՍՈՆ ՄԱՐՅԱՆՅԱՆԸ, ԳՐԻՇԻԿԸ, ՎԱԼԵՐԻԿԸ, ԱՐԺԱՆԸ** եւ ուրիշներ:

**ՇԱՀԵՆ ՄԵՂՐՅԱՆԸ** ազգային-ազատագրական պայքարի ակնառու գործիչներից էր: Լինելով Շահումյանի շրջագործկոմի նախագահին ու շրջանի ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատարը, իր հրամանատարությամբ գործող խմբի կազմում արեց ամեն ինչ՝ շրջանի տարածքը պաշտ-



*Շահեն Մեղրյան*

պանելու համար: Բայց երբ աղբբեջանցի հրոսակներին միացան նաև ԽՍՀՄ Ձինված ուժերի կանոնավոր զորամասերը և հայկական դիրքերի վրա գրոհեցին տանկերով ու ռազմական այլ տեխնիկայով, պաշտպանության գործընթացն իրականացնելը լիովին անհնար դարձավ:

Շահումյանի անկումից հետո նա կազմավորեց «Եդնիկներ» մարտական ջոկատը ու շարունակեց պարտիզանական պայքարը աղբբեջանական հրոսակների դեմ:

Նրա հերոսական գործունեությունն ընդհատվեց 1993-ի ապրիլի 17-ին, հարազատ լեռնաշխարհի երկնքում:

Եղել է ՀՀ Գերագույն խորհրդի առաջին գումարման պատգամավոր, պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով:



*Վլադիմիր  
Աղաջանյան*

#### **ՎԼԱԳԻՄԻՐ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ Շահումյանի**

շրջգործկոմի նախագահն էր, կուսշրջկոմի առաջին քարտուղարը: Նրա անմիջական նախաձեռնությամբ ու գործուն մասնակցությամբ հնարավոր եղավ Խանլարի շրջանի Գետաշեն ու Մարտունաշեն հայկական գյուղերը՝ Շահումյանի շրջանի և Շահումյանի շրջանը՝ ԼՂԻՄ կազմի մեջ մտցնելու մասին որոշումներ ընդունել և իրականացնել այդ որոշումները, գլխավորել Շահումյանի բնակչության դիմադրությունը՝ Շարժման սկզբնական շրջանում: Գերվել է հակառակորդի կողմից, փոխանակվել աղբբեջանցի ութ զինձառայողի դիմաց: Քաղաքական նկատառումներից ելնելով՝ 1991-ի ամռանն անցավ Հայաստան: Եղել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, ընդգրկվել ԳԽ գյուղատնտեսության և գյուղի զարգացման մշտական հանձնաժողովի կազմում:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԳ

### ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ ԵՆ ՈԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

#### *Էդուարդ Իշխանի ՂՈՒԿԱՍՅԱՆ.*

*ԼՂՀ վաստակավոր բժիշկ, հանրաճանաչ վիրաբույժ,  
Արցախյան շարժման անմնացորդ նվիրյալ*

Ռ-ազմիկին ճանաչում եմ վաղուց, այն ժամանակվանից, երբ ես բժշկական ուսումնարանում էի դասավանդում (Ռ-ազմիկն ուսումնարանի ֆիզկուլտուրայի ուսուցիչն էր), նաև՝ հարևաններ էինք երկար տարիներ, նույն նրբանցքում: Հենց այդ՝



1965-66 թվականներից էլ, ընկերություն ենք անում: Ճանաչում եմ նրան՝ նախ որպես սպորտի լավ կազմակերպիչ, լավ ֆուտբոլիստ և, ամենից կարևորը, հենց սկզբից էլ նրա մեջ տեսա ազգին, հայրենիքին, բնատուր նվիրվածություն: Նրան միշտ էլ մտահոգում էր Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցը: Այդ առումով առաջին համատեղ մեծ աշխատանքը եղավ այն ժամանակ, երբ Բագրատ Ուլուբաբյանի գլխավորությամբ Ղարաբաղում 1960-ականների կեսերին ստորագրահավաք սկսվեց: Ռ-ազմիկն այդ ստորագրահավաքը նպատակային իրականացնելու համար լուրջ աշխատանք էր տանում առող-

ջապահության և սպորտի բնագավառներում: Լինելով Բագրատ Ուլուբաբյանի անմիջական ներկայացուցիչը՝ նա ինձ ու Մեփյան Հենրիկին առանձին օրեկտներում ստորագրություններ հավաքելու հանձնարարական էր տվել:

Միացման հարցը նրա սկզբույթն էր, նրա պոռթկումը: Իսկ երբ սկսվեց ազգային ազատագրական շարժումը, առաջնորդներից մեկն էլ ինքն էր:

Մենք համատեղ աշխատել ենք «Կռունկ» կոմիտեում: Պաշտպանության հանձնաժողովն էր ղեկավարում, Ռոլենդ տեղակալն էր, ես էլ այդ հանձնաժողովում էի:

Այդ ընթացքում նա լիովին քացահայտեց իր կազմակերպչական աներևակայելի ընդունակությունները:

Պիտի ասեմ, որ մեր շարժումը հիմնականում ուներ քաղաքական բնույթ ու ուղղվածություն, և շատերը չէին էլ մտածում, թե կարող է պատերազմ լինել: Բայց առաջին իսկ օրվանից Ռ-ազմիկն անընդհատ պնդում էր, թե պետք է զինվել, եթե չունենք հրացաններ՝ պետք է այլ միջոցներ փնտրել:

Հիշում եմ մի դեպք: Երբ լուր հասավ շտաբ, թե Կիչան-Գլազանչի հատվածում ընդհարումներ են սկսվել ադրբեջանցիների ու հայերի միջև, և մերոնք զենք են խնդրում, իսկ դա այն ժամանակահատվածն էր, երբ մարզի հայ բնակչությունից հավաքել էին բոլոր որսորդական հրացանները, Ռ-ազմիկը հավաքեց մեզ և ասաց, որ պետք է մի բան անենք, վիճակն այնտեղ շատ բարդ է: Ես իմ որսորդական և տոզ (որ մարտական զենք է համարվում) հրացանները թաքցրել էի նախօրոք: Երկուսն էլ Ռ-ազմիկի միջոցով հանձնվեց ծանր կացության մեջ հայտնվածներին օգնության շտապող մեր տղաներին: Եվ, ինչպես տղանե-

որ վկայեցին հետագայում, այդ երկու հրացանները մեծ դեր կատարեցին ադրբեջանցիներին քշելու գործում:

Ռ-ազմիկը շատ էր կարևորում այն հարցը, որ մեզ Հայաստանի հետ միացնող ճանապարհին չպետք է ադրբեջանական պատնեշներ լինեն:

Մի օր եկավ, թե՛ գնում ենք Քարին-տակ, գործ կա: Գյուղ չմտած՝ անտառի եզրին նստոտեցինք՝ քիչ հանգստանալու: «Եկանք, բա չմտնե՞նք գյուղ», – ասացի: Ասաց՝ մենակ գնա, իսկ ինքը մյուսների հետ շարունակեց ճանապարհը դեպի Բերդաձոր: Հետագայում իմացա, որ այդ տեղամասում վտանգի լուրջ պահեր կային, խնայեց ինձ:

Հաճախակի էր, որպես պաշպանության շտաբի ղեկավար, ազգամիջյան ընդհարումների գոտիներում լինում: «Վիրավոր կա, – ասում էր, – պիտի գնալ, բայց՝ գիշերը»: Վիրավորներին թաքցնում էին անվտանգ վայրերում: Բուժում էինք տեղում, հիվանդանոց տանելը վտանգավոր էր: Ինքն էլ էր գալիս, երբ գգում էր, որ փոքր իսկ վտանգ կա:

Մի օր էլ ասաց, որ պիտի գնանք իրենց գյուղը՝ Կաղարծի: Դպրոցի տնօրեն Արմեն Սարգսյանը երկու վիրավոր էր թաքցրել՝ մեզ էր սպասում: Առաջին բժշկական օգնություն ցուցաբերելուց հետո վիրավորներին շտապ ուղարկեցինք Երևան:

Ռ-ազմիկ Պետրոսյանի, Համլետ Գրիգորյանի, Սերգեյ Գավթյանի հետ գնացել էինք Մոսկվա, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորների համար հետներս տանել էինք մեր շարժման իրավացիությունը հաստատող բազմաթիվ փաստաթղթեր: Տարբեր մակարդակների հանդիպումներ ենք կազմակերպել այնտեղ: Ռ-ազմիկի հետ կապված մի դեպք եմ հիշում: «Մոսկվա» հյուրանոցում էինք և վաղ առավոտյան դուրս էինք եկել ճեմասրահ՝



պատգամավորներին հանդիպելու ու նրանց հետ խոսելու համար: Երկուսով նստած զրուցում էինք, երբ հանկարծ նկատեցինք ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր, աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանին: Երբ մոտեցավ մեզ՝ Ռ-ազմիկն իսկույն վեր կացավ և մի շատ տարօրինակ ձևով դիմեց նրան.

– Վիկտոր Համագասպովիչ, ասացեք, խնդրեմ, ի՞նչ եք արել հայ ժողովրդի պաշտպանության համար:

Ակադեմիկոսը մի պահ հապաղեց.

– Բո, բո, ո՞ր թե՛ ինչ ես արել:

– Չենք ստեղծե՞լ ես:

– Ինչպես՝ չէ, հեռահար հրթիռների երկու հարմարանքներ:

– Որտե՞ղ են տեղակայված:

– Հեռավոր Արևելքում:

– Իսկ դրանք մեզ այստեղ՝ Հայաստանում են պետք: Գիտե՞ք, մենք «վերամբարձ կռունկը» քողարկած ցույց ենք տալիս թուրքերին և ասում, որ դա Համբարձումյանի ստեղծած գաղտնի զենքն է, ու նրանք վախենում են: Պատերազմ է սկսվելու, գնացեք՝ ֆիզիկոսներով խելք-խելքի տվեք ու զենք պատրաստեք:

Սի օր էլ Ֆոտենի հետ պիտի հանդիպում դասավորեինք Մոսկվայում գտնվելու ընթացքում: Երևանցի տղաներից մեկի՝ Ալբերտի հետ Ռ-ազմիկն իջել էր հյուրանոցի առաջին հարկ: Հանկարծ վերելակի մուտքի մոտ հանդիպեցին երկու մեծ կողովով մի աղբբեջանցու: Ռ-ազմիկն աղբբեջաններեն լավ գիտեր, և շատ սիրալիր տոնով ասաց.

– Համեցեք, եկեք, – տեղ տվեց դեպի վերելակի մուտքը:

– Մուալիմ, այս բաներն ուղարկել են, – Ռ-ազմիկին ազգակից կարծելով՝ աղոթեջանցին խնդրեց ցույց տալ, թե ուր պիտի բարձրանա:

– Պետք չէ բարձրանալ, քեզ կտեսնեն, – առարկեց Ռ-ազմիկը:

Աղոթեջանցին անխոս թողեց կողովներն ու հեռացավ:

Կողովներում ամեն ինչ կար, նույնիսկ՝ կոնյակ: Պատգամավորներից ում պետք էր՝ հանդիպեցինք, հյուրասիրեցինք այդ ամենով:

Ռ-ազմիկը շատ դաժան օրեր ապրեց, նրան շատ չարչարեցին բանտարկության ընթացքում: Եվ երբ արդեն Ստեփանակերտի բանտ էին տեղափոխել, անհրաժեշտ էր հետին թվով բժշկական փաստաթղթեր ձևակերպել այն մասին, որ նա վաղուց է տառապում երիկամների ծանր հիվանդությամբ: Ստացվեց այնպես, որ զինվորականները Ռ-ազմիկին զննելու համար կանչեցին «Շտապ օգնության» կայանի բժիշկ Սաշա Գրիգորյանին: Նա ևս հաստատեց Ռ-ազմիկի լուրջ հիվանդությունը և ասաց, որ պետք է անհապաղ հիվանդանոց տեղափոխել՝ ուռուցքաբան-բժշկի ցույց տալու համար: Ես նույնպես նույն փտորոշումն էի տվել: Ստուգեցին դիսպանսերի փաստաթղթերն ու պարզեցին, որ Ռ-ազմիկն, իրոք, մեկ տարուց ավելի է՝ ինչ բուժվում է այդտեղ: Տեղափոխեցին հիվանդանոց, բայց նորից հարց բարձրացրինք, որ մեր պայմաններում դա դժվար բուժելի հիվանդություն է, պետք է Երևան տեղափոխել: Հարցը լուծվեց, թեև Կիրովաբադից էլ էին բժիշկներ հրավիրվել: Երևանում, հանրապետական հիվանդանոցի գլխավոր բժշկի վիրաբուժության գծով տեղակալը Հենրիկ Սեփյանն էր: Մնացած հարցերն էլ նա լուծեց: Ռ-ազմիկը հիվանդանոցում չպառնկեց: Փաստորեն՝

կարողացանք նրան ազատել բանտից: Մի որոշ ժամանակ մնաց Երևանում, ՕՄՈՆ-ի ուշադրությունից հեռու լինելու համար: Այնուհետև, մեր մի քանի ընկերների (Ա. Մանուչարով, Ռ. Քոչարյան, Ռ. Աղաջանյան) հետ ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր ընտրվեց:

Ռ-ազմիկը շատ արդարամիտ է, սկզբունքային, ճշմարտախոս, ընկերության մեջ սուտ ու կեղծիք չհանդուրժող: Ես ականատես եմ եղել, թե ինչպիսի գործունեություն ծավալեց Ռ-ազմիկը (մյուս ընկերների հետ)՝ 1988-ի պատմական նստաշրջանի իրականացումն անպայման հաջողությամբ պսակելու համար: Որոշ պատասխանատու մարդիկ նստաշրջանին մասնակցելու-չմասնակցելու հարցում դեռևս տատանվում էին: Ռ-ազմիկի հետ գիշերներն էինք այցելում նրանց և համոզում, որ իրենց մասնակցությունը պարտադիր է: Ռ-ազմիկի մասին շատ բան կարելի է ասել: Ժողովուրդն էլ է տեսնում, թե ինչպես է դրսևորել իրեն Արցախի համար այն դժնդակ օրերին, և՛ ինչ կեցվածք ունի այսօր այդ լավ ազատամարտիկը, լավ մարզիկը, լավ ընկերն ու ազգասեր-հայրենասեր անհատականությունը:

## **Կառլեն Անդրանիկի ՍԻՄՈՆՅԱՆ.**

*ՀՀ և ԼՂՀ վաստակավոր մարզիչ,  
(1992-2003` ԲՄՍ «Ղարաբաղ» ՖԱ նախագահ)*

Ռ-ազմիկ Պետրոսյանին ճանաչում եմ դեռևս այն ժամանակվանից, երբ Երևանի «Արարատ» թիմից հրավիրվել էր Ստեփանակերտի հավաքականում խաղալու: Մեծ աշխուժություն սկսվեց, չնայած մինչ այդ էլ ֆուտբոլը մեր երկրամասում թիվ 1 մարզածնն էր համարվում: Թիմը սկսեց ավելի լավ խաղալ Ադրբեջանի հանրապետական առաջնությունում:



Այդ տարիներին համամիութենական «Կաշվե գնդակ» մրցույթ էր անցկացվում բակային թիմերի միջև: «Ղարաբաղ» թիմում խաղացող մարզիչ Ռ-ազմիկն այդ առաջնությունում հաղթող ճանաչվածներից թիմ էր հավաքել, պարապում էր հետևները: Այդ տարիներին էլ նախկինի տեղում սկսվեց նոր մարզադաշտի կառուցումը, իսկ մինչ այդ՝ պարապմունքները (առաջին սաներից մեկն էլ ես էի) անց էին կացվում Վերածննդի (նախկինում՝ Վ.Ի.Լենինի անվան) հրապարակում, զինավանի (ԿՊՇ-ի մերձակա) մարզադաշտում և «Օկտյաբր» կինոթատրոնի դիմացի դաշտում: Մասնակցել ենք ԼՂ և Ադրբեջանի առաջնություններին: Մարզային առաջնություններում միշտ չեմպիոն ենք դարձել, իսկ Ադրբեջանի առաջնություններում գրավել մրցանակային տեղեր:

Ես Ռ-ազմիկ Պետրոսյանի մոտ պարապել եմ 1965 թվականից սկսած: Ռ. Պետրոսյանին ինչքան ճանաչում եմ՝ սպորտի, հատկապես՝ ֆուտբոլի մեծ մասնագետ է: Այդ թվականներից սկսած մինչև 1980-ականների սկիզբը

ինչքան մարզիկ է ճանաչվել որպես լավ ֆուտբոլիստ, բոլորն էլ իր սաներն են, այդ թվում՝ և ես: Իր սաներից՝ Էդուարդ Բաղդասարյանն ու Գագիկ Ծատրյանը ընդգրկված էին ԽՍՀՄ պատանեկան հավաքականում, Բենիամին Բաբայանը ԱրՊՀ դոցենտ է, Էդուարդ Բաղդասարյանն ու ես ֆուտբոլի գծով արժանացել ենք հանրապետության վաստակավոր մարզչի կոչման, սպորտի վարպետներ են Վլադիմիր Պետրոսյանը, Սլավա Գաբրիելյանը, Վալերի Հայրիյանը (ԽՍՀՄ երկրորդ խմբի վարպետ թիմերի ռմբարկու, 140-ից ավելի գոլերի հեղինակ), Գագիկ Ծատրյանը և Սլավա Գաբրիելյանը ավարտել են Մոսկվայի Ֆուտբոլի մարզչական բարձրագույն դպրոցը:

1977-ին Ռ. Պետրոսյանի ղեկավարած թիմը, երբ ինքը կրկին խաղացող մարզիչ էր, դարձավ հանրապետության չեմպիոն՝ ներգրավվելով ԽՍՀՄ առաջնության մեջ: Իր հավաքած միավորներով Ռ. Պետրոսյանին դեռևս այդ տարիներին պետք է հանրապետության վաստակավոր մարզչի կոչում շնորհվեր, բայց Ադրբեջանի ազգայնական ղեկավարները, հաշվի առնելով նրա հայրենասիրական զգացումները, նրան այդ կոչման չարժանացրին:

Իր սաները, համարյա բոլորն էլ, թեև այլևս չեն խաղում, բայց շարունակում են աշխատել ֆուտբոլի բնագավառում: Մեր վետերանների «Ղարաբաղ» թիմը Հայաստանի առաջնությունում երկու անգամ գրավել է երկրորդ տեղը, մեկ անգամ՝ առաջին:

Ֆուտբոլից բացի Ռ. Պետրոսյանը զգալի ներդրում ունի մեր ազգային ազատագրական շարժման մեջ: Երկուսս էլ ակտիվորեն մասնակցել ենք բոլոր ձեռնարկումներին (ընդհատակյա, պարտիզանական, բանակի ստեղծման և այլն)՝ տարբեր ուղղություններում:

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

**ՈՒՋՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՀԱՐՑԱԶԲՈՒՅՑՆԵՐՈՒՄ  
ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

**«ՇԱՀՈՒՄՅԱՆՆ ՈՒ ԳԵՏԱՇԵՆԸ ՊԵՏՔ Է ԱԶԱՏԵՆՔ՝  
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՄ ՈՒԺՈՎ»**

*Կոսովոյի չեռք բերած անկախությունը, Հարավային Օսեթիայի վերջին դեպքերը, դրան հետևած նրա և Աբխազիայի անկախության ճանաչումը նոր ուժով սևեռեցին միջազգային հանրության ուշադրությունը չճանաչված հանրապետությունների հարցի լուծմանը: Ղարաբաղի շուրջ ծավալված իրավիճակի շուրջ մենք գրուցեցինք Արցախի վերերանների միության փոխնախագահ, 1988-1990թթ. ամբողջ Արցախի ջոկատների ղեկավար և «Կռունկ» կոմիտեի անդամ Ռազմիկ Պետրոսյանի հետ:*

**– Հարավային Օսեթիայի վերջին դեպքերի ժամանակ Աբխազիան բավականին ակտիվ քաղաքական գործողություններ ձեռնարկեց: Ինչո՞վ է պայմանավորված Ղարաբաղի արտաքին քաղաքականության համեմատական պահվածությունը:**

– Մենք Օսեթիայի հետ լավ հարաբերությունների մեջ ենք: Մեր և իրենց ղեկավարության մեջ ակտիվ շփում կա: Մենք պաշտպանում ենք Օսեթիան և նրա անկախությունը: Բայց հանգամանքների բերումով Հայաստանի ղեկավարությունը չի կարող որևէ գործողություն ձեռնարկել,

քանի որ այստեղ Հայաստան-Վրաստան հարաբերությունների հարց կա: Ամբողջ արտերիան գալիս է Փոթիի և Բաքումի նավահանգիստներից: Բոլորս գիտենք, որ օստթական կողմն է ճիշտ, որ Սահակաշվիլին հարձակվեց Օսեթիայի վրա և ընկավ ռուսների պատրաստած թակարդը: Ադրբեջանական կայքերը առաջին օրերը գրում էին, որ վրացիները ճիշտ արեցին և որ իրենք ավելի շուտ պետք է Ղարաբաղի վրա հարձակվեին: Իսկ դեպքերի զարգացումից հետո ադրբեջանցիները հասկացան, որ ուժային միջոցով չի կարելի հարցը լուծել:

**– Իսկ արդյոք նպատակահարմար չէ՞, որ Ղարաբաղը Հարավային Օսեթիայի և Աբխազիայի հետ մասնակցեր չճանաչված հանրապետությունների ասոցիացիային:**

– Ղարաբաղի ներկայացուցիչները որպես դիտորդ միշտ ներկա են լինում այդ ասոցիացիայի հանդիպումներին: Մենք մինչև անգամ օգնություն էինք ցուցաբերում նրանց: Ուղղակի մեզ այդտեղ չեն ընդգրկում, քանի որ Ղարաբաղի կարգավիճակը մի քիչ ուրիշ է: Մեր ֆորմատը Մինսկի խումբն է:

**– Իսկ ի՞նչն է պատճառը, որ Կոսովոյի, Հարավային Օսեթիայի, Աբխազիայի անկախությունը ճանաչվեց, իսկ Ղարաբաղինը, որը ավելի շատ հիմնավորումներ ունի, դեռ՝ ոչ:**

– Պատճառը Հայաստանի ղեկավարության, ինչպես նաև Ռուսաստանի պասիվությունն է: Հիմնականում՝ Հայաստանի: Բացի այդ, ո՞վ իրավունք ունի, բացի Ղարաբաղից՝ մասնակցել Ադրբեջանի հետ բանակցություններին՝ ոչ ոք, քանի որ պատերազմը հաղթել է Ղարաբաղը: Կասկած չկա, որ Հայաստանը օգնել է, բայց կոնֆլիկտի կողմը դարաբաղցիներն են եղել: Այդ իսկ պատճառով մենք պետք է մասնակցենք բանակցություններին, Հայաստանը մասնակցելու իրավունք չունի:

– **Քրայգայի կողմից հնչեցրած, այսպես կոչված, մադրիդյան սկզբունքներին ինչպե՞ս եք վերաբերվում: Մասնավորապես ազատագրված մերձդարաբաղյան 7 շրջաններից հայկական զորքերը հանելուն և փաստորեն ԼՂՀ-ն անվտանգության գոտուց զրկելուն:**

– Բրայգան մի անգամ նալին է խփում, մեկ անգամ՝ մեխին. Ղարաբաղում մի բան է ասում, Հայաստանում՝ ուրիշ: Այդ իր սկզբունքը ուտոպիա է: Երբ նա խոսում է Ղարաբաղի անվտանգության մասին, պիտի հասկանա, որ մենք արդեն այն ունենք: Սրանից լավ կարգավիճակ և երաշխավորություն արդյոք կարո՞ղ ենք ունենալ: Մենք լավ պաշտպանություն ունենք, լավ դիրքորոշված ենք, ադրբեջանցիներն էլ մեզ այնտեղից խփել չեն կարող: Սա մեզ ավելի է ձեռնառու:

– **Քրայգայի հաջորդ սկզբունքն այն է, որ տարածաշրջան պետք է մտցվեն խաղաքարաբ ուժեր: Ինչպե՞ս եք դրան վերաբերվում: Տասնչորս տարի կրակի դադարեցման ռեժիմը պահպանվել է առանց միջազգային ուժերի: Արդյոք դա չե՞ք համարում պատրվակ ՆԱՏՕ-ի ուժերը տարածաշրջան մտցնելու համար:**

– Մեզ հարկավոր չեն այլ ուժեր: Մեզ հարկավոր է, որ համաշխարհային հանրությունը ընդունի Ղարաբաղի անկախությունը: Իսկ իրենց հիմնական նպատակը այդ ուժերը Իրանին մոտեցնելն է:

– **Քրայգայի հնչեցրած սկզբունքներից մեկն էլ առաջարկում է Ադրբեջանին հանձնել այդ յոթ շրջանները, իսկ տաաը տարի անց անցկացնել հանրաքվե, որում կորոշվի Ղարաբաղի կարգավիճակը: Այդ հանրաքվե կոչեցյալին ինչպե՞ս եք վերաբերվում:**

– Մենք մի հանրաքվե ունեցել ենք, որին 1991թ. մասնակցել են Շահումյանն ու Գետաշենը: Այդ հանրաքվեի



նախաձեռնողներից մեկը ես եմ եղել: Մենք անկախությունը արդեն 1991 թվականին ձեռք ենք բերել, ուրիշ անկախություն մեզ հարկավոր չէ: Մենք ոչ Լաչինը կտանք, ոչ Քելբաջարը, ոչ Գետաշենը, ոչ էլ Շահումյանը: Մնացածների մասին կարելի է վիճել:

– **Իսկ եթե ադրբեջանցիները կամովի՞ չտան Շահումյանը:**

– Մեկ է, մենք Շահումյանն ու Գետաշենը պետք է ազատենք՝ բանակցություններով կամ ուժով: Դրանք մեր պատմական տարածքներն են՝ պատմական հուշարձաններով:

– **1989 թվականին Ղարաբաղի հայ բնակչությունը 198 հազար էր, հիմա բնակչության քանակը քչացել է: Ո՞րն է պատճառը:**

– Դեկավարությունը պետք է այնպես անի, որ ժողովուրդը աշխատատեղեր ունենա: Մեզ ներդրումներ են հարկավոր:

– **Իսկ Շուշիի հետ կապված Ադրբեջանը պնդում է, որ այն պետք է ընդհանրապես հանձնվի:**

– Իմ կարծիքով, Ստեփանակերտից Շուշի պետք է շենքեր կառուցել և իրար միացնել, որ Շուշիի անունը չլինի: Ինչպես նաև արժեք վերականգնել առաջվա Ստեփանակերտից Շուշի տանող ճոպանուղին: Շուշին պատմական քաղաք է, և այն հանձնելու իրավունք չունենք:

– **Ժամանակին Ղարաբաղում մոտ 20-30 հազար ադրբեջանցի էր ապրում: Հիմա նրանց վերադարձի մասին են խոսում: Կընդունե՞ք նրանց:**

– Եթե Ղարաբաղի անկախությունը ճանաչվի, թող գան, չնայած 20 հազարը չեն գա՝ քիչ կգան: Եթե գան՝ ապրեն, ապա մի քանի օրից իրենց Ադրբեջանն են հայիռելու: Այստեղ ապրող ադրբեջանցիները այնտեղի ադրբեջանցիների հետ հայերից վատ էին: Երբ Ադրամից մարդ



*Ռազմիկ Պեպրոսյանը  
թոռների հետ:*



*Ռազմիկ Պեպրոսյանն իր եղ-  
բայրների ու քույրերի հետ:*



*Ռազմիկ Պեպրոսյանի թոռները:*



*Ռազմիկ Պերրոսյանը, Վալերի Պերրոսյանը, Գագիկ Պերրոսյանը՝  
Կաղարծիռում, ծնողների գերեզմանի մոտ:*



*Ռազմիկ Պերրոսյանը, Ջարմիկ Պերրոսյանը,  
Վալերիկ Պերրոսյանը՝ Աշան գյուղում,  
քեռու՝ Լևոն Հարությունյանի մոտ:*



*Ռազմիկ Պերրոյանը, Ասյա Պերրոյանը, Սվետլանա Պերրոյանը, Ժաննա Պերրոյանը, Վալերի Պերրոյանը  
և Ջարմիկ Պերրոյանը:*



*Ռազմիկ Պերրոյանը ընկերների ու բոռների՝  
Ռազմիկի և Ալենի (վերևում) հետ:*



*Ռազմիկ Պեյրոսյանը  
Սերգեյ Դավթյանի  
և Արկադի Ասրյանի հետ:*



*Ռազմիկ Պեյրոսյանը՝  
համազգեստով:*



*Ռազմիկ Պեյրոսյանը վերերան ֆուտբոլիստներ  
Լեոնիդ Հովհաննիսյանի, Վալերի Հայրապետյանի,  
Կառլեն Սիմոնյանի և Բենիամին Բարսյանի հետ:*

էր գալիս, նրանք մեզ հետ այդ թուրքերին ծեծում էին: Մինչև անգամ այն տարիներին ստորագրել էին, որ նրանց համար մեկ է՝ Ղարաբաղը Հայաստանի<sup>օ</sup>նը կլինի, թե՞ Ադրբեջանինը: Բայց եթե Ղարաբաղը անկախ չլինի, թույլ չենք տա, որ գան:

– **Իսկ եթե հիմա, ենթադրենք, որոշվի, որ մադրիդյան սկզբունքները պետք է իրագործվեն, Ղարաբաղի բնակչությունը դրան դեմ կկանգնի<sup>օ</sup>:**

– Անկասկած, չի ենթարկվի: Եվ Հայաստանի, և Ղարաբաղի ղեկավարները դա լավ գիտեն: Բացի այդ, մենք երբեք թույլ չենք տա, որ մեր թիկունքում, ասենք՝ Քելբաջարում կամ Լաչինում գան, ադրբեջանցիներ ապրեն: Դա նույն բանը կլինի, որ ասենք նրանց, որ գան, մեր գլխին նստեն: Դա ուտոպիա է: Արևմուտքում և հյուսիսային մասում մենք սահման պետք է ունենանք Հայաստանի հետ, հարավային մասում՝ Իրանի և արևելքում՝ Ադրբեջանի հետ:

– **Իսկ եթե միանգամից 1989թ. դեկտեմբերի 1-ի Ղարաբաղի և Հայաստանի վերամիավորման որոշումն իրագործե<sup>օ</sup>նք:**

– Ուշացել ենք: Դա Լևոնի ժամանակ պետք է անեինք, բայց Լևոնը չհասկացավ: Ես անձամբ դրա մասին ժամանակին իրեն ասում էի, բայց նա դեմ էր:

Հիմա գլխավորը Ղարաբաղը պետք է շենացնենք և զարգացնենք: Հիշում եմ, խորհրդային կարգերի ժամանակ 220 հազ. տ խաղող Հայաստանն էր տալիս, 180 հազ. տ՝ Ղարաբաղը: Իսկ եթե հիմա Ղարաբաղը թեկուզ 100 հազ. տ խաղող տա, ամեն ինչով էլ իրեն կապահովի. և՛ բյուջեն, և՛ բանակը:

***Զարուհի Բաբոխանյան***

*Սյրեփանակերպ-Երևան*

*«Իրավունք», № 68 (1560),*

*օգոստոսի 29-սեպտեմբերի 1, 2008թ.*

**ՈՒՍՏԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԻՆՉՊԻՍԻ ԽՈՐՀՐԳԱՐԱՆ ԷԼ  
ՈՐ ԼԻՆԻ, ԵԹԵ ԸՆԳԳԻՄՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ ԵՐԿԻՐԸ  
ՆՈՐՄԱԼ ՉԻ ԿԱՐՈՂ ՉԱՐԳԱՆԱԼ**

**– Ինչպիսի՞ն էք գնահատում ներկայիս խորհրդարանի գործունեությունը:**

– Գնահատում եմ որպես թույլ, և հետո էլ՝ նախաձեռնողական ոչինչ չկա: Ինչպիսի խորհրդարան էլ որ լինի, եթե ընդդիմություն չկա՝ երկիրը նորմալ չի կարող զարգանալ:

**– Խորհրդարաններին ներհատուկ երեք գործառույթներից (օրինաստեղծ գործունեություն, գործադիր մարմնի վերահսկողություն և քաղաքական մարմնի գործառույթ), Ձեր կարծիքով, ներկայիս խորհրդարանը որո՞ւմ է առավելա աչքի ընկել:**

– Մյուս երկուսը հնարավոր է, բայց կառավարության վերահսկողությունը չի իրականացնում: Եթե իրականացնի՝ այսքան շենքեր կկառուցե՞ն՝ մարդկանց համար աշխատատեղ ստեղծելու փոխարեն: Խորհրդարանի հիմնական նպատակներից մեկն աշխատատեղերի ստեղծմանը նպաստելը պետք է լինի: Այն գումարները, որոնք ծախսվում են, պետք է ուղղվեն աշխատատեղերի ստեղծմանը:

**– Ինչպիսի՞ն կուզեիք իդեալում տեսնել ԼՂՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովը և ինչպիսի՞ն իրականում հնարավոր է ունենալ:**

– Իրականում պետք է այնպիսի Ազգային ժողով ստեղծվի, որը ժողովրդի կարծիքը հաշվի առնի: Հետո՝ խորհրդարանը պետք է անպայման լինի տեղերում, շրջի ու տեսնի, թե ժողովուրդն ինչ է ուզում, որպեսզի իմանա՝

ինչ որոշում կայացնել այս կամ այն աշխատանքի իրականացման համար: Խորհրդարանը պետք է անկեղծ լինի ժողովրդի հետ, նրա վշտով և ցավով ապրի: Այս պիտի լինի խորհրդարանի գլխավոր նպատակը:

Ինչ վերաբերում է հնարավոր լինելուն՝ դա կախված է յուրաքանչյուր մարդուց. ընտրությունների ժամանակ պետք է այնպիսի մարդկանց ընտրեն, ովքեր իրենց տված խոստումները կատարեն, չխաբեն: Մի քանի կոպեկով իր ձայնը չպիտի ծախի ընտրողը: Ղարաբաղում նորմալ խորհրդարան ունենալու հնարավորություն կա, բայց պետք է ձգտել դրան ու պայքարել: Գտնում եմ, որ այստեղ պետք է ղեկավարեն այն մարդիկ, ովքեր խելոք ու լավ մասնագետներ են՝ անկախ կուսակցական պատկանելությունից:

– **Ըստ Չեզ, օրենսդրական դաշտում բոլո՞ր պայմաններն են ստեղծված քաղաքական դաշտի կայացման, ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացման և լիարժեք խորհրդարանի ձևավորման համար:**

– Ոչ: Առաջին հերթին թեկնածուների համար հավասար պայմաններ պետք է ստեղծվեն: Ազգային ժողովն անշահախնդիր պետք է լինի՝ նվիրված երկրին, այլ ոչ թե կուսակցությանը կամ ղեկավարությանը, և հիմք պետք է ընդունի միայն Ղարաբաղի Սահմանադրությունը: Նույն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պետք է առաջարկություն արվի, որ անշահախնդիր լինի ԱԺ-ն:

– **Արդյո՞ք ներկայիս քաղաքական դաշտը կարող է բարենպաստ հող հանդիսանալ լիարժեք խորհրդարան ունենալու համար:**

– Զաղաքական դաշտը մի քիչ թույլ է: Կուզենայի, որ



բոլորն էլ ազգային-ազատագրական պայքարի նպատակներից ելնելով գործեն: Բոլորը պետք է հասկանան, որ Ղարաբաղը պետք է ազգասերները ղեկավարեն: Կառավարությունում պետք է այնպիսի ազգասերներ լինեն, ովքեր որպես գլխավոր նպատակ ընդունեն Ղարաբաղի ժողովրդագրական վիճակի բարելավումը: Եվ եթե այս ուղղությամբ քայլեր չեն արվում, ապա ոչ այդպիսի կառավարությունն է պետք, ոչ էլ Խորհրդարանը: Սա շատ կարևոր է՝ Ղարաբաղի հաղթանակը հենց ժողովրդի թվաքանակի աճն է: Պետք է այստեղ ապրի 250 հազարից ավելի մարդ, այլ ոչ թե նախկին վարչապետի պես խոստանան բնակչության թվաքանակը 300 հազարի հասցնել, բայց հինգ տարում ոչինչ չանեն:

Նորմալ կուսակցություն, կարծում եմ, չկա Ղարաբաղում, անշահախնդիր կուսակցություն չկա: Եթե այն իր կուսակցական շահերն է միայն պաշտպանում, ապա ո՞ւմ է պետք: Ոչ մեկին այն պետք չէ: Ժողովրդի շահերը պետք է պաշտպանել:

**– Ընդդիմադիր քաղաքական ուժերի բացակայության պայմաններում ինչպե՞ս եք պատկերացնում քաղաքական հավասարակշռությունը:**

– Ընտրությունների ժամանակ անպայման պետք է ընդդիմադիր ուժ լինի: Այդ գործառույթը դաշնակցականները լավ չեն կատարել: Եթե երկիրը ղեկավարում է մի կուսակցություն՝ մյուսը պետք է ընդդիմադիր լինի, այլ հարց չկա այստեղ: Կամ իշխող կուսակցության հետ պիտի համախմբվես-միավորվես ու միասին պատասխանատվություն ստանձնես, կամ պիտի ընդդիմություն լինես: Առանց ընդդիմադիր ուժի ոչ մի դեպքում երկիր չես կարող ղեկավարել՝ ինչքան էլ ուզում ես լավ ղեկավար եղիր:

**– Չե՞ք կարծում, որ 100-տոկոսանոց համամասնական ընտրակարգով ընտրված պրոֆեսիոնալ խորհրդարանի անկայությունը շատ ավելի կնպաստեր երկրի զարգացմանը:**

– Ես չեմ ընդունում դա: Ղարաբաղում պետք է դեկավարեն ղարաբաղցիները, այլ ոչ թե կուսակցությունները. սա է իմ դիրքորոշումը: Եվ այն պատգամավորը, ով չի մտածում Ղարաբաղի ժողովրդագրական վիճակի բարելավման մասին՝ նա պատգամավոր լինելու իրավունք չունի: Գտնում եմ, որ պետք է խորհրդարանի կեսն ընտրվի համամասնական, մյուս կեսն էլ մեծամասնական ընտրակարգով: Իսկ կուսակցությունները Ղարաբաղում ժողովրդի թվաքանակը շատացնելու ծրագիր պետք է ունենան, եթե չունեն, ապա նրանք անելիք չունեն Ղարաբաղում:

**– Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն կլինի ԼՂՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովի կուսակցական կազմը:**

– Ճիշտն ասած՝ չգիտեմ, ծրագրերին դեռ ծանոթ չեմ: Նորից կրկնեմ, այն կուսակցությունը, որն ունենա վերոնշյալ՝ ժողովրդի թվաքանակը շատացնելու ծրագիր և այդ ուղղությամբ քայլեր անի՝ նա էլ հաղթելու է: Բայց պետք է դա արվի, այլ ոչ թե մնա թղթի վրա: Եթե պատգամավորը խոստանում է, ապա պետք է կատարի իր խոստումը: Դրա հմար պատգամավորին հետ կանչելու մեխանիզմ պետք է լինի: Իր ասածների համար մարդը պետք է պատասխանատու լինի:

Կուզեի նշել նաև, որ սեփականաշնորհման ժամանակ շատ են սխալներ թույլ տրվել: Պետք է այնպես անել, որ Ղարաբաղում ինչ հնարավորություն կա՝ ղարաբաղցիները օգտվեն դրանից: Այսինքն՝ ամեն մի ընտանիքի 3-5 հեկտար հող տրամադրվի, որպեսզի ղարաբաղցին իրեն

հողի սեփականատերը զգա, իմանա, որ եկամուտ ունի այստեղ: Եվ եթե հնարավորություն էլ չունենա այն մշակել, ապա վարձակալական հիմունքներով տրամադրի պետությանը և որոշակի եկամուտ ստանա: Կամ, ասենք, հնարավորություն ստեղծեն, որ Ղարաբաղի խոշոր ընկերություններում բաժնետոմսեր ունենան ղարաբաղցիները: Կարծում եմ, դրսում բնակվող ղարաբաղցիները եթե իմանան, որ այստեղ նման պայմաններ են ստեղծված, ապա կտեղափոխվեն այստեղ՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով:

*«Անալիտիկոն», Սյրեփանյակերպ, № 1 (13),  
հունվար, 2010*

## ԼՂՀ-Ն ՊԵՏԻ ՍԱՀՄԱՆ ՈՒՆԵՆԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԻՐԱՆԻ ԵՎ ԱԳՐԲԵՉԱՆԻ ՀԵՏ

– Պարոն Պետրոսյան, ինչպե՞ս եք գնահատում դարա-  
բաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ ընթացող բա-  
նակցությունների ներկա փուլը:

– Իմ կարծիքով, ընդհանրապես՝ սկսած Լևոն Տեր-  
Պետրոսյանից մինչև Ռոբերտ Քոչարյան ու Սերժ  
Սարգսյան, բանակցությունները սխալ հունով են գնացել,  
նրանք իրավունք չունեին գնալ այդպիսի բանակցությու-  
նների: Իրավական ուժ ունի միայն 1994 թ. հրադադարը, որ  
ստորագրել են Ղարաբաղը, Հայաստանը, Ադրբեջանը և  
Ռուսաստանը: Մնացած բոլորը, այսքան տարիների բա-  
նակցությունները ոչ մի արդյունք չեն տվել և չեն էլ կարող  
տալ, որովհետև իրական կողմը Ղարաբաղն է, որ անկա-  
խացել է Ադրբեջանից, և ինքը պետք է գնա բանակցու-  
թյունների, որպեսզի ասի՝ ինչ է տալու, ինչ չի տալու, ինչ է  
վերցնելու, ինչ չի վերցնելու և այլն: Բացի դրանից, ունենք  
1991 թ. հանրաքվե, որին մասնակցել են նաև Շահումյա-  
նի և Գետաշենի ենթաշրջանի բնակիչները: Հիմա դե՞մ են  
այդ հանրաքվեին: Ստացվում է, որ Հայաստանը գնում է  
բանակցությունների, ուրեմն դեմ է դրան, իսկ դա արդեն  
հակասություն է՝ Ղարաբաղի և Հայաստանի միջև: Կամ,  
ասենք, մեր Սահմանադրությունը, որտեղ գրված է, որ այդ  
տարածքները Ղարաբաղին են: Գրա համար էլ, իմ կար-  
ծիքով, ամենալավ տարբերակն այս ժամանակաշրջա-  
նում այն է, որ հենց Ղարաբաղը գնա բանակցություննե-  
րի: Հայաստանն էլ պետք է լինի բանակցությունների  
մասնակից, բայց հիմնական բանակցությունները պետք է  
վարի Ղարաբաղը:

**– Իսկ, Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ղարաբաղը չի մասնակցում բանակցություններին:**

– Դեռ այն ժամանակ չպիտի գնային բանակցությունների, այն ժամանակ պիտի ասեին, որ պատերազմող կողմը Ղարաբաղն է, քանի որ սկզբից էլ կողմերը Ղարաբաղն ու Ադրբեջանն էին: Ծիշտ է, Հայաստանը կամավորներով մեզ պաշտպանել է, բայց դա չի նշանակում, որ Հայաստանն է գնացել պատերազմի: Իմ կարծիքով, Հայաստանի ղեկավարներն իրենց վրա շատ մեծ պատասխանատվություն են վերցրել, չի կարելի այդպես: Ծիշտ է, Ղարաբաղի հարցը ողջ հայ ժողովուրդը պետք է լուծի, բայց հիմնականում՝ Ղարաբաղի ժողովուրդը և իշխանությունները: Կարծում եմ, այդ բանակցությունները ոչ մի արդյունք չեն տա:

**– Վերջերս հրապարակվել են այսպես կոչված «մադրիդյան սկզբունքները», ի՞նչ կարծիքի եք դրանց մասին:**

– Մադրիդյան սկզբունքները նույնպես մշակել են առանց Ղարաբաղի: Այն սկզբունքները, որ Բրյազան և մյուսներն են ասում, դրանք անընդունելի են մեզ համար: Ադրբեջանը մեզանից վերցրել է Շահումյանի շրջանը, Գետաշենի ենթաշրջանը, Մարտակերտի և Մարտունու մի մասը, և այս ամենից ելնելով են ասում, որ բանակցություններին պետք է Ղարաբաղը գնա, որպեսզի իմանա, թե ինչ է տալու և ինչ է վերցնելու: Առաջին պայմանն այս է՝ եթե ուզում են բանակցություններին Ղարաբաղը մասնակցի, ապա պետք է ճանաչեն Ղարաբաղը, Ղարաբաղի անկախությունը պետք է ճանաչեն:

**– Նկատի ունե՞ք ներկայի՞ս տարածքներով Ղարաբաղը:**

– Եթե հին տարածքով էլ ճանաչեն՝ նշանակություն չունի, պիտի ճանաչեն:

**– Հինը ո՞րն է՝ ԼՂԻՄ-ը:**

– ԼՂԻՄ-ի տարածքն էլ եթե ճանաչեն՝ միևնույն է: Ճանաչում ե՞ս՝ գալիս եմ բանակցությունների, չէ՛ չէ: Նրանք ասելու են այս ես վերցրել, մենք էլ ասելու ենք՝ դուք եք այս վերցրել, մենք դրանից հետո արդեն հանրաքվե ենք անցկացրել՝ 1991 թ., Շահումյանը մասնակցել է դրան: Ուրեմն պետք է այդ հարցն էլ առաջ քաշենք բանակցություններում, Գետաշենի հարցն էլ:

**– Մադրիդյան սկզբունքներից մեկն էլ տարածքների հանձնումն է, ի՞նչ կասեք այս մասին:**

– Ես մի սկզբունք ասեմ, որ 1995 թվականից եմ ասում՝ ԼՂՀ-ն պիտի սահման ունենա Հայաստանի, Իրանի և Ադրբեջանի հետ: Դա ի՞նչ է նշանակում: Հյուսիսային մասով պիտի Հայաստանի հետ սահման ունենա, հարավային մասով՝ Ադրբեջանի և Պարսկաստանի: Տարածքներ կարելի է զիջել: Ձիջել՝ չի նշանակում, որ մենք Պարսկաստանի հետ սահման չունենանք, կամ թե չէ՝ Հայաստանի հետ: Քելբաջարն ու Լաչինը ոչ մի դեպքում չի կարելի տալ: Դրանք հատուցումներ են Շահումյանի և Գետաշենի դիմաց: Օրինակ, Ստեփանակերտ-Ադդամ-Մարտունի և Մարտակերտ-Ադդամ-Ստեփանակերտ ճանապարհից 5 կմ այն կողմ կարելի է զիջումներ կատարել:

Խոսում են նաև Հայաստանի հետ միջանցքի մասին: Ի՞նչ միջանցք, եթե Ղարաբաղը սահման ունի Հայաստանի հետ: Ուզում են նորի՞ց միջանցք բացեն, իսկ ո՞վ է հող տալիս:

**– Վերջին շրջանում շատ է խոսվում պատերազմի վերսկսման մասին: Դուք դա հնարավոր համարո՞ւմ եք:**

– Իրականությունն այն է, որ պատերազմն իրենք չեն կարող սկսել: Եթե պատերազմ սկսեն՝ իրենք են կորցնում,

քանի որ մեզնից 20 կմ հեռու Բաքու-Ջեյհան, Բաքու-Սուփսա խողովակաշարերն են: Դրանք պատերազմի ժամանակ կարող ենք ոչնչացնել կամ վնասել: Ասում են՝ 7-8 մլրդ գումար են ծախսել, հիմա էլ ուզում են «Նաբուկո»-ի գազն այստեղով անցկացնել: Հիմա որ պատերազմ լինի՝ ո՞վ է վնաս անելու: Իհարկե՝ իրենք: Կարծում եմ, պատերազմի վերսկսում թույլ չեն տա Եվրամիությունը, Ռուսաստանը և Ամերիկան:

Բացի այդ, եթե Ադրբեջանը զգաց, որ ինքը հաղթելու է՝ պատերազմ կհայտարարի, ոչ մի կասկած չկա: Հայ ժողովուրդը, գիտեք, ծանր ժամանակաշրջանում միշտ էլ համախմբվում է, դա հաստատ է, պատմությունը ցույց է տալիս, որ եթե պատերազմ լինի՝ բոլորը համախմբվելու են, և Ադրբեջանն այն ժամանակ ավելի շատ վնաս է կրելու, քան հիմա:

*Ձրուցեց Անահիտ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ*

*«Անալիտիկոն», Սյրեփանակերպ, № 8, օգոստոս, 2010*

## ԵՍ ԱՆՀԱՆԳՍԱՑԱՑԱԾ ԵՄ

1988թ. ազգային-ազատագրական պայքարի ժամանակ, ինչպես բոլորին է հայտնի, Ադրբեջանում ծայր առան հակահայկական տրամադրություններ, որոնք հետագայում վերաճեցին այդ հանրապետությունում ապրող մեր ազգակիցների հանդեպ բռնարարքների և կոտորածների՝ նախ Սումգայիթում, ապա՝ Գանձակում, Բաքվում և մյուս հայաշատ վայրերում: Ելնելով իրավիճակի բարդությունից, «Կռունկ» կոմիտեն, իսկ 1989 թվականին՝ Արցախի Ազգային խորհուրդը, որոշում ընդունեցին և մշակեցին ծրագիր, որպեսզի Ադրբեջանից բռնատեղահանվող հայերը չցրվեն Ռուսաստան կամ Միջին Ասիա, այլ կազմակերպված տեղավորվեն իրենց պատմական հայրենիք՝ Լեռնային Ղարաբաղ: Ծրագրի իրականացման համար ստեղծվեց կոմիտե, որի ղեկավար ընտրվեցի ես:

Մենք հայթայթեցինք անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ Ամենայն հայոց երջանկահիշատակ կաթողիկոս Վազգեն Առաջինի և Սոս Սարգսյանի միջոցով և կազմակերպեցինք ավելի քան 100000 մարդու վերադարձը Ղարաբաղ, թեև Ադրբեջանի իշխանություններն ամեն կերպ խոչընդոտում էին: Դա պետական մակարդակով կազմակերպված քաղաքականություն էր. Ադրբեջանում դեռ այն տարիներին գիտեին, որ հարցի լուծումը հանգեցնում է ռազմական առճակատման և ամեն ինչ անում էին, որ Արցախի բնակչությունը նվազի, Արցախը գրկվի դիմադրելու հնարավորությունից: Մենք նույնպես հասկանում էինք խնդրի կարևորությունը, ուստի ոչ մի միջոցի առջև կանգ չէինք առնում: Բավական է ասել, որ, գիտակցելով հան-



դերձ մեր քայլերի հետևանքների վտանգը, Ստեփանակերտից բեռնատար մեքենաներ էինք ուղարկում Բաքու, Գանձակ՝ հայ ընտանիքների ունեցվածքը տեղափոխելու: Այս հարցում մեզ անուրանալի օգնություն էին ցույց տալիս Ստեփանակերտի ավտոբազայի տնօրեն Մաքսիմ Միրզոյանը, քաղաքային խորհրդի գործկոմի նախագահ Մաքսիմ Դանիելյանը: Ուզում եմ հատկապես կարևորել հանգուցյալ Սամվել Շահնուրադյանի ներդրումը: Նա ցուցակներ էր կազմել, ճշտել, թե Ադրբեջանից բռնատեղահանված յուրաքանչյուր հայ Արցախի որ գյուղի ծնունդ է և ըստ այդմ էլ մեզ տեղեկություններ էր տրամադրում:

Այդ բոլոր ձեռնարկումների արդյունքում, երբ մենք անցկացրինք բնակչության հաշվառում, պարզվեց, որ առանց ադրբեջանցիների Լեռնային Ղարաբաղում 180000 բնակիչ կա: Ադրբեջանից տեղափոխված և Արցախում հաստատված շատ երիտասարդներ հետագայում մասնակցեցին ազատագրական պատերազմին՝ ցուցաբերելով հերոսության բացառիկ օրինակներ:

Ես կարող եմ ասածս հաստատող հարյուրավոր օրինակներ նշել, բայց կարծում եմ, որ դրա կարիքը չկա, և իմ հետագա ասելիքն էլ բոլորովին ուրիշ անհանգստություն է նշում: Մի քանի օր առաջ ես եղա ԼՂՀ գյուղական մի քանի բնակավայրերում: Առանց չափազանցության ասեմ, որ վիճակը խիստ անբավարար է: Մարդիկ գտնվում են հուսահատության եզրին: Գյուղերում բնական աճը դանդաղել է, նկատվում է մահացածության աճ, երիտասարդությունը թողնում-հեռանում է: Այս վիճակը հանդուրժել չի կարելի, որովհետև Արցախը միայն Ստեփանակերտ մայրաքաղաքը չէ: Ավելին, Արցախի ապագան պայմա-

նավորված է մեր գյուղերի բարգավաճությամբ, իսկ այս ասպարեզում, ինչպես ասացի, մենք հպարտանալու շատ քիչ բան ունենք: Հարկավոր է մի ելք գտնել, բայց, դժբախտաբար, մեր կառավարությունն այս հարցում անտարբեր է: Ես չեմ պատկերացնում, թե ինչպես կարող է կառավարության անդամը կամ փոխնախարարը, վարչության պետը, մի խոսքով՝ պետական պաշտոնյան, որ կոչված է մշակել և իրականացնել սոցիալ-տնտեսական քաղաքականություն, ինքը դառնա գործարար-բիզնեսմեն, խոշոր հող օգտագործող: Եվ այդ ամենը՝ գյուղացիների համարյա թե համատարած աղքատության ֆոնի վրա: Գյուղերում հարյուրավոր, հազարավոր ընտանիքներ կան, որ չեն կարողանում մշակել իրենց սեփականաշնորհված հողը, որովհետև չունեն սերմացու, վառելիք, գյուղտեխնիկա, իսկ առանձին մարդիկ հազարավոր հեկտարներով աշնանացան են անում նույն այդ մարդկանց, նրանց զավակների արյամբ ազատագրված տարածքներում:

Կառավարությունը պարտավոր է մտածել իրավիճակը շտկելու ուղղությամբ, հակառակ դեպքում նա իրեն կդատապարտի ինքնամեկուսացման, որի նախանշանները կան այսօր: Ես գտնում եմ, որ անհրաժեշտ է մշակել ծրագիր և պետական հսկողության տակ այն իրականացնել՝ վարկային և հարկային ճկուն քաղաքականության միջոցով: Համոզված եմ, որ եթե Արցախում մարդկանց կենսամակարդակը մի փոքր բարելավվի, ապա մեր տասնյակ հազարավոր համերկրացիներ կրկին կվերադառնան ու կլծվեն հայրենիքի շենացման գործին: Այդ նպատակին հասնելու համար առաջարկում եմ.

1. բոլոր ընտանիքներին հատկացնել 3-5 հեկտար վարելահող և պետական աջակցությամբ մշակել այն:

2. 3-5 հեկտար հող ունեցող ընտանիքներին ազատել հողի հարկից կամ վարձակալության վճարներից, իսկ 20 հեկտարից ավելի հող մշակողների համար սահմանել ավելի բարձր վարձակալական վճար, միաժամանակ նրանց ստացած եկամտի 10 տոկոսի չափով հարկավորել:

3. հող հատկացնել բոլոր հիմնարկ-ձեռնարկություններին և պարտավորեցնել, որ եկամտի 10 տոկոսը տրամադրվի գոհված ազատամարտիկների ընտանիքներին, իսկ մնացածը՝ բաշխվի հիմնարկության աշխատակիցներին:

4. գյուղական բնակավայրերի երիտասարդ ընտանիքներին տրամադրել 5 հեկտար հող, պետական պահուստային միջոցներից՝ սերմացու, վառելիք, գյուղտեխնիկա, նրանց տալ արտոնյալ երկարաժամկետ վարկեր՝ տուն կառուցելու համար: Այս և այլ միջոցառումների իրականացման դեպքում գյուղական բնակավայրում արագ կատեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր: Մենք ունենք նաև այլ կոնկրետ ծրագրեր, որոնք պատրաստ ենք ներկայացնել կառավարությանը, եթե վերջինս հրաժարվի ներկա աշխատառճից, իսկ եթե կառավարությունը շարունակի նույն քաղաքականությունը, ապա մնում է հուսալ, որ հանրապետության նախագահը մնան կառավարությանը կպաշտոնազրկի, և այդ դեպքում մենք նախագահին կներկայացնենք մեր նկատառումներն ու ծրագրերը:

### ***Ռ-ազմիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ***

*Արցախի Ազգային խորհրդի նախագահության անդամ,  
առաջին գումարման ՀՀ ԳԱ պարզամասվոր,  
Արցախյան պարերազմի վերերան  
«Դեմո», № 15, 31 հոկտեմբերի 2004թ.*

## **ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԿՐԻ ՉԳՐՎԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻՑ**

Եթե քո ղեկավարած տարածքում ժողովուրդը պակասում է, դու շուտափույթ պիտի հրաժարական տաս:

Ղեկավարը հրաժարական պիտի տա նաև այն դեպքում, երբ նրա ասածները կամ բարեփոխումները չեն իրականանում:

Եթե պատերազմական ժամանակաշրջանում չինովնիկները հարստանում են, ապա պիտի ամեն ինչ անել, որպեսզի նրանք անպայման իրենց օրինական պատիժը կրեն, այլապես այդ երկիրը պատերազմում պարտվելու է և ոչ մի փորձության էլ չի դիմանալու:

Եթե հայրենիքում մնացողները քչանում են, իսկ կաշառք վերցնողները և թալանչիները՝ ավելանում, ապա վերջիններս ժողովրդի առաջ պատասխանատու են երկրի ճակատագրի համար և տալու են այդ պատասխանը՝ երբ էլ որ լինի:

Պատերազմում հաղթած ղեկավարը իր ժողովրդից հարուստ չպետք է լինի:

Եթե ղեկավարի ասածները որոշ ժամանակ անց հերքվում կամ չեն կատարվում, ուրեմն նրա ղեկավարած երկիրը փոփոխական է լինում, կայուն չի լինելու, երերալու է:

Այն ղեկավարները, ովքեր փողն են գերադասում, այլ ոչ թե ժողովրդի բարգավաճումը, ազգի դավաճաններ են:

Եթե ռազմական վտանգի պայմաններում ղեկավարների նպատակը փողն է, այլ ոչ թե երկրի պաշտպանության ամրապնդումը, ապա ժողովուրդը պիտի մտածի նրանց պատժելու մասին:

Եթե պատերազմական ժամանակաշրջանում հարստացողները չեն նմանվում հայ ազգի բարերարներ Մանուկյաններին և Մանթաշովներին, ապա նրանց հարստությունը պետք է առգրավվի ի շահ ժողովրդի:

Եթե երկրի ղեկավարները ժողովրդին չեն ապահովում աշխատանքով, և մարդիկ լքում են հայրենիքը, իսկ չինովնիկներն էլ գովում կամ մեծարում են ղեկավարներին, ապա նրանք երկուսն էլ ազգուրաց են:

Եթե պատերազմում հաղթած երկրում զինվորական կոչումները կամ մեդալներն ու շքանշանները փողով և ծանոթությամբ են տրվում, ապա այդ երկրի բանակը քայքայման եզրին է:

Այն երկիրը, որտեղ նախկին ԿԳԲ-եական լրտեսներին ոչ միայն չեն մերկացնում, այլ ընդհակառակը՝ վերականգնում ու խրախուսում են, այդ երկիրը երբևէ դեմոկրատական դառնալ և ապագային նայել չի կարող, այլ հավետ կառչած կմնա անցյալին:

Եթե մեր օրերում գրող-բանաստեղծից գրքի փոխարեն փող են գողանում, ուրեմն այդ գրողը առևտրական գրող է, ուրեմն՝ գրականությունն էլ է շուկա դարձել:

***Ռազմիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ***

*«Դեմո», № 9 (51), 31 մայիսի 2006թ.*

## ՀԱՆՈՒՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԱՊԱԳԱՅԻ...

*Եկել է ժամանակը,  
որպեսզի երկիրը ղեկավարեն հայրենասեր ուժերը,  
թե՛ չէ՝ հեղափոխում ուշ և վատ է լինելու  
թե՛ ժողովրդի, և թե՛ ղեկավարների համար*

Վերջերս դարաբաղյան կարգավորման հարցով թե՛ Հայաստանում և թե՛ Ղարաբաղում կազմակերպվել էին խորհրդարանական լսումներ: Այլ առաջարկությունների հետ հնչել են նաև տեսակետներ, որ Լեռնային Ղարաբաղի համար միջազգային երաշխիքների դեպքում հնարավոր է քննարկել ազատագրված տարածքները վերադարձնելու հարցը: Այդպես են ասում նաև տարբեր քաղաքական գործիչներ թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանյան երկրներում:

Ես գտնում եմ, որ այժմ ժամանակը չէ, որ մենք այդ տեսակետը քննարկենք: Միայն ԼՂՀ անկախության միջազգային ճանաչման դեպքում եմ հնարավոր համարում այդ հարցի, ինչպես նաև ազերիների կողմից գրավված տարածքների խնդրի փոխկապակցված քննարկումը: Չէ՞ որ Ադրբեյջանի կողմից գրավվել են Շահումյանի շրջանը, Գետաշենը, Մարտակերտի հյուսիսային և Մարտունու արևելյան շրջանները: Մենք չենք գրավել Ադրբեյջանի տարածքները, այլ ազատագրել ենք պատմական Արցախի մի մասը, որը 1920-30-ական թթ.-ին մեզնից խլել են անհիմն կերպով: Այդ տարածքներն ազատագրելու ժամանակ մենք տվել ենք բազմաթիվ զոհեր, և դրանք հենց այնպես վերադարձնել՝ կնշանակի դավաճանել զոհերի հիշատակը:

Ես գտնում եմ, որ եթե մենք վերադարձնենք մի շրջան, ապա այդ նույն ժամանակ պետք է որոշվի նաև ԼՂՀ անկախության հարցը, եթե ոչ, ապա ոչ մի թիզ հող չի կարելի վերադարձնել: Հենց այնպես խոսվում է նաև Լեռնային Ղարաբաղում նոր հանրաքվե անցկացնելու հավանականության մասին: Հարց է ծագում՝ իսկ ի՞նչ անենք նախկին

հանրաքվեի արդյունքները: Բացի այդ, մեզնից հիմա խված է Շահումյանի շրջանը, որը նույնպես մասնակցել է 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեին:

Գոյություն ունի մի արքիոմա, ես այդ տեսակետը ասել եմ 1994-ի հրադադարից անմիջապես հետո: Դա այն է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հյուսիսարևմտյան մասով պետք է սահման ունենա Հայաստանի հետ, իսկ հարավ-արևելյան մասով՝ Ադրբեջանի և Իրանի հետ: Այս սկզբունքը պետք է մշտապես ասվի բանակցություններ վարող բոլոր կողմերին, լինեն դրանք Հայաստանի ղեկավարները, Ղարաբաղի ղեկավարները, թե Սինսկի խմբի համանախագահները:

Ներկայումս, իմ կարծիքով, Ղարաբաղի հարցը չեն կարող լուծել ոչ Ադրբեջանը և ոչ էլ Հայաստանը, որովհետև հարցը կլուծվի միայն այն դեպքում, եթե բանակցային կողմ դառնան ԼՂՀ օրինական իշխանությունները: Եթե Կոստվոյի կարգավիճակն ակնհայտ է, ապա Ղարաբաղը պետք է ձգտի անկախության:

Ես գտնում եմ, որ եկել է ժամանակը, որպեսզի ԼՂՀ նախագահը հետևություններ անի, որ ժողովրդին հավատներշնչի ապագայի հանդեպ: Այնպես անեն, որ ԼՂՀ բնակչությունը հասցվի 250-300 հազարի: Դրա համար պետք է ղեկավար պաշտոնների նշանակվեն հայրենասեր և ունակ մարդիկ, որոնք պատրաստ են ծառայել հանուն հայրենիքի և ԼՂՀ ժողովրդի: Իսկ այդպիսի մարդիկ շատ կան թե Արցախում և թե Հայաստանում: Ամեն ինչ որոշում են մարդիկ՝ եթե չլինեին 1988թ. հայրենասեր մարդիկ, ապա Ղարաբաղի հարցը չէր բարձրացվի և չէին ապահովվի հաղթանակները կռվի դաշտում:

Եկել է ժամանակը, որպեսզի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ղեկավարեն հայրենասեր ուժերը, թե չէ հետագայում ուշ և վատ է լինելու թե ժողովրդի, և թե ղեկավարների համար:

**Ռազմիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

«Դեմո», № 9 (95), 31 մայիսի 2008թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին ԱՐՎԱԾԸ՝ ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ, ԱՊՐԱԾԸ՝ ԼԻԱՐԺԵԶ . . . . .	7
Գլուխ երկրորդ ԱՆԵԼԻՔԸ՝ ՊԱՐՋՈՐՈՇ, ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՎՍՏԱՀ . . . . .	25
Գլուխ երրորդ ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ . . . . .	75
Գլուխ չորրորդ ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐ . . . . .	108
Գլուխ հինգերորդ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ ԵՆ ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ . . . . .	132
Գլուխ վեցերորդ ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ . . . . .	140



ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ

## ԽԻՉԱԽՄԱՆ ՈԳԻՆ

ՓԱՍՏԱՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սրբագրիչ՝  
Համակարգչային  
շարվածքը՝

Էջադրումը՝  
Լուսանկարները՝

Ռուզան ԳԱՄՊԱՐՅԱՆ

Լուսինե ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆԻ  
և Մարիամ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ  
Լուսինե ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆԻ  
Ալվինա ԱՌՍԱՍՅԱՆԻ

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ:  
Չափեր՝ 60 x 84<sup>1</sup>/<sub>16</sub>, ծավալը՝ 10.5 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 500:

---

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում:  
Սրբանային, 2010թ.:



Բանաստեղծ, լրագրող  
Արիս ԱՐՍԵՆԻՆ (ԳՐԻԳՈՐՅԱՆ)  
ծնվել է 1959-ի հունիսի 10-ին,  
Արցախի Մարտակերտի շրջանի  
Կոճողոտ գյուղում:

Ավարտել է Ստեփանակերտի պետական  
մանկավարժական ինստիտուտի  
բանասիրական ֆակուլտետը (1986),  
աշխատել Ստեփանակերտի մարզային  
տպարանում (1983), Արցախի  
հեռուստատեսությունում (1988-90, 1996),  
«Արցախ» հանդեսի խմբագրությունում  
(1990-93):

Արցախյան ազգային-ազատագրական  
շարժման ընդհատակյա պայքարի  
մասնակիցներից է, ԼՂՀ  
Պաշտպանության բանակի շարքերում  
մարտնչել է Ջաբրայիլի, Աղդամի,  
Ֆիզուլու և Մարտակերտի շրջաններում  
տեղակայված բշնամական  
կրակակետերի վնասագերծման համար  
մղված մարտերում, մասնակցել  
պաշտպանական մի շարք  
նազնագործողությունների, վիրավորվել է  
1994-ի հունվարի 15-ին, Ֆիզուլու շրջանի  
Վերին Սեխդահմեղի գյուղի համար  
մղված մարտում:

Հրադադարի հաստատումից հետո  
ծառայությունը շարունակել է  
բանակային «Մարտիկ» թերթի  
խմբագրությունում:

2009-ի օգոստոսի 1-ին, կապիտանի  
գինվորական կոչումով,  
ուղարկվել է պահեստագործ:

Հայաստանի Գրողների միության անդամ  
է, հրատարակված 15 գրքերի (չափածո և  
արձակ) հեղինակ, ԼՂՀ կառավարության  
Եղիշեի անվան (2004) և Արցախի  
ժուռնալիստների միության (2005)  
ամենամյա մրցանակների դափնեկիր:

Պարգևատրվել է «Անբասիր  
ծառայության համար» առաջին  
աստիճանի (2006) և «Մայրական  
երախտագիտություն՝ Արցախի  
բաջորդիներին» (2008) մեդալներով: